ISSN 2738-2761

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2023

Հոդվածների ժողովածու

1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

1

ՎԱՆԱՁՈՐ
2023

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

МАГИСТР

1

ВАНАДЗОР
2023

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN

MASTER STUDENT

1

VANADZOR
2023

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Զ. Ս. Վարդանյան, կ. գ. դ., պրոֆեսոր (խմբագրական խորհրդի նախագահ),
Հ. Հ. Օհանյան, տեխ. գ. թ., դոցենտ (պատասխանատու քարտուղար),
Հ. Ա. Ղազարյան, ք. գ. դ., պրոֆեսոր, **Է. Ա. Խաչատրյան**, ք. գ. թ., դոցենտ,
Մ. Պ. Կիրակոսյան, կ. գ. թ., դոցենտ, **Վ. Ռ. Քոչարյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ,
Ս. Մ. Փարսադանյան, ֆ.-մ. գ. թ., դոցենտ, **Ռ. Ս. Սահակյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ,
Մ. Ա. Սաքանյան, ֆ.-մ. գ. թ., դոցենտ, **Ա. Ս. Կյուրեղյան**, ֆ.-մ. գ. թ., դոցենտ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հ. Մ. Պապոյան, տնտ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահ),
Ա. Գ. Հարությունյան, մ. գ. թ., դոցենտ, (պատասխանատու քարտուղար),
Հ. Ռ. Ավագիմյան, հ. գ. թ., դոցենտ, **Տ. Ս. Բաղդոյա**ն, տնտ. գ. թ., դոցենտ,
Ն. Ս. Բարսեղյան, տնտ. գ. թ., դոցենտ, **Ա. Ա. Կոխլիկյան**, պ. գ. թ., **Վ. Ռ. Նազարյան**,
մ. գ. թ., դոցենտ, **Ա. Ա. Բարսեղյան**, մ. գ. թ., դոցենտ, **Հ. Կ. Հակոբյան**, դոցենտ,
Հ. Ա. Չատինյան, դոցենտ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ն. Ա. Ջաղինյան, բ. գ. թ., դոցենտ (խմբագրական խորհրդի նախագահ),
Լ. Հ. Պետրոսյան, բ. գ. թ, դոցենտ (պատասխանատու քարտուղար),
Ֆ. Վ. Մովսիսյան, պ. գ. դ., պրոֆեսոր, **Ս. Մ. Թումանյան**, բ. գ. թ., դոցենտ,
Ա. Ն. Սարուխանյան, բ. գ. թ. դոցենտ, **Շ. Ռ. Ղուկասյան**, բ. գ. թ., դոցենտ,
Թ. Վ. Թադևոսյան, բ. գ. թ., դոցենտ, **Կ. Ս. Առուստամյան**, բ. գ. թ., դոցենտ,
Լ. Ցու. Վարդանյան, բ. գ. թ., դոցենտ:

ՄԱԳԻՍՏՐՈՍ-1 // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/: Խմբագրակազմ – Վանաձոր, 2023. – 272 էջ:

Ժողովածուն ամփոփում է ՎՊՀ 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի ուսանողների ավարտական որակավորման աշխատանքների թեմաներով գրված գիտական այն հոդվածները, որոնք երբևէ չեն հրատարակվել: Հոդվածները խմբագրակազմի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISSN 2738-2761

© Հեղինակային խումբ, 2023
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2023

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

ЕСТЕССТВЕННЫЕ НАУКИ

З. С. Варданян доктор биол. наук, профессор, (председатель редакционного совета),
Э. Г. Оганян кандидат техн. наук, доцент (ответственный секретарь),
Г. А. Казарян докт. хим. наук, профессор, **Э. А. Хачатрян** канд. хим. наук, доцент, **М. П. Киракосян** канд. биол. наук, доцент, **В. Р. Кочарян** канд. физико-математич. наук, доцент, **С. М. Парсаданян** канд. физико-математич. наук, доцент, **Р. С. Саакян** канд. физико-математич. наук, доцент, **М. А. Саканян** канд. физико-математич. наук, доцент, **А. С. Кюрегян** канд. физико-математич. наук, доцент.

ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ

Г. М. Папоян канд. экономич. наук, (председатель редакционного совета),
А. Г. Арутюнян канд. педагогич. наук, доцент (ответственный секретарь),
А. Р. Авагимян канд психол. наук, доцент, **Т. С. Бадоян** канд. экономич. наук, доцент, **Н. С. Барсегян** канд. экономич. наук, доцент, **А. А. Кохликян** канд. историч. наук, **В. Р. Назарян** канд. педагогич. наук, доцент, **А. А. Барсегян** канд. педагогич. наук, доцент, **А. К. Акобян**, доцент, **Г. А. Чатинян**, доцент.

ГУМАНИТАРНЫЕ НАУКИ

Н. А. Джагинян канд филол. наук, доцент (председатель редакционного совета),
Л. Г. Петросян канд филол. наук, доцент (ответственный секретарь),
Ф. В. Мовсисян докт. историч. наук, профессор, **С. М. Туманян** канд филол. наук, доцент, **А. Н. Саруханян** канд филол. наук, доцент, **Ш. Р. Гукасян** канд филол. наук, доцент, **Т. В. Тадевосян** канд филол. наук, доцент, **К. С. Арустамян** канд филол. наук, доцент, **Л. Ю. Варданян** канд филол. наук, доцент.

МАГИСТР-1 // Министерство образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный университет/. Редколлегия – Ванадзор, 2023. – 272 с.

В сборник включены неизданные статьи студентов магистратуры ВГУ 2022-2023 уч. года по темам их окончательных работ по специальности. Статьи рецензированы, отредактированы и рекомендованы для печати по решению редколлегии.

ISSN 2738-2761

© Авторская группа, 2023
© Ванадзорский государственный университет имени О. Туманяна, 2023

SCIENTIFIC EDITORIAL COUNCIL

FACULTY OF NATURAL SCIENCES

Z. S. Vardanyan, Doctor of Biological Sciences, Professor, (Head of the Scientific Editorial Council), **H. H. Ohanyan**, Candidate of Technical Sciences, Associate Professor (Executive Secretary), **H. A. Ghazaryan**, Doctor of Chemical Sciences, Professor, **E. A. Khachatryan**, Candidate of Chemical Sciences, Associate Professor, **M. P. Kirakosyan**, Candidate of Biological Sciences, Associate Professor, **V. R. Qocharyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **A. M. Parsadanyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **R. S. Sahakyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **M. A. Sakanyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor, **A. S. Kyureghyan**, Candidate of Physico-Mathematical Sciences, Associate Professor.

FACULTY OF SOCIAL SCIENCES

H. M. Papoyan, Candidate of Economic Sciences, (Head of the Scientific Editorial Council), **A. G. Harutyunyan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, (Executive Secretary), **H. R. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, Associate Professor, **T. S. Badoyan**, Candidate of Economic Sciences, Associate Professor, **N. S. Barseghyan**, Candidate of Economic Sciences, Associate Professor, **A. A. Kokhlikyan**, Candidate of Historical Sciences, **V. R. Nazarya**n, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **A. A. Barseghyan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **H. K. Hakobyan**, Associate Professor, **H. A. Chatinyan**, Associate Professor.

FACULTY OF HUMANITIES

N. A. Jaghinyan, Candidate of Philological Sciences, Associate Professor, (Head of the Scientific Editorial Council),
L. H. Petrosyan, Candidate of Philological Sciences, Associate Professor, (Executive Secretary), **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, Professor, **S. M. Tumanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **A. N. Sarukhanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **Sh. R. Ghukasyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **T. V. Tadevosyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **K. S. Arustamyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **L. Yu. Vardanyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor.

MASTER STUDENT-1 // RA Ministry of Education, Science, Culture and Sport, Vanadzor State University/. Editorial Board – Vanadzor, 2023. – 272 p.

The collection summarizes the scientific articles of VSU master's students of the 2022-2023 academic year on the topics of their thesis, which have not been published before. The articles were reviewed, edited and recommended for publication by the decision of the editorial board.

ISSN 2738-2761

© Authors' group, 2023
© Vanadzor State University after H. Tumanyan, 2023

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

МАТЕМАТИКА

MATHEMATICS

Բեսսելի հավասարումը և նրան բերվող հավասարումներ: Բեսսելյան ֆունկցիաներ և նրանց կիրառությունները

Ասլանյան Նարինե
Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Մաթեմատիկա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ֆ.-մ. գ. թ., դոցենտ Ռ. Սահակյան

Հանգուցային բառեր և բառակապակցություններ. *Բեսսելյան հավասարում, բեսսելյան ֆունկցիաներ, ընդհանրացված աստիճանային շարք, էյլերյան երկրորդ սեռի ինտեգրալ, Նեյմանի հավասարում*

Գոյություն ունեն բազմաթիվ դիֆերենցիալ հավասարումներ, որոնց լուծումները չեն կարող արտահայտվել կվադրատուրաներով (օրինակ, Ռիկատիի $y' \pm y^2 = f(x)$ հավասարումը): Կիրառական բնույթի զանազան խնդիրներում շատ են հանդիպում հավասարումներ, որոնց լուծումները չեն կարող արտահայտվել վերջավոր թվով տարրական ֆունկցիաներով: Նրանց լուծումները գոյություն ունեն, բայց արտահայտվում են որևէ զուգամետ աստիճանային շարքի տեսքով: Այդպիսին է, օրինակ, փոփոխական գործակիցներով երկրորդ կարգի հետևյալ գծային հավասարումը.

$$x^2\frac{d^2y}{dx^2} + x\frac{dy}{dx} + (x^2 - \nu^2)y = 0, \qquad (1)$$

որին բերվում են ֆիզիկական տարբեր երևույթներ նկարագրող հավասարումներ:

(1)-ը կոչվում է Բեսսելի հավասարում: Քանի որ այն գծային է, ապա նրա ընդհանուր լուծումը կգրվի $y(x) = C_1y_1(x) + C_2y_2(x)$ տեսքով, որտեղ y_1, y_2-ը գծորեն անկախ մասնավոր լուծումներ են, իսկ C_1, C_2-ը՝ կամայական հաստատուններ:

Եթե $p_0(x), p_1(x)$ և $p_2(x)$-ը x-ի ամբողջ բազմանդամներ են և $p_0(x) \neq 0$, ապա

$$p_0(x)y'' + p_1(x)y' + p_2(x)y = 0 \qquad (2)$$

հավասարման լուծումներն արտահայտվում են x-ի ամբողջ՝ ոչ բացասական աստիճաններով զուգամետ աստիճանային շարքերով՝

$$y = \sum_{k=0}^{\infty} a_k x^k,$$

որի a_k գործակիցները կարելի է որոշել՝ տեղադրելով շարքը (2)-ի մեջ և ստացված հավասարության մեջ x-ի տարբեր աստիճանների գործակիցները հավասարեցնելով զրոյի:

Եթե $p_0(0) = 0$, ապա (2)-ի լուծումը նշված շարքի տեսքով չենք կարող որոշել, քանի որ

$$y'' + \frac{p_1(x)}{p_0(x)} y' + \frac{p_2(x)}{p_0(x)} y = 0 \qquad (2')$$

հավասարման գործակիցները $x = 0$ կետում անընդհատ չեն: Այդպիսի դեպքերում (2)-ի լուծումը փնտրում են այսպես կոչված ընդհանրացված աստիճանային շարքի տեսքով.

$$y = x^{\rho} \sum_{k=0}^{\infty} a_k x^k = \sum_{k=0}^{\infty} a_k x^{\rho+k},$$

որտեղ ρ-ն կարող է լինել բացասական և ոչ պարտադիր ամբողջ թիվ:

Բեսսելի հավասարման մեջ $p_0(x) = x^2$, որը $x = 0$ կետում դառնում է զրո, ուստի (1)-ի լուծումը փնտրենք ընդհանրացված աստիճանային շարքի տեսքով.

$$y(x) = \sum_{k=0}^{\infty} a_k x^{\nu+k}: \qquad (3)$$

Գտնելով xy', x^2y'' և $(x^2 - \nu^2)y$ արտահայտությունները և տեղադրելով (1)-ի մեջ, ապա x-ի տարբեր աստիճանների գործակիցները հավասարեցնելով զրոյի՝ կունենանք. կենտ համարների դեպքում $a_1 = a_3 = a_5 = \cdots = a_{2k-1} = \cdots = 0$, իսկ զույգ համարների դեպքում նրանք միարժեքորեն կարտահայտվեն a_0-ի միջոցով (a_0-ն կարելի է վերցնել կամայական), բացի $\nu = -n\ (n > 0)$ դեպքից, երբ a_{2k} գործակիցները որոշելու հանրահաշվական հավասարումների համակարգը չի լուծվում

$$a_{2k} = (-1)^k \frac{a_0}{k!\, 2^{2k} (\nu+1)(\nu+2)\cdots(\nu+k)}:$$

Տեղադրելով գործակիցների արժեքները (3)-ի մեջ՝ կստանանք հետևյալ շարքը

$$y_\nu(x) = a_0 x^\nu \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,(\nu+1)(\nu+2)\cdots(\nu+k)} \left(\frac{x}{2}\right)^{2k}, \qquad (4)$$

որը կամայական $\nu \neq -n\ (n > 0)$ արժեքների համար բավարարում է Բեսսելի հավասարմանը, ընդ որում (4)-ը զուգամիտում է ողջ թվային առանցքի վրա և այն էլ հավասարաչափ:

a_0 գործակիցն ընտրենք հետևյալ կերպ.

$$a_0 = \frac{1}{2^\nu \Gamma(\nu+1)},$$

որտեղ

$$\Gamma(p) = \int_0^\infty e^{-x} x^{p-1} dx = \lim_{n\to\infty} \frac{n!\, n^p}{p(p+1)\cdots(p+n)}$$

գամմա ֆունկցիան էյլերյան երկրորդ սեռի ինտեգրալն է, ընդ որում $\Gamma(p+1) = p\Gamma(p)$ և $\Gamma(n+1) = n!$:

(4) շարքը կգրվի հետևյալ տեսքով.

$$\sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(\nu+k+1)} \left(\frac{x}{2}\right)^{2k+\nu}:$$

Նշված շարքով որոշվող հետևյալ ֆունկցիան

$$J_\nu(x) = \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(\nu+k+1)} \left(\frac{x}{2}\right)^{2k+\nu} \tag{5}$$

կոչվում է առաջին սեռի ν ինդեքսի Բեսսելի ֆունկցիա, որը Բեսսելի (1) հավասարման լուծումն է բոլոր ν-երի համար՝ բացի ν-ի ամբողջ բացասական արժեքներից:

Երբ $\nu = n$, $\Gamma(n+k+1) = (n+k)!$, ուստի

$$J_n(x) = \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,(n+k)!} \left(\frac{x}{2}\right)^{2k+n}: \tag{6}$$

Եթե ընդունենք $\frac{1}{\Gamma(0)} = \frac{1}{\Gamma(-1)} = \cdots = \frac{1}{\Gamma(-n)} = 0$, ապա $\nu = -n$ դեպքում կունենանք.

$$J_{-n}(x) = \sum_{k=n}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(-n+k+1)} \left(\frac{x}{2}\right)^{2k-n}, \tag{7}$$

ընդ որում, քանի որ, ըստ մեր ենթադրության, $\frac{1}{\Gamma(-k)} = 0$, ապա

$$a_0 = a_2 = a_4 = \cdots = a_{2k} = \cdots = 0,$$

նշանակում է՝ այս դեպքում ևս (5)-ը կհանդիսանա (1)-ի լուծումը:

(5)-ի մեջ ընդունելով $\nu = \frac{1}{2}$, կստանանք.

$$J_{1/2}(x) = \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma\left(k+\frac{3}{2}\right)} \left(\frac{x}{2}\right)^{2k+\frac{1}{2}} = \sqrt{\frac{2}{\pi x}} \sin x \quad (-\infty < x < \infty),$$

իսկ $\nu = -\frac{1}{2}$ դեպքում՝ $J_{-1/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}} \cos x$:

Այսինքն՝ $\frac{1}{2}$ ինդեքսով բեսսելյան ֆունկցիաները արտահայտվում են տարրական ֆունկցիաներով:

$y_1 = J_\nu(x)$ և $y_2 = J_{-\nu}(x)$ լուծումները գծորեն անկախ են, երբ ν-ն ամբողջ թիվ չէ, իսկ $\nu = n$ դեպքում (6) և (7)-ի բաղդատումից կունենանք $J_{-n}(x) = (-1)^n J_n(x)$, ուստի ամբողջ n-երի դեպքում ունենք միայն մեկ մասնավոր լուծում: Որպես երկրորդ գծորեն անկախ մասնավոր լուծում վերցնենք

$$Y_\nu(x) = \frac{J_\nu(x)\cos\nu\pi - J_{-\nu}(x)}{\sin\nu\pi}, \tag{8}$$

որը կստացվի Բեսսելի հավասարման ընդհանուր լուծումից՝ $C_1 = ctg\nu\pi$ և $C_2 = -cosec\nu\pi$ դեպքում: $Y_\nu(x)$ լուծումը կոչվում է Բեսսելի երկրորդ կարգի (կամ Նեյմանի) հավասարում:

Այսպիսով, (1)-ի ընդհանուր լուծումը ν ինդեքսի ցանկացած արժեքների համար կունենա հետևյալ տեսքը.

$$y(x) = C_1 J_\nu(x) + C_2 Y_\nu(x):$$

Օրինակ 1: Գրել հետևյալ 2-րդ կարգի գծային հավասարումների ընդհանուր լուծումները՝ նախապես նրանց բերելով Բեսսելի հավասարման.

ա) $x^2y'' + xy' + (k^2x^2 - \nu^2)y = 0$

բ) $t^2\frac{d^2y}{dt^2} + t\frac{dy}{dt} + (\beta^2p^2t^{2p} - \nu^2p^2)y = 0$

Լուծում: ա) $t = kx$ տեղադրությունով կունենանք.

$$\frac{dy}{dx} = \frac{dy}{dt}\cdot\frac{dt}{dx} = k\frac{dy}{dt}, \quad \frac{d^2y}{dx^2} = k^2\frac{d^2y}{dt^2}, \quad t^2\frac{d^2y}{dt^2} + t\frac{dy}{dt} + (t^2 - \nu^2)y = 0,$$

ուստի հավասարման ընդհանուր լուծումը կլինի.

$$y = C_1J_\nu(t) + C_2Y_\nu(t) = C_1J_\nu(kx) + C_2Y_\nu(kx):$$

բ) Ընդունենք $y = t^\alpha u$, կունենանք.

$$\frac{dy}{dt} = \alpha t^{\alpha-1}u + t^\alpha\frac{du}{dt}, \quad \frac{d^2y}{dt^2} = \alpha(\alpha-1)t^{\alpha-2}u + 2\alpha t^{\alpha-1}\frac{du}{dt} + t^\alpha\frac{d^2u}{dt^2},$$

իսկ հավասարումը կընդունի հետևյալ տեսքը.

$$t^2\frac{d^2u}{dt^2} + (2\alpha+1)t\frac{du}{dt} + (\alpha^2 + \beta^2p^2t^{2p} - \nu^2p^2)u = 0, \tag{9}$$

որի ընդհանուր լուծումն է

$$u = C_1t^{-\alpha}J_\nu(\beta t^p) + C_2t^{-\alpha}Y_\nu(\beta t^p):$$

(9)-ի մեջ ընդունելով $2\alpha + 1 = a, \alpha^2 - \nu^2p^2 = b, \beta^2p^2 = c$ և $2p = m$, կստանանք Բեսսելի հավասարմանը բերվող հետևյալ հավասարումը.

$$t^2u'' + atu' + (b + ct^m)u = 0:$$

Դիտարկվող հավասարման մասնավոր դեպք է հանդիսանում հետևյալ հավասարումը.

$$y'' + \frac{2p+1}{x} y' + y = 0, \tag{10}$$

որը կբերվի Բեսսելի հավասարման նախ՝ $y = x^{-p} z$ տեղադրությունով.

$$x^{-p} z'' + x^{-p-1} z' + (x^{-p} - p^2 x^{-p-2}) z = 0,$$

ապա բազմապատկելով x^{p+2}–ով: Կունենանք

$$x^2 z'' + x z' + (x^2 - p^2) z = 0,$$

ուստի (10)-ի ընդհանուր լուծումը կլինի.

$$y = x^{-p}\left[C_1 J_p(x) + C_2 Y_p(x)\right]:$$

Քանի որ բեսսելյան ֆունկցիաները որոշող շարքերը զուգամիտում են հավասարաչափ, ապա նրանց անդամ առ անդամ ածանցելու միջոցով կարող ենք ստանալ տարբեր ինդեքսներով բեսսելյան ֆունկցիաների միջև եղած առնչություններ արտահայտող մի շարք բանաձևեր.

$$J_\nu'(x) = -\frac{\nu}{x} J_\nu(x) + J_{\nu-1}(x), \tag{11}$$

$$J_\nu'(x) = \frac{\nu}{x} J_\nu(x) - J_{\nu+1}(x): \tag{12}$$

Արտաքսելով $J_\nu'(x)$–ը (11) և (12)-ից, կունենանք.

$$\frac{2\nu}{x} J_\nu(x) = J_{\nu+1}(x) + J_{\nu-1}(x): \tag{13}$$

(13) բանաձևը միմյանց է կապում 3 հաջորդական բեսսելյան ֆունկցիաները և թույլատրում է ամբողջ ինդեքսներով բոլոր բեսսելյան ֆունկցիաներն արտահայտել $J_0(x)$ և $J_1(x)$-ի միջոցով:

Իրոք, երբ $\nu = n - 1$, կունենանք

$$J_n(x) = \frac{2(n-1)}{x} J_{n-1}(x) - J_{n-2}(x),$$

որտեղից, $n = 2$ դեպքում կստանանք.

$$J_2(x) = \frac{2}{x} J_1(x) - J_0(x),$$

$n = 3$ դեպքում՝

$$J_3(x) = \frac{4}{x} J_2(x) - J_1(x) = \left(\frac{8}{x^2} - 1\right) J_1(x) - \frac{4}{x} J_0(x),$$

և այլն:

(11)-ից և (12)-ից արտաքսելով $J_\nu(x)$ ֆունկցիան՝ կգտնենք հաճախ կիրառվող մի բանաձև ևս.

$$2J_\nu'(x) = J_{\nu-1}(x) - J_{\nu+1}(x):$$

Նույն ռեկուրենտ բանաձևերը տեղի ունեն նաև բեսսելյան երկրորդ սեռի $Y_\nu(x)$ ֆունկցիաների համար:

Օրինակ 2: Հաշվել կենտ թվերի կես ինդեքսով բեսսելյան ֆունկցիաների արժեքները:

Լուծում: Ունենք $J_{1/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\sin x$, $J_{-1/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\cos x$:

(13) բանաձևի մեջ ընդունելով $\nu = \pm\frac{1}{2}$՝ կգտնենք.

$$\frac{1}{x}J_{1/2}(x) = J_{3/2}(x) + J_{-1/2}(x), -\frac{1}{x}J_{-1/2}(x) = J_{1/2}(x) + J_{-3/2}(x),$$

որտեղից՝

$$J_{3/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\left(\frac{\sin x}{x} - \cos x\right), \quad J_{-3/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\left(-\sin x - \frac{\cos x}{x}\right):$$

Նույն կերպ կունենանք.

$$J_{5/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\left[\left(\frac{3}{x^2} - 1\right)\sin x - \frac{3}{x}\cos x\right],$$

$$J_{-5/2}(x) = \sqrt{\frac{2}{\pi x}}\left[\frac{3}{x}\sin x - \left(\frac{3}{x^2} - 1\right)\cos x\right];$$

Ինդուկտիվ եղանակով կստանանք.

$$J_{n+\frac{1}{2}}(x) = (-1)^n\sqrt{\frac{2}{\pi}}x^{n+\frac{1}{2}}\frac{d^n}{(xdx)^n}\left\{\frac{\sin x}{x}\right\}, \quad J_{-n-\frac{1}{2}}(x) = \sqrt{\frac{2}{\pi}}x^{n+\frac{1}{2}}\frac{d^n}{(xdx)^n}\left\{\frac{\cos x}{x}\right\},$$

իսկ եթե (8) բանաձևում ընդունենք $\nu = \pm\left(n + \frac{1}{2}\right)$, ապա կստանանք.

$$Y_{n+\frac{1}{2}}(x) = (-1)^{n+1}J_{-n-\frac{1}{2}}(x), \quad Y_{-n-\frac{1}{2}}(x) = (-1)^n J_{n+\frac{1}{2}}(x):$$

$J_n(x)$ ֆունկցիաները կարելի է ներկայացնել որոշյալ ինտեգրալների տեսքով.

$$J_n(x) = \frac{1}{\pi}\int_0^{\pi}\cos(n\varphi - x\sin\varphi)\,d\varphi, \tag{14}$$

ընդ որում՝ այդ ինտեգրալային ներկայացումներն ու շարքերը կիրառվում են ռադիոտեխնիկայում՝ ազդանշանների հաճախականություններն ուսումնասիրելիս:

(5) բանաձևից՝ $\frac{1}{x}\cdot\frac{d}{dx}[x^{\upsilon}J_{\upsilon}(x)] = x^{\upsilon-1}J_{\upsilon-1}(x)$, հետևաբար

$$\int x^{\upsilon} J_{\upsilon-1}(x)dx = x^{\upsilon} J_{\upsilon}(x) + C: \qquad (15)$$

Օրինակներ: Հաշվել հետևյալ ինտեգրալները.

ա) $\int_0^x x^8 J_6(x)dx$, բ) $\int_0^\infty e^{-x\sqrt{2}} J_0\left(x\sqrt{7}\right)dx$, գ) $\int_0^\infty e^{-ax^2} J_{\upsilon}(bx)x^{\upsilon+1}dx$:

Լուծում: ա) Հաջորդաբար կիրառենք մասերով ինտեգրման բանաձևը (8 անգամ)՝ օգտագործելով հետևյալ ռեկուրենտ առնչությունները.

$$\int J_{\upsilon-1}(x)x^{\upsilon}dx = x^{\upsilon} J_{\upsilon}(x) + C,$$

$$\int_0^x J_{\upsilon}(t)dt = 2[J_{\upsilon+1}(x) + J_{\upsilon+3}(x) + J_{\upsilon+5}(x) + \cdots] = 2\sum_{k=1}^{\infty} J_{\upsilon+2k-1}(x):$$

Կունենանք.

$$\int_0^x x^8 J_6(x)dx = x^8 J_7(x) - \int_0^x x^7 J_7(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - \int_0^x x^6 J_8(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - -x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3\int_0^x x^5 J_9(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15\int_0^x x^4 J_{10}(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15x^4 J_{11}(x) - 105\int_0^x x^3 J_{11}(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15x^4 J_{11}(x) -$$

$$-105x^3 J_{12}(x) - 945\int_0^x x^2 J_{12}(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15x^4 J_{11}(x) -$$

$$-105x^3 J_{12}(x) - 945x^2 J_{13}(x) - 10395\int_0^x x J_{13}(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15x^4 J_{11}(x) - 105x^3 J_{12}(x) -$$

$$-945x^2 J_{13}(x) - 10395x J_{14}(x) - 135135\int_0^x J_{14}(x)dx =$$

$$= x^8 J_7(x) - x^7 J_8(x) - x^6 J_9(x) - 3x^5 J_{10}(x) - 15x^4 J_{11}(x) -$$

$$-105x^3 J_{12}(x) - 945x^2 J_{13}(x) - 10395x J_{14}(x) - 270270\sum_{k=1}^{\infty} J_{2k+13}(x):$$

բ) Օգտվենք Բեսսելի ֆունկցիայի ինտեգրալային ներկայացումով տրվող (14) բանաձևից:

$n = 0$ դեպքում ունենք.

$$J_0(x) = \frac{1}{\pi}\int_0^{\pi} \cos(x\sin\varphi)\, d\varphi,$$

հետևաբար,

$$\int_0^{\infty} e^{-x\sqrt{2}} J_0\left(x\sqrt{7}\right)dx = \int_0^{\infty} e^{-x\sqrt{2}}dx \cdot \frac{1}{\pi}\int_0^{\pi} \cos(x\sqrt{7}\sin\varphi)\, d\varphi =$$

$$= \int_0^{\infty} e^{-x\sqrt{2}}dx \cdot \frac{2}{\pi}\int_0^{\pi/2} \cos(x\sqrt{7}\sin\varphi)\, d\varphi:$$

Քանի որ կրկնակի ինտեգրալը բացարձակ զուգամետ է, կարող ենք փոխել ինտեգրման կարգը: Կունենանք.

$$\int_0^{\infty} e^{-x\sqrt{2}} J_0\left(x\sqrt{7}\right)dx = \frac{2}{\pi}\int_0^{\pi/2} d\varphi \int_0^{\infty} e^{-x\sqrt{2}} \cos\left(x\sqrt{7}\sin\varphi\right) dx:$$

$$\int_0^{\infty} e^{-x\sqrt{2}} \cos\left(x\sqrt{7}\sin\varphi\right) dx =$$

$$= \frac{\sqrt{7}\sin\varphi\sin(x\sqrt{7}\sin\varphi) - \sqrt{2}\cos\left(x\sqrt{7}\sin\varphi\right)}{2 + 7\sin^2\varphi} e^{-x\sqrt{2}}\Big|_0^{\infty} =$$

$$= \frac{\sqrt{2}}{2 + 7\sin^2\varphi},$$

հետևաբար,

$$\int_0^{\infty} e^{-x\sqrt{2}} J_0\left(x\sqrt{7}\right)dx = \frac{2\sqrt{2}}{\pi}\int_0^{\pi/2} \frac{d\varphi}{2 + 7\sin^2\varphi} =$$

$$= \frac{2\sqrt{2}}{\pi}\int_0^{\infty} \frac{du}{(1+u^2)(2 + 7\frac{u^2}{1+u^2})} = \frac{2\sqrt{2}}{\pi}\int_0^{\infty} \frac{du}{2 + 9u^2} =$$

$$= \frac{2\sqrt{2}}{\pi}\cdot\frac{1}{3}\int_0^{\infty} \frac{d(3u)}{(\sqrt{2})^2 + (3u)^2} = \frac{2\sqrt{2}}{\pi}\cdot\frac{1}{3}\cdot\frac{1}{\sqrt{2}}\operatorname{arctg}\frac{3u}{\sqrt{2}}\Big|_0^{\infty} = \frac{2}{3\pi}\cdot\frac{\pi}{2} = \frac{1}{3}:$$

գ) Այս ինտեգրալը հաշվելու համար Բեսսելի ֆունկցիան փոխարինենք աստիճանային շարքով, ապա կատարենք անդամ առ անդամ ինտեգրում, որի իրավունքը, ինչպես նաև ինտեգրման կարգը տեղափոխելու հնարավորությունն ունենք՝ շարքի բացարձակ զուգամիտության շնորհիվ: Այդ դեպքում կունենանք.

$$\int_0^{\infty} e^{-ax^2} J_\upsilon(bx) x^{\upsilon+1} dx = \int_0^{\infty} e^{-a^2x^2} x^{\upsilon+1} dx \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k (\frac{bx}{2})^{\upsilon+2k}}{k!\,\Gamma(k+\upsilon+1)} =$$

$$= \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(k+\upsilon+1)} \left(\frac{b}{2}\right)^{\upsilon+2k} \int_0^{\infty} e^{-a^2x^2} x^{2\upsilon+2k+1} dx =$$

$$= \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(k+\upsilon+1)} \left(\frac{b}{2}\right)^{\upsilon+2k} \frac{1}{2a^{2\upsilon+2k+2}} \int_0^{\infty} e^{-t} t^{\upsilon+k} dt =$$

$$= \left(\frac{b}{2}\right)^{\upsilon} \cdot \frac{1}{2a^{2\upsilon}} \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k}{k!\,\Gamma(k+\upsilon+1)} \cdot \left(\frac{b}{2}\right)^{2k} \cdot \frac{1}{a^{2(k+1)}} \cdot \Gamma(k+\upsilon+1) =$$

$$= \frac{b^{\upsilon}}{2^{\upsilon+1}a^{2\upsilon+2}} \sum_{k=0}^{\infty} \frac{(-1)^k \left(\frac{b}{2}\right)^{2k}}{k!\,a^{2k}} = \frac{b^{\upsilon}}{(2a^2)^{\upsilon+1}} \sum_{k=0}^{\infty} \frac{\left(-\frac{b^2}{4a^2}\right)^k}{k!} = \frac{b^{\upsilon}}{(2a^2)^{\upsilon+1}} \cdot e^{-\frac{b^2}{4a^2}}:$$

Բեսսելի ֆունկցիաների և նրանց մի շարք հատկությունների կիրառությունը ցուցադրենք եզրային խնդրի լուծումով: Լուծենք R շառավղով անվերջ շրջանային ձողի սառչելու խնդիրը, որի մակերևույթի վրա մշտապես պահպանվում է զրոյական ջերմաստիճան: Ձողի ներքին կետերի նախնական ջերմաստիճանը տրված է՝ $\varphi(r)$:

Խնդրի մաթեմատիկական դրումն է.

Գտնել $\Delta u = \frac{1}{a^2} u_t$ հավասարման $u(r,t)$ լուծումը $t > 0$ և $0 \le r < R$ դեպքում, որը բավարարում է հետևյալ նախնական և եզրային պայմաններին.

$$u(r,0) = \varphi(r), \;\; u(R,t) = 0, \;\; |u(0,t)| < \infty:$$

Լուծում: Անջատելով փոփոխականները՝

$$u(r,t) = \Phi(r)\Psi(t),$$

կգտնենք. $\Phi'' + \frac{1}{r}\Phi' + \lambda\Phi = 0, \;\; \Phi(R) = 0, \;\; |\Phi(0)| < \infty, \;\; \Psi(t) = Ce^{-\lambda a^2 t},$
որտեղ $\lambda > 0$:

Հավասարման ընդհանուր լուծումը $\Phi(r)$-ի համար կարելի է գրել հետևյալ տեսքով՝

$$\Phi(r) = AJ_0\left(\sqrt{\lambda}r\right) + BN_0\left(\sqrt{\lambda}r\right),$$

որտեղ $N_0\left(\sqrt{\lambda}r\right)$-ը $\Phi(r)$-ի՝ $J_0\left(\sqrt{\lambda}r\right)$-ի հետ գծորեն անկախ լուծումն է, որն անսահմանափակ է $r = 0$-ի շրջակայքում: Հետևաբար, որոնելի լուծման սահմանափակության պայմանից կգտնենք, որ $B = 0$: Նշանակում է $\Phi(r) = AJ_0\left(\sqrt{\lambda}r\right)$: Ակնհայտորեն, կարելի է ընդունել $A = 1$: Եզրային պայմանից $r = R$ դեպքում կգտնենք սեփական արժեքները որոշելու հավասարումը.

$$J_0(\mu) = 0, \;\; \mu = \sqrt{\lambda}R,$$

որն ունի անվերջ թվով պարզ իրական արմատներ. $\mu_1 < \mu_2 < \cdots < \mu < \cdots,$

ըստ որոնց էլ կորոշենք խնդրի $\lambda_n = \frac{\mu_n{}^2}{R^2}$ սեփական արժեքները և $J_0(\frac{\mu_n}{R}r)$ սեփական ֆունկցիաները:

Խնդրի լուծումը փնտրում ենք շարքի տեսքով.

$$u(r,t) = \sum_{n=1}^{\infty} C_n e^{-a^2\frac{\mu_n{}^2}{R^2}t} J_0\left(\frac{\mu_n}{R}r\right):$$

Շարքի C_n գործակիցները կգտնենք՝ օգտագործելով նախնական պայմանները և Բեսսելի ֆունկցիաների օրթոգոնալության հատկություն-ները.

$$u(r,0) = \varphi(r) \equiv \sum_{n=1}^{\infty} C_n J_0\left(\frac{\mu_n}{R}r\right):$$

Այս նույնությունը բազմապատկելով $rJ_0\left(\frac{\mu_k}{R}r\right)$-ով և ստացված արդյունքն ինտեգրելով ըստ r-ի $[0,R]$ միջակայքում, հաշվի առնելով Բեսսելի ֆունկցիաների օրթոգոնալությունը՝ կստանանք.

$$\int_0^R r\varphi(r)J_0\left(\frac{\mu_k}{R}r\right)dr = C_k\frac{R^2}{2}[J_0'(\mu_k)]^2,$$

որտեղից՝

$$C_k = \frac{2}{R^2[J_0'(\mu_k)]^2}\int_0^R r\varphi(r)J_0\left(\frac{\mu_k}{R}r\right)dr:$$

Դիտողություն: Խնդրի մոտավոր լուծման համար բավական է սահմանափակվել μ շարքի առաջին մի քանի անդամներով: Այսպես, օրինակ,

$$u(r,t) \approx C_1 e^{-a^2\frac{\mu_1{}^2}{R^2}t} J_0\left(\frac{\mu_1}{R}r\right) + C_2 e^{-a^2\frac{\mu_2{}^2}{R^2}t} J_0\left(\frac{\mu_2}{R}r\right):$$

μ_1-ն ու μ_2-ը գտնում ենք $J_0(x)$-ի արժեքների աղյուսակում.

$$\mu_1 = 2.4048; \quad \mu_2 = 5.5201:$$

Գրականություն

1. Андре А. - Математика для электро- и радиоинженеров, Москва, 1965.
2. Кузнецов Д. С. - Специальные функции, Москва, 1965.
3. Лебедев Н. Н. - Специальные функции и их приложения, Москва, 1963.
4. Никифоров А. Ф., Уваров В. Б. - Основы теории специальных функций, Москва, 1974.
5. Смирнов В. И. - Курс высшей математики, том 3-й, часть 2, Москва-Ленинград, 1950.

Уравнение Бесселя и связанные с ним уравнения. Функции Бесселя и их приложения

Асланян Нарине
Факультет естественных наук,
«Математика»,
руководитель магистерской диссертации –
к.ф.м.н., доцент Р. Саакян

Резюме

Ключевые слова: *уравнение Бесселя, функции Бесселя, обобщенный степенной ряд, интеграл Эйлера второго рода, уравнение Неймана*

Решения многих дифференциальных уравнений не выражаются квадратурами. В приложениях встречаются уравнения, решения которых существуют, но не выражаются через конечного числа элементарных функций и представляются в виде сходящегося степенного ряда.

В настоящей работе рассматривается линейное уравнение такого типа, решения которого составляют специальный класс цилиндрических функций, называемыми функциями Бесселя. Изучаются эти функции с целыми и полуцелыми индексами первого и второго рода, рекуррентные соотношения между ними и их интегральные представления. В статье решены соответствующие примеры и краевая задача.

Bessel Equation and Related Equations. Bessel Functions and Their Applications

Aslanyan Narine
Faculty of Natural Sciences,
"Mathematics",
Academic Supervisor: R. Saakyan,
Ph.D. in Mathematics, Associate Professor

Summary

Key words: *Bessel equation, Bessel functions, generalized power series, Euler integral of the second kind, Neumann equation*

Solutions of many differential equations are not expressed by quadratures. In applications there are equations solutions of which exist, but are not expressed in terms of a finite number of elementary functions and are represented in the form of a power series of convergence.

This form of linear equation is being considered in this work, and its solutions make up a particular class of cylinder functions known as Bessel functions. We studied these functions with integer and half-integer indices of the first and second kind, recurrence relations between them and their integral representations. The corresponding examples and the boundary value problem are solved.

Խառն արտադրյալի մի կիրառություն

Խուդավերդյան Մեդա
Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Մաթեմատիկա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ֆ.-մ. գ. թ., դոցենտ Մ. Սաքանյան

Հանգուցային բառեր. *խառն արտադրյալ, բուրգի ծավալ, զուգահեռանիստի ծավալ, դետերմինանտի բազմապատկում*

Աշխատանքի նպատակն է տարածական մարմինների ծավալների հաշվումը՝ խառն արտադրյալի օգնությամբ:

Մի գագաթից ելնող կողերի երկարություններով և այդ գագաթին առընթեր հարթ անկյուններով քառանիստի ծավալի հաշվումը լուրջ դժվարության է հանդիպում: Պարզվում է, որ այդ խնդիրը կարելի է լուծել խառն արտադրյալի օգնությամբ, և ստանալ հեշտ հիշվող երկու բանաձևեր, որոնք կարող են օգտակար լինել նաև ավագ դպրոցի աշակերտների համար:

Խնդիր 1: ([2], N713 5., էջ 69) Ապացուցել, որ

$$\left(\left[\bar{a},\bar{b}\right]\cdot\bar{c}\right)\cdot\left(\left[\bar{m},\bar{n}\right]\cdot\bar{p}\right)=\begin{vmatrix}\bar{a}\cdot\bar{m} & \bar{a}\cdot\bar{n} & \bar{a}\cdot\bar{p}\\ \bar{b}\cdot\bar{m} & \bar{b}\cdot\bar{n} & \bar{b}\cdot\bar{p}\\ \bar{c}\cdot\bar{m} & \bar{c}\cdot\bar{n} & \bar{c}\cdot\bar{p}\end{vmatrix}:$$

Գրենք $\left(\left[\bar{a},\bar{b}\right]\cdot\bar{c}\right)$ -ի և $\left(\left[\bar{m},\bar{n}\right]\cdot p\right)$-ի վեկտորների խառն արտադրյալները:

$$\left[\bar{a},\bar{b}\right]\cdot\bar{c}=\begin{vmatrix}a_1 & a_2 & a_3\\ b_1 & b_2 & b_3\\ c_1 & c_2 & c_3\end{vmatrix}=detA$$

$$\left[\bar{m},\bar{n}\right]\cdot\bar{p}=\begin{vmatrix}m_1 & m_2 & m_3\\ n_1 & n_2 & n_3\\ p_1 & p_2 & p_3\end{vmatrix}=\begin{vmatrix}m_1 & n_1 & p_1\\ m_2 & n_2 & p_2\\ m_3 & n_3 & p_3\end{vmatrix}=detB$$

Օգտվելով դետերմինանտի բազմապատկման հատկությունից՝ *detAB=detA+detB:*

կստանանք.

$$\left(\left[\bar{a},\bar{b}\right]\cdot\bar{c}\right)\cdot\left(\left[\bar{m},\bar{n}\right]\cdot\bar{p}\right)$$
$$=\begin{vmatrix}a_1m_1+a_2m_2+a_3m_3 & a_1n_1+a_2n_2+a_3n_3 & a_1p_1+a_2p_2+a_3p_3\\ b_1m_1+b_2m_2+b_3m_3 & b_1n_1+b_2n_2+b_3n_3 & b_1p_1+b_2p_2+b_3p_3\\ c_1m_1+c_2m_2+c_3m_3 & c_1n_1+c_2n_2+c_3n_3 & c_1p_1+c_2p_2+c_3p_3\end{vmatrix}=$$

$$= \begin{vmatrix} \bar{a}\cdot\bar{m} & \bar{a}\cdot\bar{n} & \bar{a}\cdot\bar{p} \\ \bar{b}\cdot\bar{m} & \bar{b}\cdot\bar{n} & \bar{b}\cdot\bar{p} \\ \bar{c}\cdot\bar{m} & \bar{c}\cdot\bar{n} & \bar{c}\cdot\bar{p} \end{vmatrix}:$$

Խնդիր 2: Հաշվել զուգահեռանիստի ծավալը:

Լուծում: Գիտենք, որ զուգահեռանիստի ծավալը հավասար է $\bar{a}, \bar{b}, \bar{c}$ վեկտորների խառն արտադրյալին `

$$V = [\bar{a}, \bar{b}] \cdot \bar{c}$$

$[\bar{m}, \bar{n}] \cdot \bar{p}$-ի փոխարեն վերցնենք $[\bar{a}, \bar{b}] \cdot \bar{c}$ վեկտորների խառն արտադրյալը և օգտվելով (1) պայմանից.

$$([\bar{a}, \bar{b}] \cdot \bar{c}) \cdot ([\bar{m}, \bar{n}] \cdot \bar{p}) = \begin{vmatrix} \bar{a}\cdot\bar{m} & \bar{a}\cdot\bar{n} & \bar{a}\cdot\bar{p} \\ \bar{b}\cdot\bar{m} & \bar{b}\cdot\bar{n} & \bar{b}\cdot\bar{p} \\ \bar{c}\cdot\bar{m} & \bar{c}\cdot\bar{n} & \bar{c}\cdot\bar{p} \end{vmatrix} \qquad (1)$$

Կունենանք հետևյալ արտահայտությունը.

$$V^2 = ([\bar{a}, \bar{b}] \cdot \bar{c}) \cdot ([\bar{a}, \bar{b}] \cdot \bar{c}) = \begin{vmatrix} \bar{a}\cdot\bar{a} & \bar{a}\cdot\bar{b} & \bar{a}\cdot\bar{c} \\ \bar{b}\cdot\bar{a} & \bar{b}\cdot\bar{b} & \bar{b}\cdot\bar{c} \\ \bar{c}\cdot\bar{a} & \bar{c}\cdot\bar{b} & \bar{c}\cdot\bar{c} \end{vmatrix} =$$

$$= \begin{vmatrix} \bar{a}^2 & \bar{a}\cdot\bar{b} & \bar{a}\cdot\bar{c} \\ \bar{b}\cdot\bar{a} & \bar{b}^2 & \bar{b}\cdot\bar{c} \\ \bar{c}\cdot\bar{a} & \bar{c}\cdot\bar{b} & \bar{c}^2 \end{vmatrix} \qquad (2)$$

(2)-ից կստանանք զուգահեռանիստի ծավալը`

$$V = \sqrt{\begin{vmatrix} \bar{a}^2 & \bar{a}\cdot\bar{b} & \bar{a}\cdot\bar{c} \\ \bar{b}\cdot\bar{a} & \bar{b}^2 & \bar{b}\cdot\bar{c} \\ \bar{c}\cdot\bar{a} & \bar{c}\cdot\bar{b} & \bar{c}^2 \end{vmatrix}} = \sqrt{\begin{matrix} |a|^2 & |a||b|cos\gamma & |a||c|cos\beta \\ |a||b|cos\gamma & |b|^2 & |b||c|cos\alpha \\ |a||c|cos\beta & |b||c|cos\alpha & |c|^2 \end{matrix}}:$$



Գծագիր 1

Խնդիր 3: ([2], N718, էջ 70) Հաշվել բուրգի ծավալը:

Լուծում: Կատարենք նշանակումներ`

$|\overline{OA}| = |\bar{a}|, |\overline{OB}| = |\bar{b}|, |\overline{OC}| = |\bar{c}|, \angle AOB = \gamma, \angle COB = \alpha, \angle AOC = \beta$:

Ինչպես գիտենք $V_{\mathcal{P}} = \frac{1}{6} V_{\mathcal{Q}}$ (3):

Զուգահեռագծի ծավալը տեղադրենք (3)-ում, կստանանք՝

$$V_{\mathcal{P}} = \frac{1}{6}\sqrt{\begin{vmatrix} \bar{a}^2 & \bar{a}\cdot\bar{b} & \bar{a}\cdot\bar{c} \\ \bar{b}\cdot\bar{a} & \bar{b}^2 & \bar{b}\cdot\bar{c} \\ \bar{c}\cdot\bar{a} & \bar{c}\cdot\bar{b} & \bar{c}^2 \end{vmatrix}} = \frac{1}{6}\sqrt{\begin{matrix} |a|^2 & |a||b|cos\gamma & |a||c|cos\beta \\ |a||b|cos\gamma & |b|^2 & |b||c|cos\alpha \\ |a||c|cos\beta & |b||c|cos\alpha & |c|^2 \end{matrix}} =$$

$$= \frac{1}{6}abc\sqrt{\begin{matrix} 1 & cos\gamma & cos\beta \\ cos\gamma & 1 & cos\alpha \\ cos\beta & cos\alpha & 1 \end{matrix}} =$$

$$\frac{1}{6}abc\sqrt{1 + 2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - cos\beta^2 - cos\gamma^2}:$$

Հետևանք: Եթե $\alpha = \beta = \gamma = 90^{\circ}$, ապա կստանանք $V_{\mathcal{P}} = \frac{1}{6}abc$:



Գծագիր 2

Խնդիր 4: ([2], N732, էջ 71) Ապացուցել, որ քառանիստի ծավալը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$V = \frac{1}{3}abc\sqrt{sin\sigma \sin(\sigma - \alpha)\, sin(\sigma - \beta) sin(\sigma - \gamma)}$$

Որտեղ a, b, c միևնույն կետերից դուրս ելնող կողերի երկարություններն են, իսկ α, β, γ հարթ անկյունների մեծություններն են և

$$\sigma = \frac{\alpha + \beta + \gamma}{2}$$

$$V_P = \frac{1}{6} abc \sqrt{\begin{matrix} 1 & cos\gamma & cos\beta \\ cos\gamma & 1 & cos\alpha \\ cos\beta & cos\alpha & 1 \end{matrix}} = \frac{1}{6} abc \sqrt{1 + 2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - cos\beta^2 - cos\gamma^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{1 + cos\alpha(2cos\beta cos\gamma - cos\alpha) - cos\beta^2 - cos\gamma^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{1 + cos\alpha[\cos(\beta - \gamma) + \cos(\beta + \gamma) - cos\alpha] - cos\beta^2 - cos\gamma^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{1 + cos\alpha \left[\cos(\beta - \gamma) - 2sin\frac{\alpha + \beta + \gamma}{2} sin\frac{\beta + \gamma - \alpha}{2}\right] - cos\beta^2 - cos\gamma^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{1 + cos\alpha \cos(\beta - \gamma) - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha - cos\beta^2 - cos\gamma^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{sin^2\beta - cos^2\beta + cos^2\beta - cos^2\gamma + cos\alpha \cos(\beta - \gamma) - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{-[\cos(\gamma - \beta)\cos(\gamma + \beta)] + cos\alpha \cos(\beta - \gamma) - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{\cos(\gamma - \beta)\,[cos\alpha - \cos(\gamma + \beta)] - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{\cos(\gamma - \beta)\left[-2sin\frac{\alpha + \beta + \gamma}{2} sin\frac{\alpha - \beta - \gamma}{2}\right] - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{\cos(\gamma - \beta) 2\sin\sigma \sin(\sigma - \alpha) - 2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\, cos\alpha} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{2\sin\sigma \sin(\sigma - \alpha)\,[\cos(\gamma - \beta) - cos\alpha]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{2sin\sigma \sin(\sigma - \alpha)\left[-2sin\frac{\alpha - \beta + \gamma}{2} sin\frac{\gamma - \beta - \alpha}{2}\right]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{4sin\sigma \sin(\sigma - \alpha)\, sin(\sigma - \beta) sin(\sigma - \gamma)} =$$

$$= \frac{1}{3} abc \sqrt{sin\sigma \sin(\sigma - \alpha)\, sin(\sigma - \beta) sin(\sigma - \gamma)}$$

Ստանանք նաև հակադարձը՝

$$V = \frac{1}{3} abc \sqrt{sin\sigma \sin(\sigma - \alpha)\, sin(\sigma - \beta) sin(\sigma - \gamma)} =$$

$$= \frac{1}{3} abc \sqrt{\frac{1}{2}[cos\alpha - \cos(2\sigma - \alpha)]\frac{1}{2}[\cos(\gamma - \beta) - \cos(2\sigma - \beta - \gamma)]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{[cos\alpha - \cos(\gamma + \beta)][\cos(\gamma - \beta) - cos\alpha]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{cos\alpha \cos(\gamma - \beta) - cos\alpha^2 - \cos(\gamma + \beta)\cos(\gamma - \beta) + \cos(\gamma + \beta) cos\alpha}$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{cos\alpha(cos\gamma cos\beta + sin\gamma sin\beta) - cos\alpha^2 -} \cdot$$

$$\sqrt{(cos\gamma cos\beta - sin\gamma sin\beta)(cos\gamma cos\beta + sin\gamma sin\beta + cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha sin\beta sin\gamma)} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - [cos\gamma^2 cos\beta^2 - sin\gamma^2 sin\beta^2]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - [cos\gamma^2 cos\beta^2 - (1 - cos\gamma^2)(1 - cos\beta^2)]} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - cos\gamma^2 cos\beta^2 + 1 - cos\beta^2 - cos\gamma^2 + cos\gamma^2 cos\beta^2} =$$

$$= \frac{1}{6} abc \sqrt{1 + 2cos\alpha cos\beta cos\gamma - cos\alpha^2 - cos\beta^2 - cos\gamma^2}$$



Գծագիր 3

Գրականություն

1. Атанасян Л.С., Базылев В.Т. Геометрия, ч. I, Москва, Просвещение, 1974.
2. Базылев В.Т., Дуничев К.И. Сборник задач по геометрии. Москва, Просвещение, 1980.

Одно приложение смешанного произведения

Худавердян Седа
Факультет естественных наук,
«Математика»,
руководитель магистерской диссертации –
ф.м.к.н., доцент М. Саканян

Резюме

***Ключевые слова**: смешанное произведение, объём пирамиды, объём параллелепипеда, умножение определителя*

Цель работы – вычисление объёмов пространственных тел с помощью смешанного произведения. Определение объёма тетраэдра по трём ребрам, выходящим из одной вершины и плоскими углами, приводит к серьезным трудностям. Оказывается, что эту задачу можно решить с помощью смешанного произведения и получить две легко запоминающиеся формулы, которые могут быть полезны для учеников старших классов.

An Application of the Mixed Product

Khudaverdyan Seda
Faculty of Natural Sciences,
"Mathematics",
Academic Supervisor: M. Sakanyan
PhD in Physical and Mathematical Sciences,
Associate Professor

Summary

***Key words:** mixed product, volume of the tetrahedron, volume of the parallelepiped, multiplication of the determinant*

The aim of the work is to calculate the volumes of space forms with the help of the mixed product. Calculating the volume of tetrahedron, emanating from a vertex with the lengths of the sides and having vertex attached with smooth corners leads to serious difficulties. It turns out that this problem can be solved via the mixed product, and it can get two easy-to-remember formulas, which can also be useful for high school students.

Պարամետրական հավասարումների լուծման մեթոդները դպրոցական դասընթացում

Ղազարյան Անահիտ
Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Մաթեմատիկա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ֆ.-մ. գ. թ., դոցենտ Հ. Մամիկոնյան

Հանգուցային բառեր. *պարամետր, պարամետրական հավասարում, գրաֆիկ, տեսակներ, մեթոդներ*

Երբեմն հավասարումը, բացի անհայտից, պարունակում է նաև այլ տառեր, որոնք կոչվում են պարամետրեր: Այս դեպքում գործ ունենք անվերջ թվով հավասարումների հետ, քանի որ պարամետրի յուրաքանչյուր թույլատրելի արժեքի դեպքում ստանում ենք մեկ (սովորական) հավասարում: Պարամետրի որոշ արժեքների դեպքում այն կարող է ունենալ մեկ կամ մի քանի արմատ, իսկ որոշ արժեքների դեպքում կարող է ընդհանրապես արմատ չունենալ:

Պարամետր պարունակող հավասարումը լուծել, նշանակում է այն լուծել պարամետրի բոլոր թույլատրելի արժեքների դեպքում: Այսինքն՝ նախ պետք է գտնել պարամետրի թույլատրելի արժեքները, այնուհետև պարզել, թե այդ արժեքներից որո՞նց դեպքում հավասարումն ունի արմատ, և գտնել այդ արմատները:

Այս տեսակ հավասարումները մաթեմատիկայի դպրոցական դասընթացի համեմատաբար բարդ թեմաներից են համարվում: Որպեսզի հասկանանք պարամետրական հավասարումների լուծման ալգորիթմը, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես կլուծվեր խնդիրը, եթե պարամետրի փոխարեն գրված լիներ կոնկրետ թիվ: Այնուհանդերձ չպետք է մոռանալ, որ պարամետրը իրականում հենց թիվ է, և կարող է ընդունել ցանկացած արժեք: Պարամետրի տարբեր արժեքներ գտնելու համար անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ. դրա համար այս հավասարումների լուծման հիմնական մեթոդը պարամետրի փոփոխման տիրույթը այնպիսի փոքր հատվածների բաժանելու մեջ է, որ նրանցից յուրաքանչյուրում ստացվի այնպիսի հավասարում, որը կարելի է լուծել նույն մեթոդով: Այսպիսով կարող ենք ասել, որ պարամետրական հավասարումների դժվարությունը այն է, որ չկա կոնկրետ լուծման ալգորիթմ:

Պարամետրական հավասարումների լուծման համար անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ մաթեմատիկական տրամաբանություն, հստակ տիրապետել հավասարումների լուծման տարբեր մեթոդների: Նման խնդիրների լուծման գործում մեծ է ուսուցիչների դերը: Այս աշխատանքում կփորձենք տալ պարամետրական հավասարումների լուծման հիմնական մեթոդները և դասակարգել դրանց:

Աշխատանքը օգտակար կլինի ուսուցիչների և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայով հետաքրքրվող անձանց համար:

Պարամետր պարունակող հավասարումների համար դրված խնդիրների տեսակները.

1. Տրված է հավասարում, և պահանջվում է լուծել այն պարամետրի ցանկացած արժեքի համար:

Օրինակ. Դիտարկենք հետևյալ հավասարումը՝

$$6^{1-x^2} = a^2 + a\ ,$$

a-ի ի՞նչ արժեքների դեպքում այն ունի լուծում. գտնել դրանք:

Քանի որ $6^{1-x^2} > 0$ կստանանք, $a^2 + a > 0$:

Օգտվելով լոգարիթմի սահմանումից և $6^{1-x^2} > 0$ ճշմարիտ անհավասարումից՝ կստանանք հետևյալ համակարգը

$$\begin{cases} a^2 + a > 0 \\ 1 - x^2 = \log_6(a^2 + a) \end{cases}$$

Կատարելով պարզ ձևափոխություններ՝ ստանանք համակարգի լուծումը:

$$\begin{cases} a(a+1) > 0 \\ x^2 = 1 - \log_6(a^2 + a) \end{cases}$$

$$\begin{cases} a \in (-\infty; -1) \cup (0; \infty) \\ \log_6(a^2 + a) \le 1 \end{cases}$$

Առանձին լուծենք համակարգի երկրորդ տողը

$$\log_6(a^2 + a) \le 1$$

$$a^2 + a \le 6$$

$$a^2 + a - 6 \le 0$$

$$a \in [-3; 2]$$

$$\begin{cases} a \in (-\infty;\ -1) \cup (0; \infty) \\ a \in [-3; 2] \end{cases}$$

Այսինքն՝ $a \in [-3;\ -1) \cup (0; 2]$:

Այսպիսով, երբ $a \in [-3;\ -1) \cup (0; 2]$, հավասարումը կունենա լուծում, և այդ լուծումն է

$$x = \pm\sqrt{1 - \log_6(a^2 + a)}$$

2. Տրված է հավասարում, պահանջվում է պարամետրից կախված գտնել լուծումների քանակը:

Օրինակ. Դիտարկենք հետևյալ հավասարումը՝

$$x|2x - 1| + 2 = a\ ;$$

a պարամետրի ի՞նչ արժեքների դեպքում հավասարումն ունի

ա) մեկ արմատ;

բ) երկու արմատ;

գ) երեք արմատ:

Դիտարկենք $y = f(x)$ ֆունկցիան

$$y = x|2x - 1|:$$

Քանի որ

$$|2x - 1| = \begin{cases} 2x - 1, \text{ երբ } x \geq \frac{1}{2} \\ -2x + 1, \text{ երբ } x < \frac{1}{2}, \end{cases}$$

ապա

$$f(x) = \begin{cases} 2x^2 - x, \text{ երբ } x \geq \frac{1}{2} \\ -2x^2 + x, \text{ երբ } x < \frac{1}{2} \end{cases}$$

Առանձին գծենք $f(x)$ ֆունկցիայի գրաֆիկը, երբ $x \geq \frac{1}{2}$ և $x < \frac{1}{2}$:

$f(x) = 2x^2 - x$, գտնենք գագաթի կոորդինատները

$$x_q = \frac{1}{4}$$

$$y_q = 2 \cdot \frac{1}{16} - \frac{1}{4} = -\frac{1}{8}:$$

Գրաֆիկը կընդունի նկար 1-ում պատկերված տեսքը:



Նկար 1



Նկար 2

Քանի որ այս դեպքում $x \geq \frac{1}{2}$, կվերցնենք գրաֆիկի միայն այս պայմանին բավարարող մասը:

Այժմ գծենք $f(x) = -2x^2 + x$ ֆունկցիայի գրաֆիկը և այս դեպքում էլ վերցնենք $x < \frac{1}{2}$ մասը:

Գագաթի կոորդինատները կլինեն՝

$$x_q = \frac{-1}{-2 \cdot 2} = \frac{1}{2 \cdot 2} = \frac{1}{4},$$
$$y_q = -2 \cdot \frac{1}{16} + \frac{1}{4} = -\frac{1}{8}$$

(տե՛ս նկար 2-ը):

Այսպիսով կստանանք $y = f(x)$ ֆունկցիայի գրաֆիկը, որը պատկերված է նկար 3-ում: Գրաֆիկին նայելով՝ պարզ երևում է, թե $y = a - 2$ ուղիղը որտեղ պետք է հատվի ֆունկցիայի գրաֆիկի հետ, որպեսզի հավասարումն ունենա համապատասխանաբար մեկ, երկու, երեք արմատներ:

Դիտարկելով բոլոր դեպքերը՝ կստանանք խնդրի պայմանին բավարարող a-ի համապատասխան արժեքները:



Նկար 3

$\left[\begin{array}{l} a - 2 < 0 \\ a - 2 > \frac{1}{8} \end{array}\right.$ մեկ լուծում

$\left[\begin{array}{l} a - 2 = 0 \\ a - 2 = \frac{1}{8} \end{array}\right.$ երկու լուծում

$\begin{cases} a - 2 > 0 \\ a - 2 < \frac{1}{8} \end{cases}$ երեք լուծում

Այսպիսով, հավասարումն ունի մեկ լուծում, երբ $a \in (-\infty; 2) \cup (2{,}125; \infty)$, երկու լուծում, երբ $a = 2{,}125$ և $a = 2$, երեք լուծում, երբ $a \in (2; 2{,}125)$

3. Տրված է հավասարում, և պահանջվում է գտնել պարամետրի այն արժեքները, որոնց դեպքում հավասարման լուծումները կբավարարեն նախապես տրված պայմանին:

Օրինակ. m պարամետրի ի՞նչ արժեքների դեպքում $m x^2 - 8x + 1 = 0$ հավասարման արմատների գումարը հավասար է նրանց քառակուսիների գումարին:

Ըստ Վիետի թեորեմի հավասարման՝ x_1, x_2 արմատները բավարարում են հետևյալ համակարգին՝

$$\begin{cases} x_1 \cdot x_2 = \dfrac{1}{m} \\ x_1 + x_2 = \dfrac{8}{m} \end{cases};$$

Ըստ պայմանի՝ անհրաժեշտ է գտնել m պարամետրի այն արժեքները, որոնց դեպքում տեղի կունենա հետևյալ հավասարումը՝

$$x_1 + x_2 = x_1^2 + x_2^2$$

Որպեսզի աջ մասում լրիվ քառակուսի անջատենք, գումարենք և հանենք $2x_1x_2$.

$$x_1 + x_2 = x_1^2 + x_2^2 + 2x_1x_2 - 2x_1x_2 = (x_1 + x_2)^2 - 2x_1x_2$$

Տեղադրելով $(x_1 + x_2)$-ի և x_1x_2-ի փոխարեն իրենց արժեքները՝ կստանանք հետևյալ հավասարումը.

$$\frac{8}{m} = \frac{64}{m^2} - \frac{2}{m}$$

$$\frac{10}{m} = \frac{64}{m^2}$$

$$m = 6{,}4$$

Այսպիսով՝ $m = 6{,}4$ -ը կբավարարի խնդրի պայմանին:

Պարամետրական հավասարումների լուծման մեթոդներ

Առանձնացնենք պարամետրական հավասարումների լուծման համար կիրառվող հիմնական մեթոդները:

Առաջին մեթոդը անալիտիկն է, երբ ստանդարտ քայլերի կատարման միջոցով գտնում ենք լուծումը:

Օրինակ. Դիտարկենք հետևյալ հավասարումը.

$(a^2 - 9)x^2 - 2(a + 3)x + 1 = 0;$

$a -$ ի ո՞ր արժեքների դեպքում հավասարումը լուծում չունի:

Ունենք պարամետրից կախված քառակուսային հավասարում: Պարզ է, որ քառակուսային հավասարումը $D < 0$ դեպքում լուծում չի ունենա, սակայն միաժամանակ անհրաժեշտ է նաև պահանջել, որ ավագ անդամի գործակիցը 0 չլինի, հակառակ դեպքում կստանանք գծային հավասարում: Երկրորդ դեպքում այս հավասարումը չի ունենա լուծում, եթե ավագ անդամի և միջին անդամի գործակիցները հավասար լինեն 0-ի, իսկ ազատ անդամը՝ ոչ: Համադրելով բոլոր դեպքերը՝ կհանգենք հետևյալ համախմբին:

$$\left[\begin{array}{l}\begin{cases}a^2-9\neq 0\\ D<0\end{cases}\\ \begin{cases}a^2-9=0\\ a+3=0\end{cases}\end{array}\right.$$

Լուծելով համախումբը՝ կստանանք a պարամետրի պահանջվող արժեքները:

$$\left[\begin{array}{c}a\neq\pm 3\\ 4(a+3)^2-4(a^2-9)<0\\ \begin{cases}a=\pm 3\\ a=-3\end{cases}\end{array}\right.$$

$$\left[\begin{array}{c}\begin{cases}a\neq\pm 3\\ 24a+36+36<0\\ a=-3\end{cases}\end{array}\right. \quad \left[\begin{array}{l}\begin{cases}a\neq\pm 3\\ a<-3\end{cases}\\ a=-3\end{array}\right| \; a\in(-\infty;-3]$$

Այսպիսով՝ հավասարումը լուծում չունի, երբ $a\in(-\infty;-3]$:

Երկրորդը գրաֆիկական մեթոդն է: Գրաֆիկի կիրառումը պարամետրական հավասարումների լուծումները ավելի հետաքրքիր են դարձնում: Բացի դրանից՝ այս մեթոդի կիրառումը նպաստում է գրաֆիկների կառուցման կրկնությանը:

Օրինակ. Դիտարկենք հետևյալ հավասարումը.

$$\big||x-2|-4\big|=a^2+3a$$

a պարամետրի ի՞նչ արժեքների դեպքում հավասարումը կունենա մեկ լուծում:

Գծենք $y=\big||x-2|-4\big|$ ֆունկցիայի գրաֆիկը և հատենք այն $y=a^2+3a$ ուղղի հետ:



Նկար 4

Հավասարումը կունենա երկու արմատ, եթե a-ն բավարարում է հետևյալ համախմբին.

$$\left[\begin{array}{l} a^2+3a=0 \\ a^2+3a>4 \end{array}\right.$$

Լուծենք համակարգը՝ ստանալով a-ի համապատասխան արժեքները.

$$\left[\begin{array}{l} a=0 \\ a=-3 \\ a^2+3a-4>0 \end{array}\right.$$

Լուծելով վերջին անհավասարումը՝ ստանում ենք.

$$a \in (-\infty;-4) \cup (1;\infty) \cup \{0;3\}:$$

Խնդիրը կլուծվի ճիշտ նույն կերպ, եթե պահանջվի, որ հավասարումն ունենա երեք, չորս արմատ կամ արմատ չունենա:

Երրորդը պարամետրի նկատմամբ լուծման եղանակն է:

Այս դեպքում x և a փոփոխականները ընդունվում են որպես «իրավահավասար», այնուհետև հավասարումը լուծվում է a-ի նկատմամբ, և վերջում վերադառնում ենք x փոփոխականին:

Օրինակ. տրված է հետևյալ հավասարումը.

$$x^3-(2-a)x^2-ax-a(a-2)=0:$$

Լուծել հավասարումը a-ի բոլոր իրական արժեքների համար:

Սա խորանարդ հավասարում է x-ի նկատմամբ, սակայն ձևափոխելով այն՝ նկատում ենք, որ քառակուսային է a-ի նկատմամբ.

$$a^2-(x^2-x+2)a-x^3+2x^2=0:$$

Քանի որ $\left(x^2-x+2=x^2+(2-x)\right)$ և $\left(-x^3+2x^2=x^2(2-x)\right)$, ապա, ըստ Վիետի հակադարձ թեորեմի, $a_1=x^2,\ a_2=\ 2-x$

Այսպիսով՝ սկզբնական հավասարումը համարժեք է հետևյալ համախմբին.

$$\left[\begin{array}{l} a = x^2 \\ a = 2 - x \end{array}\right.$$

Հավասարումներից առաջինից հետևում է, որ

1) երբ $a < 0$, լուծում չունի,
2) երբ $a = 0$, $x = 0$ միակ լուծումն է,
3) երբ $a > 0$, ունենք $x = \sqrt{a}$ $x = -\sqrt{a}$ երկու լուծում:

Համախմբի երկրորդ հավասարման միակ լուծումը a-ի ցանկացած արժեքի դեպքում $x = 2 - a$ է:

Նկատենք նաև, որ երբ $a = 1$ և $a = 4$, համախմբի առաջին և երկրորդ հավասարումներում ունենք կրկնվող արմատներ. երբ $a = 1$, ստացվում է $x = \pm 1$, երբ $a = 4$ $x_{1,2} = \pm 2$:

Այսպիսով՝

$x = 2 - a$ երբ $a < 0$;

$x_1 = 0$, $x_2 = 2$ երբ $a = 0$;

$x_{1,2} = \pm\sqrt{a}$, $x_3 = 2 - a$ երբ $0 < a < 1$, $1 < a < 4$, $a > 4$;

$x_{1,2} = \pm 1$ երբ $a = 1$; $x_{1,2} = \pm 2$ երբ $a = 4$.

Պարամետր պարունակող հավասարումները մաթեմատիկայի դպրոցական դասընթացի համեմատաբար բարդ և դժվար ընկալվող թեմաներից են համարվում: Այս աշխատանքում ներկայացված են պարամետր պարունակող հավասարումների համար դրված խնդիրների հիմնական տեսակները և դրանց լուծման մեթոդները: Մասնավորապես առանձնացված են անալիտիկ, գրաֆիկական և պարամետրի նկատմամբ լուծման մեթոդները: Տրված են տիպային խնդիրների լուծումները՝ ներկայացված մեթոդների կիրառմամբ:

Գրականություն

1. Գևորգյան Գ. Գ., Սահակյան Ա. Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երևան, 2011:
2. Մաթեմատիկայի շտեմարան, մաս 2, Երևան, 2011:
3. Лемешев В.П., Теория параметров. Гомель, 2017.
4. Позднякова Е.В., Уравненения с параметрами. Новокузнецк, 2019.
5. Параметрические задачи Славянск-на-Кубани, 2018.

Методы решения параметрических уравнений в школьном курсе

Казарян Анаит
Факультет естественных наук,
«Математика»,
руководитель магистерской диссертации –
к.ф.м.н., доцент А. Мамиконян

Резюме

Ключевые слова: *параметр, параметрическое уравнение, график, виды, методы*

Уравнения, содержащие параметры, считаются одной из относительно сложных и труднодоступных тем школьного курса математики. В данной работе представлены основные типы задач, поставленных для параметросодержащих уравнений, и методы их решения.

В частности выделены следующие методы: аналитический, графический и метод решения относительно параметра.

Даны решения нескольких типовых задач с использованием представленных методов.

Methods of Solving Parametric Equations in the School Course

Ghazaryan Anahit
Faculty of Natural Sciences,
"Mathematics",
Academic Supervisor: H. Mamikonyan,
Ph.D. in Mathematics,
Associate Professor

Summary

Key words: *parameter, parametric equation, graph, types, methods*

Equations containing parameters are considered to be one of the relatively complex and hard-to-understand topics in the school mathematics course. The main types of problems for equation containing parameters and their solution methods are presented in this work.

In particular, the following methods are distinguished: analytical, graphical and parameter solution method.

The solutions of several typical problems are also presented.

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

АНГЛИЙСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

ENGLISH LANGUAGE AND LITERATURE

Games and Songs as Motivating Tools while Teaching a Foreign Language

Ժամանակի ոգին կոչ էր անում ամերիկացիների հայրենասիրական վերելքին: Միանգամայն բնական է, որ Ջ. Ադամսը դրա համար օտար չէր: Նա առաջին անգամ դա զգաց 1761 թ., երբ թագավորը արձակեց «օգնության» ակտեր, որոնք հաստատվել էին Մասաչուսեթսի ասամբլեայի կողմից՝ անգլիամետ տարրերի ճնշման ներքո: «Օգնության» ակտերի կապակցությամբ ծավալվեց քաղաքացիական անհնազանդության մի տեսակ քարոզարշավ: Բոստոնից հայտնի լրագրող Ս. Ադամսը, իրավաբան Ջ. Օտիսը դարձան ժողովրդական դժգոհության ավետաբերներ: Ջ. Օտիսի փաստարկները հրապարակվեցին գաղութներում և լայն աջակցություն բերեցին գաղութատիրական իրավունքներին: Որպես երիտասարդ իրավաբան՝ Ջ. Ադամսը գործը դիտում էր լեփ-լեցուն դահլիճում: Ավելի ուշ Ջ. Ադամսն ասաց, որ «այդ ժամանակ ծնվեց Անկախության փոթորիկը»:

1763 թ. Ջ. Ադամսը հրատարակեց երեք էսսեներ «Հեմֆրի Պլաֆֆջոգեր» կեղծանունով և քննադատեց իշխանության եսասիրական ցանկությունը, որը նա զգում էր Մասաչուսեթսի գաղութատիրական վերնախավում, չորրորդը՝ 1765 թ.՝ Նամականիշի ակտի ժամանակ, և ևս երկուսը՝ 1767 թ.: 1765 թ. Ջ. Ադամսը Ի. Գրիդլիի, Ջ. Օտիսի և Ս. Ադամսի հետ միասին հիմնեց «Sodalitas» քաղաքական ակումբը, որը ներառում էր հայրենասեր բոստոնցի իրավաբաններ:

1765 թ. Բրեյնթրի քաղաքի ժողովը խնդրեց Ջ. Ադամսին պատրաստել հրահանգներ Մասաչուսեթսի ասամբլեայի իրենց ներկայացուցիչների համար: Նա գրեց հզոր, պերճախոս նախագիծ, որտեղ հայտարարվում էր քաղաքի ընդդիմությունը Նամականիշի օրենքին: «Մենք այնուհետև խորհուրդ ենք տալիս մեր իրավունքների, ազատությունների առավել հստակ և բացահայտ պնդումն ու արդարացումը մուտքագրել հանրային գրառումներում, որպեսզի աշխարհն իմանա, որ մենք ունենք հստակ Գիտե-

լիք և արդար զգացում դրանց մասին, և, հնազանդվելով Աստվածային նախախնամությանը, որ մենք երբեք չենք կարող լինել ստրուկներ» [1, 81; 2, 39]:

Ջ. Ադամսը, հաստատելով իր տեսությունները, դատապարտեց Նամականիշի ակտը որպես «հակասահմանադրական», այսինքն՝ «անհամապատասխանություն ընդհանուր իրավունքի ոգուն և բրիտանական սահմանադրության հիմնարար սկզբունքների էությանը», քանի որ «ոչ ոք չպետք է զրկվի» գույքից, բացառությամբ իր կամքով կամ պարտքերի պատճառով [3]:

«Sodalitas»-ի հանդիպումների արդյունքում ստեղծվեցին Ջ. Ադամսի անանուն հոդվածները «Բոստոնյան թերթի» համար, որոնք շուտով վերահրատարակվեցին Անգլիայում՝ «Մտորումներ դավանական և ավատատիրական իրավունքի մասին» վերնագրով: Հենց այդ ժամանակ նա իրեն հռչակեց որպես հայրենասիրական շարժման ճանաչված գաղափարախոս [1, 80]:

Պայքարի սկզբնական փուլում Ջ. Ադամսի համար մայր երկրի հետ հակամարտությունը տխուր ընտանեկան վեճ էր, բայց նա ցանկություն չուներ քանդելու ընտանիքը: Նա նախընտրեց վեճը լուծել սահմանադրական միջոցներով, որոնք նա համարում էր գաղութարարների դիրքորոշման ամենաուժեղ հիմքը: Նա քիչ էր սատարում այնպիսի ընկերությունների քայլերը, ինչպիսիք են «Ազատության զավակները» և բրիտանական կառավարման դեմ հակազդեցության հրապարակային ցուցադրությունների կազմակերպումը: Ցանկանալով լուծել գաղութների և Բրիտանիայի միջև վեճը, որը կպահպաներ կայսրությունը, Ջ. Ադամսը դեռ իրեն համարում էր անգլիացի, որը գրում և վիճում էր՝ ի պաշտպանություն անգլիական իրավունքների [4, 59-60]:

Մինչդեռ «Ազատության զավակները» ուշադրություն դարձրեց մետրոպոլիայի մեկ այլ որոշման վրա՝ Թաունշենդի ակտ: Չնայած Ջ. Ադամսը կտրականապես դեմ էր ակտին, նա հերքեց ժողովրդական բողոքի շարժումների առաջնորդ Ս. Ադամսի փորձերը՝ իրեն ներգրավելու ամբոխներին և հանրային ցույցերին [2, 47-48]:

Ուսումնասիրելով Ամերիկայում բրիտանական գաղութատիրական քաղաքականության օրինականությունը՝ նա ամենայն հստակությամբ հայտարարեց, որ «անգլիացիների իրավունքներն ու ազատությունները բխում են Աստծուց, և ոչ բոլորովին թագավորից ու խորհրդարանից», և «պահպանվում են պատմության, օրենքի և ավանդույթի ուսումնասիրությամբ»: «Այս հիրավի սուրբ իրավունքների պահպանման երաշխավորը» ոչ այլ ոք է, քան «Ինքը՝ Բարձրյալը»: Ջ. Ադամսը չվարանեց հիշել, որ բրի-

տանացիների հայտնի ազատությունները գալիս են դեռ սաքսոնների ժամանակներից, և որ այդ իրավունքներն ու ազատությունները, իրենց հերթին, վերաբերում են բոլոր անգլիացիներին, որտեղ էլ որ նրանք ապրեն, այդ թվում՝ Ամերիկայում:

Շուտով Ջ. Ադամսը դարձավ Բոստոնի ամենահայտնի փաստաբանը: Նա մեծ ներդրում ունեցավ բրիտանացի զինվորների և նրանց հրամանատար Թ. Փրեսթոնի դատավարություն ժամանակ, ովքեր մեղադրվում էին 1770 թ. մարտի 5-ին «Բոստոնյան սպանդի» մեջ: Բոստոնի փաստաբանները հրաժարվեցին մեղադրյալներին պաշտպանել՝ վախենալով ագրեսիվ հանրությունից:

Դատավարության ժամանակ Ջ. Ադամսն օգտագործեց երկու փաստարկ: Նախ, նա դատարանի առաջ կանգնեցրեց բրիտանական կառավարությանը՝ պնդելով, որ բանակը վատ գործիք է օրենք ու կարգ կիրառելու համար, և կայսերական իշխանությունները զինվորներին դրել էին անհնարին դրության մեջ: Երկրորդ՝ նա նաև դատի տվեց մարտի 5-ին հավաքված բոստոնցիներին՝ անվանելով նրանց «ամբոխ»: Հորդորելով երդվյալ ատենակալներին պատկերացնել իրենց զինվորների տեղում՝ Ջ. Ադամսն ասաց, որ իր հաճախորդները բախվել են թշնամական ամբոխի հետ, որը պատրաստ է եղել սպանել նրանց [1,44]: Այսպիսով, զինվորները գործել են ինքնապաշտպանության նպատակով, և երդվյալ ատենակալները պետք է արդարացնեն նրանց: Թ. Փրեսթոնի մեկշաբաթյա դատավարությունը ավարտվեց նրա արդարացմամբ, քանի որ չհաջողվեց ապացուցել, որ նա իր զինվորներին հրամայել է կրակել:

Դատավարությունից հետո՝ Ջ. Ադամսը 1773 թ. մայիսին, ընտրվեց Մասաչուսեթսի նահանգապետական խորհրդի անդամ: Նա ողջունեց 1773 թ. «Բոստոնյան թեյախմությունը», որում մեծ դեր խաղաց նրա զարմիկը՝ Ս. Ադամսը: Ջ. Ադամսը այն անվանեց «ամենամեծ իրադարձությունը» գաղութատիրական բողոքի շարժման պատմության մեջ և իր օրագրում գրեց, որ «հերթապահության ժամանակ թեյի ոչնչացումը բացարձակ և անխուսափելիորեն անհրաժեշտ գործողություն էր» [3]:

1773 թ. հունվարին Ջ. Ադամսը կրկին առաջատար դեր ստանձնեց քաղաքականության մեջ: Պատճառը Մասաչուսեթսի նոր նահանգապետ Թոմաս Հաթչինսոնի ուղերձն էր: Թ. Հաթչինսոնը պաշտպանեց խորհրդարանական գերակայությունը: Օրենսդիր մարմնի ստորին պալատի ղեկավարությունը կոչ արեց Ջ. Ադամսին պատրաստել պատասխան նահանգապետի ուղերձին ավելի օրինական, քան Ս. Ադամսի գլխավորած օրենսդրական հանձնաժողովի կողմից պատրաստված պատասխանը: Մեկ այլ հանձնաժողով՝ կրկին Ջ. Ադամսի աջակցությամբ, պատ-

բաստեց երկրորդ պատասխանը: Գրքույկը տարածվեց ամբողջ Մասաչուսեթսում և լուսաբանվեց այլ գաղութների թերթերում:

1774 թ. հունիսի 17-ին Մասաչուսեթսի ասամբլեան ընտրեց հինգ պատվիրակ՝ Առաջին մայրցամաքային կոնգրեսին մասնակցելու համար: Ջ. Ադամսը իր օրագրում գրել է. «Իմ առջև բացված է մի նոր և մեծ տեսարան՝ Կոնգրես: Սա կլինի մայրցամաքի ամենաիմաստուն մարդկանց ժողովը, ովքեր սկզբունքորեն ամերիկացիներ են»: Ջ. Ադամսի նամակագրության մեջ նշվում էր, որ «ջերմորեն ողջունվում է իրենց նահանգի ոգին, հաստատակամությունը և խոհեմությունը», և նրանք իրենք «համընդհանուր ճանաչում են ստացել որպես ամերիկյան ազատության պաշտպաններ» [3]:

Ջ. Ադամսը ակտիվ մասնակցություն ունեցավ «Իրավունքների հռչակագրի» ու Անգլիայի հետ առևտրային հարաբերությունների դադարեցման մասին համաձայնագրի մշակմանը [3]: Նա եռանդորեն նպաստեց Մասաչուսեթսի բանաձևի հաստատմանը, որն առաջարկում էր յուրաքանչյուր գավառում միլիցիայի մասին օրենք ընդունել, մասնակի մոբիլիզացիա և նավատորմի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ հավաքել:

1775 թ. հունվարից մինչև ապրիլ Ջ. Ադամսը հրատարակեց տասներկու էսսեներ՝ օգտագործելով «Նովանգլուս» գրչանունը: Վեճերի հիմնական հարցը արտերկրի գաղութների նկատմամբ բրիտանական իշխանության սահմանադրությունն էր [1, 104]:

Այն, ինչ Ջ. Ադամսը ցանկանում էր 1774-1775 թթ., ոչ թե մայր երկրից որպես այդպիսին բաժանվելն էր, այլ որոշակի պայմաններում հաշտեցումը բրիտանական սահմանադրության հետ: Նա առաջարկեց կայսրության տեսության և դրանում ամերիկյան իրավունքների իր տարբերակը: Կարելի է խոսել մի կայսրության մասին, որը հասկացվում է որպես հավասար ինքնավար պետությունների միություն, որը պարտավոր է հավատարիմ մնալ ընդհանուր թագավորին. «Առանձին պետությունները կարող են միավորվել մեկ թագավորի իշխանության ներքո»: Բուն գաղութների ներսում գերակայություն պետք է ունենան տեղական ժողովները: Ամերիկան հայտնաբերվեց, ոչ թե նվաճվեց, առաջին վերաբնակիչները ի սկզբանե ունեին որոշակի բնական իրավունքներ, որոնց միջոցով նրանք ստեղծեցին իրենց կառավարությունները և օրենքները, որոնք համահունչ էին միապետի անձի հանդեպ իրենց պարտավորություններին:

Ջ. Ադամսի ոճը նկատելիորեն ավելի կոշտ և վճռական դարձավ: «Հնարավոր է, որ մերժվեն մեր բոլոր իրավունքները, հանվեն մեզ հետ կապված բոլոր պարտավորությունները՝ անհրաժեշտության դեպքում

հղում անելով սվինների և թնդանոթի օրենքին, որին մենք ստիպված կլինենք պատասխանել նույն կերպ»: Այսպիսով, գիտելիքով զինվելու խաղաղ կոչը, որը ժամանակին հնչել էր «Մտորումներ դավանական և ավատատիրական իրավունքի մասին» ուսումնասիրության մեջ, վերածվեց «վառոդ կուտակելու» կոչին, և հեղինակը հրաժարվեց փոխզիջումների գնալ:

Ջ. Ադամսը վերադարձավ Ֆիլադելֆիա՝ մասնակցելու Երկրորդ մայրցամաքային կոնգրեսին՝ որպես Մասաչուսեթսի պատվիրակության ղեկավար [4, 87-88]:

Կոնգրեսի ամբիոնից և Համադաշնության խորհրդի հանձնաժողովներում նա արտահայտեց իր արտաքին քաղաքականության սկզբունքները: Նա արտաքին ուժերի հետ այսպես կոչված «պայմանագրերի նախագծերի» հեղինակն էր [3]: Ջ. Ադամսը պնդում էր, որ Ամերիկայի միակ հնարավոր քաղաքականությունը չեզոքությունն է Եվրոպայում պատերազմների ժամանակ, և այն պահպանելու համար պետք է զերծ մնալ որևէ դաշինքի մեջ մտնելուց: Եթե դաշնակցային հարաբերությունների հաստատումն անհրաժեշտ դառնա, ապա Ֆրանսիան պետք է լինի գործընկեր:

Ջ. Ադամսը դեմ էր տարբեր փորձերին, ներառյալ Ձիթենու ճյուղի խնդրագիրը, որի նպատակն էր խաղաղություն գտնել գաղութների և Մեծ Բրիտանիայի միջև [4, 94-95]: Անդրադառնալով գաղութների դեմ բրիտանական գործողությունների արդեն երկար ցանկին՝ նա գրել է. «Իմ կարծիքով վառոդն ու հրետանին են հանդիսանում ամենաարդյունավետ, հուսալի և անխուսափելի միջոցը ստեղծված իրադրությունում հակամարտությունը կարգավորելու համար» [5, 339]:

Մայրցամաքային կոնգրեսի ժամանակ կարևոր էր գլխավոր հրամանատարի ընտրությունը: Ջ. Ադամսը առաջարկեց Ջորջ Վաշինգտոնի թեկնածությունը: Նա չվարանեց հայտարարելու, որ Վիրջինիայից միայն մեկ ջենթլմեն ունի իր մտքում այդ կարևոր հրամանի համար [6, 229-230]: Ջ. Ադամսը գիտակցում էր՝ եթե հրամանատար դառնար հյուսիսային գաղութների ներկայացուցիչը, ապա հարավային գաղութները, հատկապես Վիրջինիան, կարող էր երես թեքել պայքարից:

Ի պատասխան այլ պատվիրակների հարցերի՝ Ջ. Ադամսը գրեց 1776 թ. «Մտքեր կառավարության մասին» գրքույկը, որը դրեց հանրապետական սահմանադրության ազդեցիկ հիմքը [2, 157]:

Քանի որ ամերիկացիները շեշտում էին լեգիտիմությունը որպես սահմանադրական արժեք, նրանք օրինական կառավարության բացակայությունը համարում էին լուրջ խնդիր: Միայն իշխանությունը բավարար

չէր, որպեսզի կառավարությունն ունենա հեղինակություն, այն պետք է ունենար և՛ փաստացի իշխանություն, և՛ իր իշխանությունն արդարացնող լեգիտիմության աղբյուր: Լուծարված գաղութային օրենսդիր մարմինները կրկին հավաքվել էին որպես գավառական համագումարներ՝ ձգտելով պահպանել կառավարման շարունակությունը և արձագանքել հեղափոխության ճգնաժամերին, բայց և այնպես, նրանք գիտեին, որ չունեն լեգիտիմություն: Նրանք ինքնակոչ օրենսդիր մարմիններ էին. նրանք չէին ղեկավարվում հեղինակավոր սահմանադրական կանոններով, որոնք կգերազանցեին հնացած գաղութային կանոնադրությունները:

Ջ. Ադամսը պնդում էր, որ հանրապետական կառավարությունը միակ ճանապարհն է ամերիկացիների համար՝ պահպանելու իրենց ազատությունները: Այդ նպատակով նա նախատեսեց գրավոր սահմանադրության նախագիծ, որը կստեղծեր երկու պալատ ունեցող օրենսդիր մարմին:

«Մտքեր կառավարության մասին» գրքույկը նաև ներկայացնում էր Ջ. Ադամսի պատասխանը սահմանադրական կառավարման մրցակից մոդելին, որը ներկայացրել էր Թոմաս Փեյնը: Ջ. Ադամսը «Առողջ բանականության» մասին գրեց կնոջը՝ Աբիգեյլին. «Այս գրողն ավելի լավ ձեռք ունի քանդելու, քան կառուցելու համար…: Թվում է, թե նա ոչ ադեկվատ պատկերացումներ ունի այն մասին, թե ինչ է ճիշտ և անհրաժեշտ անել, որպեսզի ձևավորվի Սահմանադրություններ առանձին գաղութների համար, ինչպես նաև՝ միության հիանալի մոդել» [1, 115]: Ջ. Ադամսն իր «Ինքնակենսագրությունում» գրում է, որ ինքը և Թ. Փեյնը բուռն կերպով վիճում էին դեմ առ դեմ: Ըստ Ջ. Ադամսի՝ Թ. Փեյնը դատապարտում էր իրեն «Մտքեր կառավարության մասին» գրքույկը հրապարակելու համար հենց այն պատճառով, որ դա հակասում էր նրա տեսակետներին [1,116]:

Ջ. Ադամսի համար ոչ միայն սկզբունքային, այլև քաղաքական կարևոր նշանակություն ուներ իշխանության մասին հարցը: Նա ուժը և իշխանությունը նույնականացնում էր, և պատահական չէ, որ այդ հասկացությունների համար օգտագործում էր միևնույն «power» եզրույթը: Դրա տակ նա հասկանում էր հարկադրանք, մարդկանց մի խմբի ազդեցությունը մյուսների վրա, մարդկանց կյանքի ու գործունեության վրա հսկողության իրականացում [5, 248]:

Ջ. Ադամսը աշխարհը դիտում էր որպես միմյանց հակամարտ երկու ոլորտներ, որոնցից առաջինում իշխում էին ազատությունը, օրենքը և իրավունքը, իսկ երկրորդում՝ ուժը և հարկադրանքը: Եթե առաջին ոլորտն աչքի է ընկնում պասսիվությամբ և միայն պաշտպանվում է, ապա

երկրորդը՝ ծայրահեղ հարձակողական է: Նա միաժամանակ այն կարծիքին էր, որ ուժը և իշխանությունը ինքնին չարիք չեն, քանի որ կառավարությունը ձևավորվում է ազատ ընտրության, համերաշխության և պայմանագրի հիման վրա՝ հասարակության ինքնապաշտպանության նպատակով: Այս խնդիրներին է նվիրված նրա «Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրության պաշտպանությունը» աշխատությունը: Նրանում Ջ. Ադամսը բարձրագույն օրենսդրությունը տեսնում էր իրավական նորմերը ներքևի ճնշումներից պաշտպանելու մեջ: Այս մտայնությունից ելնելով՝ նա արդարացնում էր ամերիկյան օրենսդիր բարձրագույն մարմնի երկպալատ լինելու հանգամանքը. դրանք պիտի ներկայացնեին ժողովրդի և սոցիալական խավի շահերը և միջնորդավորվեին ուժեղ, «չեզոք» գործադիր իշխանությամբ:

Ջ. Ադամսը երբեք չի ունեցել այն տեսակետը, որ ամերիկացիներն էապես տարբերվում են այլ ժողովուրդներից: Փոխարենը, նա պնդում էր, որ ամերիկացիները պատմության ընթացքում ենթարկվել են նույն ներքին և արտաքին ուժերին, որոնք ձևավորում և ապականում են մարդկային էությունը. նա պնդեց, որ նրանք դեռ պետք է զգուշանան՝ չդառնալ այս վտանգների զոհը:

Ջ. Ադամսը ընտրվեց գաղութների ներկայացուցիչների հանձնաժողովի անդամ, որին հանձնարարված էր կազմել Անկախության հռչակագիրը: Շատ տարիներ անց Թոմաս Ջեֆֆերսոնը Ջ. Ադամսին անվանեց «[Հռչակագրի] աջակցության սյունը Կոնգրեսի դահլիճում, [նրա] ամենակարող պաշտպանը տարբեր հարձակումներից, որոնց նա հանդիպեց» [4, 130]: Հուլիսի 3-ին Ջ. Ադամսը Աբիգեյլին գրեց, որ «ամենամեծ հարցը, որը երբևէ քննարկվել է Ամերիկայում, որոշվել է երեկ, և ավելի մեծ հարց գուցե երբեք չի որոշվել ու երբեք չորոշվի մարդկանց մեջ»:

Համագումարի ընթացքում Ջ. Ադամսը ընդգրկվեց իննսուն հանձնաժողովների կազմում՝ միաժամանակ նախագահելով քսանհինգը: 1776 թ. հունիսին Ջ. Ադամսը դարձավ Պատերազմի և զինամթերքի վարչության ղեկավար, որին հանձնարարված էր բանակի սպաների և նրանց շարքերի ճշգրիտ հաշվառումներ վարել՝ գաղութներում զորքերի տեղակայման և զինամթերքի մասին: Որպես խորհրդի նախագահ՝ Ջ. Ադամսը դե ֆակտո ռազմական քարտուղարն էր: Նա լայնորեն թղթակցում էր մայրցամաքային բանակի սպաների լայն շրջանակի հետ մատակարարման, զինամթերքի և մարտավարության հարցերով: Նա նաև պայմանագրերի պլանի հեղինակն էր, որը ուրվագծում էր Կոնգրեսի պահանջները Ֆրանսիայի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ջ. Ադամսի ակտիվ մասնակցությունը Մայրցամաքային կոնգրեսում

արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը, հատկապես «պայմանագրերի նախագծերի» մշակմանը, ստեղծեց քաղաքական գործչի համբավ, ով միշտ պատրաստ էր դիվանագիտական առաքելությամբ արտասահման մեկնել, թեև կարծում էր, որ դիվանագիտությունը չի համապատասխանում իր անմիջական բնույթին:

Ջ. Ադամսը մուտք գործեց Եվրոպայում գրեթե անհայտ դիվանագիտական ոլորտ, բայց հաստատակամությունը, մեծ գիտելիքներն ու ձեռք բերած փորձը թույլ տվեցին նրան հասնել լավ հաջողությունների, հատկապես Նիդեռլանդներում, և պատերազմի տարիներին ԱՄՆ դիվանագետների շրջանում զբաղեցնել երկրորդ տեղը Բ. Ֆրանկլինից հետո:

Հարվարդի շրջանավարտ, իրավաբան, հայտնի քաղաքական գործիչ, փորձառու դիվանագետ Ջ. Ադամսը կարծես ուներ բոլոր անհրաժեշտ որակները, որոնք պահանջվում էին «ազգի հոր»՝ Ջ. Վաշինգտոնի իրավահաջորդը լինելու համար:

Որպես Ամերիկայի առաջին փոխնախագահ և երկրորդ նախագահ, Ջոն Ադամսն իր կնիքը թողեց նոր ազգի և նրա կառավարության վրա: Գտնվելով Ջ. Վաշինգտոնի ֆեդերալիստական վարչակազմի և Թ. Ջեֆֆերսոնի դեմոկրատական կուսակցության մրցակցության միջև՝ Ջ. Ադամսը հաղթահարեց ներքին տարաձայնությունները և անձնական ընդդիմությունը, ինչպես նաև արտաքին պատերազմի շարունակական սպառնալիքը: Նախագահի պաշտոնում նա առաջին հերթին իրավաբան էր և առաջնորդվելով խորը մտահոգությամբ ժողովրդի իրավունքների ու բարօրության համար՝ Ջ. Ադամսն ընդգծեց յուրաքանչյուր անհատի պատասխանատվությունը և օրենքի ու կարգի կարևորությունը կառավարությունում:

Գրականություն

1. Bernstein R. B. The Education of John Adams. Oxford University Press, 2020.
2. Ferling J. E. John Adams: A Life. Tennessee, 1992.
3. Фомина Ю. М., Джон Адамс. Брянский государственный университет им. академика И. Г. Петровского. Номер 2. 2006, с. 51-74.
4. McCullough D. John Adam. New York, 2001.
5. Մովսիսյան Ֆ. Մասոնները և ամերիկյան հեղափոխությունը, հ. 1, Երևան, 2015:
6. Stewart D. O. George Washington: The Political Rise of America's Founding Father. Dutton, 2021.

«Отец-основатель» американского государства Джон Адамс

Джилавян Гаяне
Факультет гуманитарных наук,
«История»,
руководитель магистерской диссертации:
д.и.н., профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *Джон Адамс, американская революция, «Отцы-основатели», война за независимость*

Джон Адамс постепенно стал участвовать в американской революции, сначала как юрист, затем как делегат Конгресса и дипломат; его роль в международных отношениях Америки в революционные и послереволюционные годы неоценима.

Цель работы - определить место «отца-основателя» Джона Адамса в исторических событиях первых десятилетий существования США, показать, как судьба этого деятеля отражает поворотные моменты эпохи основания Соединенных Штатов и каков его вклад в американскую идеологическую и политическую традицию.

The "Founding Father" of the American State John Adams

Jilavyan Gayane
Faculty of Humanities,
"History",
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *John Adams, American Revolution, "Founding Fathers", War for Independence*

John Adams gradually became involved in the American Revolution, first as a lawyer, then as a delegate to Congress and as a diplomat; his role in American foreign relations during the revolutionary and post-revolutionary years is invaluable.

The purpose of the work is to determine the place of "Founding father" John Adams in the historical events of the first decades of the existence of the United States. Also the article highlights the fact of how his fate reflects the turning points of the founding era of the United States and what his contribution to the American ideological and political tradition is.

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ПСИХОЛОГИЯ ЛИЧНОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ

PERSONALITY PSYCHOLOGY AND COUNSELING PSYCHOLOGY

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման հոգեբանական գործոնների ուսումնասիրություն

Աբովյան Արմինե
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիմյան

Հանգուցային բառեր. *ամուսնական կոնֆլիկտ, էմոցիոնալ կյանք, դերեր, ոլորտ, ծնող-կրթական, ինտիմ-սեքսուալ, ընտանիք, արժեքներ*

Հոգեբանության մեջ կոնֆլիկտը հասկացվում է որպես «հակառակորդների կամ փոխազդեցության առարկաների հակադիր նպատակների, շահերի, դիրքորոշումների, կարծիքների կամ տեսակետների բախում» [2, 174]: Փոխազդեցության առարկան կարող է լինել ինչպես անհատ, այնպես էլ երկու կամ ավելի անձինք: Վերջին դեպքում կոնֆլիկտը կոչվում է միջանձնային: Հենց այսպիսի կոնֆլիկտն է ուսումնասիրվում այս հետազոտության շրջանակներում, որտեղ քննարկվելու են ամուսնական կոնֆլիկտները:

Հետազոտողները կարծում են, որ խումբը, մասնավորապես ընտանիքը, կառույց է: Այս կառուցվածքը գտնվում է քվազի մշտական հավասարակշռության վիճակում, այսինքն՝ հավասարակշռությունը պարբերաբար խախտվում է ներքին կամ արտաքին պատճառների ազդեցության տակ: Երբ հավասարակշռությունը խախտվում է, խմբի կառուցվածքը խախտվում է: Հետագայում նա փնտրում է նոր հավասարակշռության վիճակ:

Ամուսնական կոնֆլիկտի կարևոր գործոններն են ամուսինների որոշակի անհատական հատկանիշները, որոնք կոչվում են կոնֆլիկտային անհատականության որակներ: Կոնֆլիկտային անհատականության որակները ներառում են հետևյալը [1].

- Սեփական կարողությունների և հմտությունների ոչ համարժեք ինքնագնահատականը, որը կարելի է և՛ գերագնահատել, և՛ թերագնահատել: Երկու դեպքում էլ դա կարող է հակասել ուրիշների համարժեք գնահատականին, ինչը հիմք է ստեղծում կոնֆլիկտի համար:
- Հնարավոր և անհնարին դեպքում ամեն գնով գերակայելու ցանկություն:

- Մտածողության, հայացքների, համոզմունքների պահպանողականություն, հնացած ավանդույթները հաղթահարելու չկամություն:
- Սկզբունքներին չափազանց մեծ հավատարմություն և պարզամտություն հայտարարություններում և դատողություններում, ճշմարտությունն ամեն գնով ասելու ցանկություն:
- Հուզական անհատականության գծերի որոշակի շարք՝ անհանգստություն, ագրեսիվություն, համառություն, դյուրագրգռություն:

Ամուսնական հարաբերություններում կոնֆլիկտի աստիճանի կարևոր գործոն կարող է լինել ամուսինների կյանքի արժեքների համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը:

Անհատականության արժեքային կողմնորոշումները (նրա արժեքների համակարգը) կամայական բան չեն: Դրանք հիմնականում հիմնված են անհատի ձևավորված կարիքների, նրա ցանկությունների, ձգտումների վրա: Գործունեության մոտիվացիան բխում է նաև անհատի արժեքային համակարգից, որը որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտության գիտակցված հիմնավորումն է: Անձնական արժեքային կողմնորոշումները առաջատար դեր են խաղում որոշումների ճնշող մեծամասնության կայացման գործընթացում:

Արժեքային համակարգը անհատին հնարավորություն է տալիս որոշել, թե ինչն է իր ամուսնական և ընտանեկան կյանքում կարևոր: Այդպիսի արժեքներ կարող են լինել երեխաները, նրանց առողջությունը և բարեկեցությունը. սերը, ջերմությունը, քնքշությունը, զուգընկերոջ կողմից հոգատարությունը, ընտանիքի նյութական բարեկեցությունը և բավարար կենսապայմանները, ամուսնության մեջ սեռական կյանքից բավարարվածությունը, ինչպես սեփական, այնպես էլ զուգընկերոջ առողջությունը. լավ հարաբերությունները երկու կողմերի ծնողների և հարազատների հետ, սիրած գործին, սիրելի մասնագիտությանը, մասնագիտական հաջողությանը և կարիերային ամբողջությամբ նվիրվելու հնարավորությունը [3]:

Այսպիսով, ամուսինների տարբերություններն իրենց հայացքների և պատկերացումների մեջ շատ բազմակողմանի են: Այս անհամապատասխանությունները հիմնականում կապված են անհատական արժեքային համակարգերի տարբերությունների հետ և ազդում են ամուսինների միջև կոնֆլիկտների վրա:

Ուսումնասիրելով տեսական գրականությունը՝ մենք որոշեցինք բացահայտել, թե որոնք են ամուսինների պատկերացումների առանձնահատկությունները միմյանց և ընտանեկան կյանքի մասին՝ օգտագործելով «Դերերի ակնկալիքները և պահանջները ամուսնության մեջ» («ROP»)

մեթոդաբանությունը (մշակված Ա. Ն. Վոլկովայի կողմից):

Հետազոտվողները եղել են 5-15 տարվա ամուսնական փորձ ունեցող 25 ամուսնական զույգեր (50 անձ): Հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագրի տեսքով:



Ինչպես երևում է տրամագրից, ամուսինների համար առավել նշանակալիցներն են.

1) ծնողական-դաստիրակչական ոլորտը.

2) սոցիալական գործունեության ոլորտը.

3) ինտիմ-սեռական ոլորտը:

Տղամարդկանց մոտ ինտիմ-սեքսուալ արժեքի արտահայտվածությունը զարմանալի չի թվում, քանի որ մոտ 30 տարեկանում տղամարդիկ սեռական ակտիվության բարձր մակարդակ ունեն: Հասարակական գործունեության ոլորտի կարևորությունը նույնպես հասկանալի է, քանի որ տղամարդիկ ավանդաբար մեծ նշանակություն են տալիս մասնագիտական իրացման ոլորտին: Ծնողական-դաստիարակչական արժեքի բարձր նշանակությունը, որը, պարզվեց, մեծ նշանակություն ունի, մեկնաբանություն է պահանջում: Հիշեցնենք, որ բոլոր հարցված զույգերն ունեն երեխաներ, իսկ երեխաները 15 տարեկանից բարձր չեն: Ընտանեկան այս արժեքի նշանակությունը հայրերի համար կարող է վկայել երեխաների հանդեպ պատասխանատվության բարձր մակարդակի, նրանց դաստիարակության կարևորության և նշանակության մասին: Հայրերը քաջատեղյակ են ներկա ժամանակի բարդություններին և երեխային նա-

խապատրաստելու անհրաժեշտությանը այն բանի համար, որ նա կարող է գտնել իրեն, գտնել իր տեղը ժամանակակից բարդ աշխարհում:

Կանանց համար առավել նշանակալից են.

1) կենցաղային,

2) ամուսնու հետ անձնական նույնականացում,

3) ծնողական-դաստիրակչական,

4) արտաքին գրավչություն:

Այս արժեքների կարևորությունը կանանց համար մեզ արտասովոր չի թվում: Ավանդաբար կանանց համար կարևոր էր տան (կյանքի) և երեխաների դաստիարակության ոլորտը: Բացի այդ, ամուսնացած կանանց համար տղամարդու հետ մտերմությունը, նրա հետ ընդհանուր էմոցիոնալ կյանքը շատ կարևոր է: Եվ, իհարկե, բնական է, որ կանանց մեծ մասը մեծ ուշադրություն է դարձնում արտաքինի (իրենց և զուգընկերոջ) կարևորությանը:

Կարևոր է նշել ամուսինների և կանանց նախասիրությունների տարբերությունները: Հատկանշական է, որ տղամարդիկ ավելի շատ շեշտը դնում են սեռական ոլորտի վրա, քան կանայք (20 %-ով), ինչը մեծապես պայմանավորված է տարիքային հատկանիշներով, քանի որ, ինչպես գիտեք, կանացի սեքսուալությունը սկսում է աճել 35-ից հետո, և հենց այս տարիքից է, որ տղամարդը. սկսում է մարել: Մեր ուսումնասիրվող զույգերը դեռ չեն անցել այս տարիքը:

Կանանց համար զգալիորեն ավելի կարևոր է զուգընկերոջ հետ անձնական նույնականացումը՝ որպես ընտանեկան արժեք (50 %-ով): Սա համահունչ է այն փաստին, որ ամուսնական կյանքի էմոցիոնալ կողմն ավելի կարևոր է կանանց համար, քան տղամարդկանց, որոնք հիմնականում ավելի ռացիոնալ են:

Կանանց համար ընտանեկան կյանքի կենցաղային կողմը կարևոր է ավելի շատ (20 %-ով), քան տղամարդկանց համար, ինչը վկայում է ժամանակակից հայկական ընտանիքներում դեռևս ավանդական ապրելակերպի մասին, որտեղ առօրյան ավելի կարևոր է կնոջ համար (նա մտածում է դրա մասին ավելի շատ և ավելի շատ զբաղվում դրանով), քան տղամարդու համար:

Ամփոփելով կատարած տեսական և հետազոտական աշխատանքները՝ կարող ենք եզրակացնել, որ հետևյալ գործոնները դրական ազդեցություն են ունենում ամուսնական զույգի միջև կոնֆլիկտի նվազեցման վրա.

- ամուսինների արտաքին տեսքի արժեքի կարևորությունը.
- ամուսինների արժեքների հետևողականությունը ինտիմ-սեքսուալ,

կենցաղային, ծնող-կրթական, ինչպես նաև սոցիալական գործունեության ոլորտներում.

- ամուսնու դերի համարժեքությունը ծնող-կրթական և սոցիալական գործունեության ոլորտում.
- կնոջ դերի համարժեքությունը կենցաղային և սոցիալական գործունեության ոլորտում:

Գրականություն

1. Марцинковская И.Д., Цветков В.Л. Гришин А.А. Конфликтология. Учебное пособие. – Москва: Фит. 2001.
2. Юрчук В.В. Современный словарь по психологии. – Мн.: Элайда, 2000.
3. William J. Lederer, Don D. Jackson Mirages of Marriage Paperback. Publisher W. W. Norton & Company, 1990, p. 476.

Изучение психологических факторов супружеских конфликтов

Абовян Армине

Факультет общественных наук,

«Психология личности и психологическое консультирование»,

руководитель магистерской диссертации:

к. п. н., доцент А. Авагимян

Резюме

Ключевые слова: *супружеский конфликт, эмоциональная жизнь, роли, сфера, родительско-воспитательная, интимно-половая, семья, ценности*

Конфликты являются неизбежным явлением человеческой жизни, и в этом плане семейные конфликты, особенно супружеские конфликты, не являются исключением. Супружеские конфликты являются одним из этапов развития семьи как особого образования, наделенного особыми качественными характеристиками и не сводящегося к числу ее членов. Этот этап характеризует необходимость и возможность развития семьи, преодоления противоречий.

В статье представлена общая характеристика супружеского конфликта, психологические факторы, влияющие на уровень конфликтности. Было проведено исследование, в результате которого были выявлены личностные качества супругов и особенности их взаимоотношений, влияющие на уровень конфликтности в супружеской паре.

The Study of Psychological Factors of Marital Conflicts

Abovyan Armine
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: H. Avagimyan
PhD in Psychology, Associate Professor

Summary

Key words: *marital conflict, emotional life, roles, sphere, parental-educational, intimate-sexual, family, values*

Conflicts are an inevitable phenomenon of human life, and in this regard, family conflicts, especially marital conflicts, are no exception. Marital conflicts are one of the stages in the development of the family as a special entity endowed with special qualitative characteristics and not limited to the number of its members. This stage characterizes the necessity and possibility of family development, overcoming contradictions.

The article presents a general description of the marital conflict, psychological factors affecting the level of conflict. A research was conducted, as a result of which the personal qualities of the spouses and the characteristics of their relationship, affecting the level of conflict in a married couple, were revealed.

Նպատակադրման հիմնախնդիրը պատանիների մոտ հետպատերազմյան շրջանում

Ասլիկյան Անահիտ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *նպատակադրման հիմնախնդիր, կողմնորոշում, նպատակադրման գործընթաց, պատերազմ, հետպատերազմյան շրջան, կենտրոնացում, պլանավորում, ինքնակազմակերպում*

Նպատակներն օգնում են մեզ բացահայտել և կյանքի կոչել մեր թաքնված տաղանդներն ու լավագույն որակները: Կյանքում նպատակներ ունենալու ամենակարևոր պատճառը ինքնազարգացումն է և ինքնակատարելագործումը:

Հասուն անձի հիմնական չափորոշիչ կարող ենք դիտարկել սեփական, գիտակցաբար դրված նպատակներով ղեկավարվելու հատկությունը, անկախ ներգործող պարագաներից վարվելակերպը: Պատանեկության տարիքում նման կամային որակները, ինչպիսիք են նպատակներին հասնելու համար համառությունը, դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ձեռք են բերում զգալի ազդեցություն: Բացի այդ, հենց այդ շրջանում ստեղծվում են բարենպաստ պայմաններ սեփական կյանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման համար:

Նպատակադրումը վերաբերում է հոգեսոցիալական իրավասության կենսականորեն կարևոր հմտություններից մեկին: Ժամանակավոր հեռանկարի խանգարումը և նպատակադրման թերզարգացումը կարող են խթանել կախվածություն առաջացնող վարքագծի ձևավորմանը [1]:

Եթե կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար կարևոր է սովորել ընդունելու այն նպատակները, որոնք դնում են իրենց առջև մանկավարժները ուսումնական գործունեության մեջ, ապա պատանի տարիքում սովորողները արդեն ընդունակ են դառնում ղեկավարվել այն առաջադրանքներով և նպատակներով, որոնք ինքնուրույն դնում են իրենց առջև, սկսում են խորհել իրենց կյանքի արժեքների մասին: Ինչպես պնդում է հոգեբան Լ. Ի. Բոժովիչը, 12-14 տարեկանում ծագում է նպատակադրման կարողությունը, իսկ 15-17 տարեկանում՝ «կյանքի հեռանկարը» [3]:

Երբեմն իրենց ցանկությունների և դրանց բավարարման հնարավորությունների միջև ծագած կոնֆլիկտը ապրող պատանիները կանգնում են հատուկ, ոչ երևակայական, այլ իրական կյանքի փնտրտուքի ճանապարհին, որը հեռացնում է նրանց դրա բարենպաստ ընթացքից և խաթարում պատանու նորմալ զարգացման ընթացքը: Նման դեպքերում պատանիները թողնում են ուսումը, դպրոցը, նրանց ձգում է բակը, փողոցը, իրենց նման ընկերական շրջապատները: Պատանիների անբարենպաստ կատեգորիաների՝ անչափահաս հանցագործների, ալկոհոլիկների ընտանիքներից երեխաների, դպրոցական նևրոզներով պատանիների մոտ, լավ հայտնի է«վախ ապագայի առջև» ֆենոմենը:

Իր համար իսկապես կարևոր նպատակների նպատակադրման առջև չգիտակցված վախը պատանու համար փակում է ինքնահիրացման ճանապարհը: Ժամանակակից պատանիների հարցման ընթացքում ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ իրենց մոտ բացակայում են կոնկրետ նպատակներ դնելու և դրանք ի կատար ածելու հմտությունները:

Վերոնշյալի հետ կապված՝ կարևոր է սովորեցնել երիտասարդ սերունդին դնել հստակ նշված, նշանակալից նպատակներ, որոնք կբերեն դրական արդյունքի: Ճիշտ կառուցված արժեհամակարգը կխթանի պատանու համար ընտրության բարդ և հասակակիցների կողմից կպչուն առաջարկությունների իրավիճակներում վստահ վարքագիծ: Ալկոհոլին, թմրանյութերին և կպչուն վարքագծի այլ ձևերին կտրուկ «ոչ» ասելը, իր ընտրած առաջնահերթություններին և նպատակներին հստակ հետևելը կօգնի նրանց պահպանելու առողջությունը, հասնելու հոգեբանական բարօրության: Նպատակների վրա աշխատանքի ժամանակ արդիականացվում են իմաստային գաղափարները, որոնք ձևավորում են անձնային արգելքներ պատանիների՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման ներգրավման մեջ [2]:

Նպատակի հասկացությունը իր մեջ ներառում է մի քանի նշանակություններ.

1. գործունեության կանխատեսվող արդյունք,
2. ապագայի առարկայական պրոյեկցիա,
3. ցանկալիի սուբյեկտիվ կերպար, որը մարդու գիտակցության մեջ արծարծում է ապագայի իրադարձությունների արտացոլանքը:

Այսպիսով, պատանու՝ անձի արժեհամակարգի վրա իր հետքն է թողնում ոչ միայն պատերազմական բուն գործողությունների ընթացքն, այլև՝ հետպատերազմյան բարդ ժամանակաշրջանը, երբ հասարակության անդամների շրջանում փոխվում է անձնային արժեքների և գնահատումների

համակարգը: Առաջ են գալիս էկզիստենցիալ բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ո՞վ եմ ես, ի՞նչ կարող եմ անել, ո՞ւմ կարող եմ վստահել, ինչպե՞ս պիտի ապրեմ, ի՞նչ կարող եմ փոխել և այլն, որոնք պահանջում են ոչ միայն անհապաղ, այլև ոչ ավանդական պատասխաններ ու լուծումներ:

Քանի որ այդ շրջանին հատուկ է հասարակական նոր իրողությունները ընկալելու, պատերազմի հետևանքները վերապրելու աճող պահանջմունքը և դրան ուղեկցող՝ անձի արժեհամակարգի որոշակի փոխակերպումը, ուստի պատահական չէ, որ հասարակության մեջ անձի սոցիալականացման և կենսագործունեության հետպատերազմման շրջանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում հասարակական տարբեր գիտակարգերի համար: Այդ իսկ պատճառով հիմնախնդրի ուսումնասիրման հոգեբանական տեսանկյունն առավելապես ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է ներառել նաև հասարակագիտական և մարդաբանական մի շարք գիտությունների, մասնավորապես, ազգագրության, պատմության, սոցիոլոգիայի մեթոդաբանությունն ու գիտական խնդիրների լայն շրջանակները:

Հետպատերազմական շրջանը բնութագրվում է հոռետեսական տրամադրությունների զարգացմամբ, պատվասիրության անկումով, լարվածությամբ, անվստահությամբ վաղվա օրվա նկատմամբ, սթրեսներով ու կոնֆլիկտներով, հսկայական ծավալների հասնող միգրացիոն գործընթացներով, որոնք կազմալուծում են ազգի գոյապահպանության հիմքերը: Հասարակության կոլեկտիվ կենսագործունեության գրեթե բոլոր՝ տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ազգային և այլ բնագավառներում կարելի է տեսնել անոմիկ դրսևորումներ, որոնք հանգեցնում են, ընդհանուր առմամբ, հասարակության ապակայունացմանը և, մասնավորապես, Ես-ի արժեհամակարգի ճգնաժամին: Նման միտումների պայմաններում ակնհայտ է դառնում հոգեպաթոլոգիկ և սոցիալապես կենտրոնախույս երևույթների զարգացման հնարավորությունը:

Ուսումնասիրելով տեսական գրականությունը, մենք որոշեցինք բացահայտել, թե որոնք են հետպատերազմյան շրջանում պատանիների նպատակադրումները, այդ պատճառով նրանց հետ անցկացրեցինք Ա. Ա. Կարմանովի «Նպատակ-Միջոց-Արդյունք» և Է. Յու. Մանդրիկովայի «Գործունեության ինքնակազմակերպում» մեթոդիկաները:

Հետազոտվողները եղել են պատանիներ, թվով 40, որից 20-ը՝ աղջիկ, 20-ը՝ տղա:

Հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագրերի տեսքով:



Տրամագիր 1. Ըստ Է. Յու. Մանդրիկովայի «Գործունեության ինքնակազմակերպում» մեթոդիկայի

Ինչպես երևում է տրամագիր 1-ից, աղջիկների մոտ ավելի բարձր են հետևյալ ցուցանիշները.

1. Ինքնակազմակերպում,
2. Կողմնորոշում դեպի ներկա,
3. Պլանավորում:

Տղաների մոտ բարձր են հետևյալ ցուցանիշները.

1. Պլանավորում,
2. Կողմնորոշում դեպի ներկա,
3. Հաստատակամություն:



Տրամագիր 2. Ըստ Ա. Ա. Կարմանովի «Նպատակ-Միջոց-Արդյունք» մեթոդիկայի:

Ինչպես պարզ դարձավ տրամագիր 2-ի արդյունքներից, թե՛ աղջիկների, և թե՛ տղաների մոտ նպատակների սանդղակը հավասար է ստացվել իրենց մոտ, և նրանք ունեն հետևյալ միավորները, որոնք մեկնաբանվել են այս կերպ.

Նպատակ

▪ Մարդն իր համար իրատեսական նպատակներ է դնում, ձեռքբերման համար կազմաձևված նպատակադրման շարժառիթները և ընդհանուր առմամբ գործողությունները համակարգված են: Գրեթե այն ամենը, ինչ անում է մարդը, նա կարող է բացատրել նպատակահարմարության տեսանկյունից: Հակված չէ պարապ ժամանց ունենալ: Վճռականությունը կապված է նպատակների ձևավորման հեշտության, անտարբերության հետ:

Միջոց (աղջիկներ)

▪ Որպես կանոն՝ սուբյեկտը բավականին սթափ գնահատում է իր գործունեության արդյունքները: Նա չի գերագնահատում, սակայն չի էլ թերագնահատում իր արդյունքները: Իրադարձությունների վերաբերյալ այլ մարդկանց գնահատականներում նա բավականին անաչառ է: Անձնական աճը սովորաբար դինամիկ է:

Միջոց (տղաներ)

▪ Վարքագիծը չափազանց ինքնաբուխ է: Օգնություն չի խնդրում ուրիշներից, նախընտրում է առաջնորդել նրանց: Իր գործողություններում սյուբեկտը ոչ միայն ուշադրություն չի դարձնում վարքագծի առկա

չափանիշների վրա, այլև հաճախ գործում է դրանց հակառակ: Ավելացել է ագրեսիվությունը, որը դրսևորվում է ինչպես բաց, այնպես էլ թաքնված ձևով:

Արդյունք (աղջիկներ)

▪ Մարդը բավականին ազատ է միջոցների ընտրության հարցում, նրա վարքագիծը այնքան ինքնաբուխ է, որքան պահանջում է իրավիճակը: Բավական լավ է էներգետիկ ներուժը: Սիմպաթիկ և պարասիմպաթիկ հավասարակշռություն: Ոչ ագրեսիվ, բայց ոչ կոնֆորմալ: Վարքագիծը արհամարհական չէ, բայց այն արգելափակված չէ բարդույթներով, կասկածամտությամբ, նեգատիվիզմով:

Արդյունք (տղաներ)

▪ Որպես կանոն, մարդը բավականին սթափ գնահատում է իր գործունեության արդյունքները: Նա չի գերագնահատում, սակայն չի էլ թերագնահատում նաև արդյունքները: Իրադարձությունների վերաբերյալ այլ մարդկանց գնահատականներում նա բավականին անաչառ է: Անձնական աճը սովորաբար դինամիկ է:

Այսպիսով, համեմատելով մեր տեսական և հետազոտական աշխատանքի արդյունքները, մեզ պարզ դարձավ, որ մինչ պատերազմը և դրանից հետո այդքան էլ էական փոփոխություններ չկան պատանիների նպատակադրման հետ կապված:

Աղջիկների մեծամասնության մոտ նպատակները կապվում են ուսման, լավ աշխատանք ունենալու հետ:

Տղաների մոտ էլ նույնպես ունենան լավ աշխատանք, կարիերա և, ամենակարևորը, կատարեն իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ:

Այսինքն, միակ էական տարբերությունը, այն էր հետպատերազմյան շրջանում, որ պատանիները, բոլորն էլ գլխավոր նպատակ են կազմել, որ ամեն ինչ պետք է անեն, որ հզորացնեն մեր հայրենիքը, ամեն բան անեն, որ ունենաք հզոր բանակ, ունենանք տնտեսապես հարուստ պետություն, և, ամենակարևորը, նրանք ասացին, որ պետք է անպայման հետ վերադարձնենք մեզնից խլված դիրքերը, տարածքները:

Ամփոփելով կատարած տեսական և հետազոտական աշխատանքները՝ կարող ենք եզրակացնել, որ իրենց նպատակներին արդյունավետ հասնելու համար պատանիները պիտի.

- համոզվեն՝ ինչ կարևոր դեր են խաղում նպատակները մարդու կյանքում, նրա անձի զարգացման, ապագայի մասին պատկերացումների մեջ,
- սովորեն գիտակցել իրենց կարիքները և ինքուրույն դնեն նպատակներ,

- կարողանան հաշվի առնել հետևյալ պահանջները նպատակադրման մեջ. այն պիտի լինի հստակ, չափելի, հասանելի, արդիական հենց կոնկրետ մարդու համար, սահմանափակված լինի ժամանակով և ամրապնդված ռեսուրսներով,
- յուրացնեն պլանավորման և հսկողության հմտությունները,
- սովորեն կառուցել ապագայի անձնային ծրագիր, որն իր մեջ կներառի տեղեկատվություն այն մասին, թե ինչի կցանականա հասնել մեկ, երեք, յոթ և ալյն տարուց:

Գրականություն

1. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, «Բուկինիստ», 2016:
2. Պետրովսկի Ա. Վ., Ընդհանուր հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1974:
3. Божович Л.И. Личность и её формирование в детском возрасте / Л.И. Божович. - М.: Просвещение, 1968. – 278 с.
4. Кон И. С. М. «Психология юношеского возраста», Просвещение 1989г. 256 с.
5. Юркевич, В.С. Об индивидуальном подходе в воспитании волевых привычек / В.С. Юркевич. – Москва : Знание, 1986. – 80 с.
6. Гавеля В. Л. Целеполагание в структуре социальной деятельности человека. Волгоград: Издательство Волгоградского государственного университета, 1998.

Объективная проблема молодежи в послевоенный период

Асликян Анаит
Факультет общественных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
к. п. н., доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *проблема целеполагания, ориентация, процесс целеполагания, война, послевоенный период, концентрация, планирование, самоорганизация*

Цель – это желаемый результат, который человек представляет, планирует и предпринимает для достижения личной или организационной желаемой конечной точки в случае ожидаемого развития.

Многие люди стремятся достичь своих целей в ограниченные сроки, устанавливая крайние сроки.

И постановка целей идеально включает в себя постановку конкретных, значимых, достижимых, подходящих и ограниченных по времени целей. Работа над теорией постановки целей предполагает, что она может служить эффективным средством достижения успеха, обеспечивая четкое понимание подростками того, что им нужно сделать, чтобы достичь цели или помочь в достижении цели. На личном уровне процесс постановки целей позволяет молодым людям четко определить, а затем предпринять шаги для достижения своих собственных целей, особенно академических, финансовых или карьерных. Развитие молодежи, личности – главная составляющая целеполагания.

Таким образом, наличие цели важно, потому что цели имеют притягивающую силу, которая тянет нас вверх. Проблемы и трудности неизбежно возникают в жизни каждого из нас.

В статье представлены общие характеристики целеполагания подростков, психологические факторы, влияющие на уровень их целеполагания.

Было проведено исследование, в результате которого были выявлены личностные качества, психологическое состояние и цели молодежи в послевоенный период.

The Objective Problem of Young People in the Post-War Period

Aslikyan Anahit
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: V. Mirzoyan
PhD in Psychology, Associate Professor

Summary

Key words: *goal-setting problem, orientation, goal-setting process, war, post-war period, concentration, planning, self-organization*

The goal is the desired result that a person imagines, plans and undertakes to reach a personal or organizational desired end point, in the case of expected development.

Many people strive to achieve their goals within a limited time frame by setting deadlines.

And goal setting perfectly includes setting specific, meaningful, attainable, appropriate, and time-bound goals. Work on goal setting theory suggests that it can serve as an effective means of achieving success by ensuring that adolescents have a clear understanding of what they need to do to achieve or help achieve a goal. At the personal level, the goal-setting process allows young people to clearly define and then take steps toward their own goals, especially academic, financial, or career-related. The development of the personality is the main component of goal setting.

So, having a goal is important because goals have a pulling force that pulls us up. Challenges and difficulties inevitably arise in each of our lives.

The article presents the general characteristics of teenagers' goal-setting and the psychological factors that affect the level of their goal-setting process.

A research was conducted, as a result of which the personal qualities, psychological state and goals of the young people in the post-war period were revealed.

Ուսանողների ինքնիրացման հոգեբանական առանձնահատկությունները

Արամյան Ջուլիա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիմյան

Հանգուցային բառեր. *ինքնիրացում, հարմարում, ներուժ, դրդապատճառ, պահանջմունք, հիերարխիա*

Հոդվածում ներկայացված են անձի ինքնիրացման հոգեբանական առանձնահատկությունները ուսանողական շրջանում: Ուսանողական տարիքը շատ կարևոր ժամանակաշրջան է, որտեղ մարդը կարևոր որոշումներ է կայացնում իր համար՝ սկսած իր մասնագիտական ճանապարհից, անձնական կյանքի բարելավումից, նաև մեծահասակ կյանքի պլանավորումը: Ուսանողների ինքնիրացմանը հասնելու ճանապարհին առաջացած խոչընդոտները մեծ վտանգ են սպառնում, որի արդյունքում առաջանում է դժգոհություն սեփական անձի նկատմամբ: Ուսումնական և մասնագիտական նվաճումները կարևոր դեր են խաղում երիտասարդների կյանքում, հենց նրանք են օգնում ամրապնդելու հավատը իրենց և իրենց ունակությունների հանդեպ, օգնում հաջող ինքնադրսևորմանը ապագայում: Այնուամենայնիվ, անհատի հաջողությունը կարող է վտանգվել, երբ մարդը գիտակցաբար ձգձգում է կարևոր և հրատապ գործերի կատարումը, ինչպես նաև որոշակի պատճառներով որոշումներ կայացնելը:

Ինքնաիրացումը գործընթաց է, որը բաղկացած է սեփական հակումների, ներուժի, տաղանդի գիտակցումից: Ինքնիրացումը կոչվում է նաև բացարձակ իրականացում, իրականի մարմնավորում: Ինքնաիրականացման անհրաժեշտությունն ի սկզբանե բնության կողմից դրված է յուրաքանչյուր կոնկրետ անհատի մեջ: Մասլոուի ուսմունքի և «կարիքների հիերարխիայի» հայեցակարգի համաձայն՝ ինքնաիրացումը անհատի ամենավերին պահանջմուքն է: Անհատի ինքնաիրացման խնդիրը ի հայտ է գալիս վաղ մանկությունից և ուղեկցում անհատին իր ողջ կյանքի ճանապարհին: Նման խնդիրները հաղթահարելու համար պետք է շատ աշխատել այս ուղղությամբ, քանի որ դրանք ինքնուրույն չեն լուծվի: Ինքնաիրացման ամենամեծ թշնամին հասարակության կողմից պարտադրված

կարծրատիպերն են: Ուստի անձի ինքնաիրացման հասնելու ճանապարհին առաջին քայլը լինելու է հասարակության կողմից պարտադրված չափանիշներից ու օրինաչափություններից ազատվելը: Ինքնաիրացում է, երբ անհատը ձգտում է առավելագույնս արդյունավետ կիրառել սոցիալականացման օբյեկտիվ պայմանները և իր սուբյեկտիվ կարողություններն ու ներուժը՝ սահմանված նպատակներին հասնելու համար: Ինքնաիրացման անհրաժեշտությունը ոչ միայն ինքնաճանաչման բարելավման ցանկության մեջ է, այլ նաև դրսևորվում է մոտիվացիայի, աշխատանքի և մշտական աճի արդյունքում: Մարդիկ, ովքեր գիտակցել են իրենց ներքին ռեսուրսները, սովորաբար կյանքում կոչվում են կայացած: Անհատի ինքնաիրացման հոգեբանական խնդիրը պարունակում է անհամապատասխանություն անհատի էներգիայի, մտավոր կարողությունների և նրա ակտուալացման մակարդակի միջև: Այսինքն՝ կյանքի տարբեր իրավիճակների պատճառով սուբյեկտի իրական ներուժը կարող է չհամընկնել նրա գործունեության վերջնական արդյունքի հետ, ինչը հաճախ հանգեցնում է նրա կյանքից դժգոհության զգացմանը [1, 43-52]: Ուսանողների մասնագիտական զարգացումը անհատականության «ձևավորման» դինամիկ գործընթաց է, որը նախատեսում է մասնագիտական կողմնորոշման, մասնագիտական իրավասության և մասնագիտական կարևոր որակների ձևավորում, մասնագիտորեն նշանակալի հոգեֆիզիոլոգիական հատկությունների զարգացում, բարձրակարգ գործունեության օպտիմալ ուղիների որոնում: Ե. Ս. Միտինան առանձնացնում է մասնագիտական գործունեության ձևավորման երկու մոդել.

1. հարմարվողական մոդել, որում մարդու ինքնագիտակցության մեջ գերակշռում է մասնագիտական աշխատանքը արտաքին հանգամանքներին ստորադասելու միտումը՝ մասնագիտական խնդիրների, կանոնների և նորմերի լուծման ալգորիթմների կատարման տեսքով,
2. մասնագիտական զարգացման մոդել, որը բնութագրվում է անհատի՝ սահմանված պրակտիկայի սահմաններից դուրս գալու, իր գործունեությունը գործնական վերափոխման առարկայի վերածելու և դրանով իսկ իր մասնագիտական կարողությունների սահմանները հաղթահարելու ունակությամբ [6]:

Ռ. Ա. Զոբովը և Վ. Ն. Կելասևը առանձնացրել են ինքնաիրացման վրա ազդող գործոնների երկու խումբ.

1. կախված անձից (արժեքային կողմնորոշումներ, ինքնակազմակերպման պատրաստակամություն, մտածողության ճկունություն, կամք և այլն),
2. անկախ անձից (սոցիալական իրավիճակ, կենսամակարդակ, նյու-

թական անվտանգություն, լրատվամիջոցների ազդեցությունը մարդու վրա, էկոլոգիական միջավայրի վիճակը):

Ի. Պ. Սմիրնովի տեսանկյունից ինքն իրեն, իր ներուժը գիտակցելու որոշիչ գործոնը ոչ թե մարդու բնական հակումներն են, այլ արտաքին միջավայրի կողմից ձևավորված անձնական հատկությունները՝ որպես կրթության և դաստիարակության արդյունք, աշխատանքի ուսուցում: Է. Վ. Սելեզնևան շեշտում է, որ մարդը կարող է ինքնադրսևորվել որպես եզակի ամբողջական անձնավորություն միայն ուրիշների հետ շփման ժամանակ: Ըստ Կատանի՝ անձի ինքնաիրացման հիմնական պայմանը մարդու մոտ զարգացած ինքնագիտակցության և արտացոլման առկայությունն է՝ իրեն և շրջապատող աշխարհը, իրական և պոտենցիալ կարողություններն ու հնարավորությունները, հետաքրքրություններն ու արժեքները, անձնական և մասնագիտական աճի հեռանկարները ճանաչելու արդիականացված ունակությամբ [2]:

Անհատն ամեն օր բացահայտում է իրեն աշխատանքում, շփման մեջ, հոբբիներում և այլն: Շատ հոգեբաններ կարծում են, որ միայն ստեղծագործական գործունեության դեպքում է անհատը միացնում ավելորդ ակտիվությունը՝ չհետապնդելով կոնկրետ նպատակ: Այլ կերպ ասած՝ ստեղծագործական գործունեությունը հանդես է գալիս որպես կամավոր գործունեություն, որի համար անհատը պատրաստ է ծախսել իր ողջ ներուժը, իր ողջ ուժը՝ արտահայտելու իրեն և իր հնարավորությունները: Եվ հետևյալ համամարդկային արժեքները, մեխանիզմներն ու կարիքները անհատին դրդում են ինքն իր վրա տքնաջան և երկարատև աշխատանքի.

- թիմում ճանաչման անհրաժեշտություն,
- ընտանիք կազմելու ցանկություն,
- սպորտում հաջողությունների հասնելու կամ ֆիզիկապես զարգացած դառնալու ցանկություն,
- արդի մասնագիտության, կարիերայի աճի և բարձր վաստակով աշխատանքի անհրաժեշտություն,
- անընդհատ կատարելագործվելու ցանկություն,
- սոցիալական կարգավիճակ ունենալու ցանկություն:

Ինքնաիրացման ամենակարևոր պայմանը ինքնազարգացումն է, քանի որ հաջող ինքնաիրացման համար անհատը պետք է տիրապետի բարոյական և հոգևոր արժեքների: Ուսուցչի ինքնաիրացումը, օրինակ, ենթադրում է կայուն բարոյական ինքնակատարելագործում, մշտական ստեղծագործական ինքնազարգացման ձգտում: Ինքնազարգացում է, երբ անհատն ինքն է փոխակերպվում իր «ես»-իդեալի ուղղությամբ, որը հայտնվում է արտաքին գործոնների և ներքին պատճառների ազդեցու-

թյան տակ: Անձնական ինքնազարգացումը կապված է անհատի կյանքի հետ, որի շրջանակներում այն իրականացվում է: Ահա թե ինչու արդեն նախադպրոցական տարիքից, այն պահից, երբ երեխան կառուցում է իր «ես»-ը, նա դառնում է իր կյանքի առարկան կամ մոդելը, քանի որ սկսում է նպատակներ կառուցել, հնազանդվել սեփական ցանկություններին և ձգտումներին՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ուրիշների պահանջները: Ինքնակատարելագործման գործընթացներում առանձնանում են անհատի ինքնաիրացման մակարդակները.

- իրականացվող գործունեության ագրեսիվ մերժում, այսինքն՝ անհատը չի ցանկանում զբաղվել այս տեսակի գործունեությամբ, բայց դա անհրաժեշտ է,
- աշխատանքային գործունեությունից խաղաղ խուսափելու ձգտում, այսինքն՝ անհատն ընտրում է այլ մասնագիտություն,
- աշխատանքային գործունեության կատարումը հետևում է օրինաչափությանը, կամ, որոշակի մոդելի համաձայն, այս մակարդակը կոչվում է պասսիվ,
- անհատի ձգտումը՝ կատարելագործել կատարված աշխատանքը,
- անհատի ձգտումը՝ բարելավելու իր ընթացիկ աշխատանքը կամ գործունեությունը ընդհանրապես. այս մակարդակը կոչվում է ստեղծագործ կամ գյուտարար:

Կա նաև մակարդակների մեկ այլ տարբերակում. այն ներկայացնում է ինքնաիրացման հետևյալ մակարդակները.

1. ցածր կամ պարզունակ կատարողականություն,
2. միջին-ցածր կամ անհատական կատարողականություն,
3. միջին-բարձր կամ դերերի իրականացման և նորմերի ներդրում հասարակության մեջ անձնական աճի տարրերով:

Յուրաքանչյուր մակարդակ ունի իր նպատակները և դրանց հասնելու խոչընդոտները: Ինքնաիրացման գործընթացը չի գործում որպես զարգացած «իդեալի» ձեռքբերում՝ սեփական ողջ ներուժի «բացահայտման» միջոցով. այն անհատականության ձևավորման և ինքնակատարելագործման ակտիվ և անսահմանափակ գործընթաց է անհատի կյանքի ուղու ընթացքում [5]: Անհատի ինքնաիրացման ուսումնասիրությամբ զբաղվում են հոգեբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ: Այնուամենայնիվ, դեռևս չկա ինքնաիրացման միասնական հայեցակարգ: Ինքնաիրացումն ուսումնասիրելու դժվարությունը այն է, որ այն չի կարող ուղղակիորեն և օբյեկտիվորեն դիտարկվել, մենք կարող ենք միայն դիտարկել դրա հետևանքները և արդյունքները, որոնք արտացոլված են սուբյեկտի հոգեկանում: Ինքնաիրացումը դժվար է չափել իր բարձր

սուբյեկտիվության պատճառով, դժվար է վերահսկել փորձի ընթացքում հսկայական թվով գործոնների ազդեցության պատճառով, ինչը դժվարացնում է չափման և փորձարարական հետազոտության մեթոդների կիրառումը [4]: Շատ գործոններ կան, որոնք ազդում են ինքնաիրացման զարգացման վրա: Ինքնաիրացման ճանապարհին առկա խոչընդոտները երբեմն ստիպում են մարդուն հետ կանգնել զարգացման այդ ուղուց, ինչի հետևանքով կարող են զարգանալ նևրոզներ: Մասլոուի հետազոտությունները ցույց են տվել, որ նևրոտիկներն ինքնաիրացման չգիտակցված կամ թերի զարգացած պահանջմունք ունեցող մարդիկ են: Այսպիսով, մի կողմից հասարակությունն անհրաժեշտ է անձին, քանի որ ինքնաիրացվել նա կարող է միայն հասարակության մեջ, մյուս կողմից այն խոչընդոտում է ինքնաիրացմանը և հեռացնում մարդուն իր էությունից: Անհրաժեշտ է, որ մարդը հավասարակշռություն պահպանի այդ երկու մեխանիզմների միջև: Օպտիմալը, ըստ Մասլոուի, արտաքին աշխարհի հետ շփման մեջ նույնականացումն է արտաքին պլանում և օտարվածությունը ներքին պլանում: Միայն այդպիսի մոտեցումն է, որ թույլ կտա մարդուն արդյունավետ շփվել շրջապատի հետ և միևնույն ժամանակ մնալ այնպիսին, ինչպիսին կա: Մեծ ճանաչում է ստացել Մասլոուի դրույթն այն մասին, որ անձնային զարգացման նպատակն ինքնիրացման ցանկությունն է, մինչդեռ անձնային աճի դադարումը անձնային մահ է: Ընդ որում, հոգևոր աճին խանգարում են ոչ միայն ֆիզիոլոգիական պահանջմունքները, մահվան վախը, վատ սովորությունները, այլև խմբի ճնշումը, սոցիալական քարոզչությունը, որոնք նվազեցնում են մարդու ինքնավարությունն ու անկախությունը [3, 108-117]: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ուսանողների մոտ ինքնաիրացման առանձնահատկությունները: Հետազոտությանը մասնակցել են ՎՊՀ 30 ուսանող, 15 տղա, 15 աղջիկ: Հետազոտվողների մոտ ինքնաիրացման մակարդակը որոշելու համար կիրառել ենք Ա. Վ. Լազուկինի և Ն. Ֆ. Կալինայի (ՍԱՄՈԱԼ) «Անհատականության ինքնաիրացման ախտորոշման» մեթոդիկան: Մեթոդիկայից ստացված արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողական շրջանում ինքնաիրացման հետ կապված կան տարբերություններ՝ կապված արական և իգական սեռերի հետ: Ստորև ներկայացված տրամագրերում երևում է, թե կոնկրետ որ բաղադրիչներն են ավելի բարձր անհատապես տղա և աղջիկ ուսանողների մոտ՝



Տրամագիր 1

Ի տարբերություն աղջիկների՝ տղաների վարքը ավելի ճկուն է, որը պայմանավորված է շփման մակարդակով, ժամանակի մեջ կողմնորոշմամբ: Նրանց ինքնաիրացմանը նպաստում են նաև կրեատիվության առկայությունը, կոնտակտայնությունը և ինքնահասկացողությունը: Ժամանակի մեջ կողմնորոշումը թույլ է տալիս ավելի արագ ու արդյունավետ կերպով ադապտացվել տվյալ փոփոխվող միջավայրին: Տղաների շփվողականությունը նպաստում է փոխհարաբերությունների արդյունավետությանը և ինքնաիրացման մակարդակի բարձրացմանը, այն նաև ապահովում է վարքի ճկունությունը և կոնֆլիկտներից խուսափումը:



Տրամագիր 2

Պատկերն այլ է աղջիկ ուսանողուհիների մոտ: Նրանց մոտ, ի տարբերություն տղաների, շփման մակարդակը ցածր է, որը պայմանավորված է հասարակական նորմերով: Լինելով հասարակության լիիրավ անդամներ, աղջիկների վարքային դրսևորումները ավելի պասսիվ են, հետևաբար միջանձնային հարաբերությունները թույլ են: Աղջիկների մոտ դիմացինի ներաշխարհ թափանցելու ունակությունը, ի տարբերություն տղաների, բարձր մակարդակում է: Այս հատկանիշի շնորհիվ հեշտ է դառնում դիմացինին հասկանալը, ընդունելը և ճանաչելը: Նրանց ինքնահիրացման զարգացմանը նպաստում են ինֆորմացիայի անընդհատ որոնումը, կողմնորոշումը ժամանակի մեջ: Ինֆորմացիան ապահովում է վարքային ճիշտ դրսևորումները, ադապտացիան և կոնֆլիկտներից խուսափումը:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքների վերլուծությունը փաստում է, որ կա տարբերություն իգական և արական սեռերի ներկայացուցիչների ինքնահիրացման առանձնահատկությունների միջև: Տարբեր սեռերի մոտ ինքնահիրացման հասնելու միտումը դրսևորվում է տարբեր կերպ, ինչն էլ մեծապես պայմանավորված է հասարակական նորմերով և դաստիարակությամբ:

Գրականություն

1. Галажинский Э.В. Системная детерминация самореализации личности // Автореф. дисс.на соис. ученой степени д.п.н. – Барнаул: БГПУ, 2002, 43 с.
2. Кудинов С.И. Функционально-стилевой подход в исследовании самореализации личности. // Наука. Образование. Практика. Сборник материалов региональной межвузовской научно-практической конференции. – Уфа: Восточный университет, 2007, с. 37-41.
3. Маслоу А. Самоактуализация // Психология личности. Тексты / Под ред. Ю.Б. Гиппенрейтер, А.А. Пузырея. – Москва: Изд-во МГУ, 1982, с. 108-117.
4. http://www.relga.ru/Environ/WebObjects/tgu-www.woa/wa/Main?textid=2092&level1=main&level2=articles
5. https://psihomed.com/samorealizatsiya/
6. https://ik-ptz.ru/exam-tests---2014-for-literature/professionalnaya-samorealizaciya-lichnosti-professionalnoe-stanovlenie.html

Психологические особенности самореализации студентов

Арамян Джулия
Факультет общественных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
к.п.н., доцент А. Авагимян

Резюме

Ключевые слова: *самореализация, адаптация, потенциал, мотивация, потребность, иерархия*

В статье представлены психологические особенности самореализации в студенческий период. Na anglysk – это очень важный период, когда человек принимает важные для себя решения, начиная со своего профессионального пути, налаживая личную жизнь, а также планируя свою взрослую жизнь. Большую опасность представляют препятствия, создаваемые на пути к самореализации студентов, вследствие чего возникает неудовлетворенность собой. Образовательные и профессиональные достижения играют важную роль в жизни молодежи, помогают укрепить веру в себя и свои способности, а также помогают успешно проявить себя в будущем. Однако индивидуальный успех может быть поставлен под угрозу, когда человек сознательно откладывает выполнение важных и срочных задач и принятие решений по определенным причинам.

Psychological Features of Students' Self-Realization

Aramyan Julia
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: H. Avagimyan
Ph.D in Psychology, Associate Professor

Summary

Key words*: self-realization, adaptation, potential, motivation, need, hierarchy*

The article presents the psychological features of self-realization in the study period. Student age is a very important period when a person makes important decisions for himself, starting from his professional path, establishing his personal life, and also planning his adult life. A great danger is connected with the obstacles created on the way to self-realization of students, as a result of which there is dissatisfaction with oneself. Educational and professional achievements play an important role in the lives of young people, help to strengthen faith in themselves and their abilities, and help to successfully express themselves in the future. However, individual success can be compromised when a person deliberately puts off important, urgent tasks and decisions for certain reasons.

Պարային ոճի և անհատական առանձնահատկությունների կապը

Կոստանդյան Ասյա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և խորհրդատվություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ. Մ. Մազմանյան

Հանգուցային բառեր. *պարարվեստ, պարային ոճ, անհատական առանձնահատկություններ, պարային թերապիա, անհատական-հոգեբանական գծեր*

Թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս գոյություն ունեն քիչ թվով հետազոտություններ, որոնք կբացահայտեն պարային ոճի և անհատական առանձնահատկությունների կապը: Մարդիկ՝ անկախ տարիքից և սեռից, կողմնակից լինելով առողջ ապրելակերպին, զբաղվում են պարով: Պարն օգտագործում են որպես միջոց սթրեսային իրադրություններից դուրս գալու. լիցքաթափվելու, մկանային լարվածությունը թուլացնելու համար:

Աշխատանքի նպատակն է բացահայտել պարային ոճի և անհատական առանձնահատկությունների կապը, որի իրականացման համար մեր առջև դրել էինք խնդիրներ՝ ուսումնասիրել թեմայի վերաբերյալ տեսական գրականությունը, ուսումնասիրել պարը՝ որպես արվեստի ճյուղ, բացահայտել պարային ոճի և անհատական առանձնահատկությունների կապը:

Պարը արվեստի հնագույն տեսակներից մեկն է: Մարդիկ պարում են իրենց գոյության առաջին օրերից: Մ.թ.ա. 8-6-րդ հազարամյակներից մարդկությանը հասած որոշ նկարներում պատկերված են պարային բարդ խորեոգրաֆիկական մասնիկներ պարունակող պարային ծեսեր: Այն ժամանակ պարն ուներ անիմիստիկական բնույթ, այսինքն՝ դրանց սյուժեները կազմվում էին կենդանիներին հետևելու արդյունքում: Հյուսիսամերիկյան հնդիկների մոտ մինչ օրս պահպանվել է բիզոնների պարը, չինացիների մոտ՝ սիրամարգինը և այլն: Գնալով պարը դարձել է գրեթե բոլոր ծիսակարգերի ու արարողությունների անբաժան մասը, որն ուղեկցել է մարդուն ծննդյան օրից մինչև մահ: Պարը, որպես ռիտուալի բաղադրիչ, միավորել է ցեղակիցներին և տրամադրել է նրանց ընդհանուր նպատակին հասնելուն: Օրինակ, մեր նախնիները, որսի գնալուց առաջ, պարել են պարեր, որոնք իրենց մեջ ներառել են ոչ միայն որսոր-

դական շարժումներ ու հնարքներ, այլև ամրապնդել են վստահությունը, որ ամեն ինչ հաջող է անցնելու:

Պարը, ունենալով տարբեր ժանրեր, տիպեր ու տեսակներ, կատարում է ոչ միայն ժամանակը լավ անցկացնելու գործառույթ, այլև ունի լուսավորչական գործառույթ: Օրինակ, չինական մի շարք պարերի միջոցով արտիստները հանդիսատեսին են փոխանցում ին-ի և յան-ի՝ կյանքի երկու սկզբնաղբյուրների մասին տեղեկատվություն:

Պարը հաճախ ծառայում է որպես մասսայական ներշնչման, հոգեբանական մանիպուլյացիաների միջոց: Որպես օրինակ կարող ենք բերել աֆրիկական ազգային պարերն ու շամանների արարողակարգերը: Դրանք սովորաբար տևում են մի քանի ժամից ավել: Դրանց ռիթմիկ պատկերը համապատասխանեցված է գործիքների ռիթմայնությանը: Մենակատարը տալիս է ռիթմը, որը գնալով արագանում ու սրվում է: Ձայներն ու դրանց ուղեկցող շարժումները մեծ հոգեբանական ազդեցություն են ունենում արարողության բոլոր մասնակիցների վրա, նրանք ընկնում են տրանսի մեջ, որն, ըստ նրանց, օգնում է հասնել «լուսավորության»:

Պարը կարող է լինել նաև մասսայական ռելաքսացիայի մեխանիզմ և ագրեսիայի դուրսմղման միջոց:

Այսպիսով, պարը, մարդու կյանքում գոյություն ունենալով նրա ստեղծման առաջին օրերից, կատարում է մի շարք կարևոր գործառույթներ և որպես արվեստի ճյուղ վայելում է լայն տարածում:

Պարը դեռևս հնագույն ժամանակներից եղել է տարբեր ռիտուալների, բուժական գործընթացների և հասարակական կյանքի անբաժան մասը: Նախամարդու կյանքում պարը կատարել է մի շարք սոցիալ-հոգեբանական գործառույթներ [1].

- ծիսակարգային – պարը եղել է մարդկության առաջին սիմվոլիկ լեզուն և սրբերի հետ կապվելու բնական միջոցը,
- հաղորդակցական – պարը եղել է սեռերի և առաջնային խմբերի միջև շփման կոդ և ինֆորմացիայի ու գիտելիքի փոխանցման միջոց,
- նույնականացման – պարը եղել է խմբային տարանջատման միջոց,
- էքսպրեսիվ – պարը եղել է խաղ և ազատ ինքնադրսևորում,
- կատարտիկական – պարը եղել է հուզական և ֆիզիկական լարվածությունը թուլացնելու միջոց:

Չնայած նրան, որ պարի բուժիչ հատկությունները հայտնի են եղել վաղուց, միայն 20-րդ դարում է սկզբնավորվել պարաթերապիան՝ որպես հոգեթերապիայի առանձին ճյուղ:

Պարաթերապիան ունիվերսալ է, այն կարելի է օգտագործել անձնա-

յին թրեյնինգներում, կլինիկական պրակտիկայում, քոուչինգում և այլն: Պարը շատ հարմար է խմբային գործընթացների կատալիզացիայի համար, նպաստում է անհատական ինքնաարտահայտմանը, սեփական անձի որոնմանն ու համախմբմանը: Անձնային աճի կարճաժամկետ խմբերում, որտեղ խմբավարը մասնակիցների անձնական տվյալներին չի տիրապետում, օգտագործվում են պարային թերապիայի առանձին էլեմենտներ. խմբավարը հետադարձ կապ է տալիս, մեկնաբանում է պարի կառուցողական ասպեկտները, իսկ կոնֆլիկտները իմաստավորում է զգուշորեն, քանի որ կարճաժամկետ խմբերում դժվար է ապահովել հուզական անվտանգությունը, իսկ թերապևտիկ գործընթացներում հուզական անվտանգությունը մշտապես առաջին տեղում է: Երկարաժամկետ թերապևտիկ խմբերում խմբավարը կարող է լինել ավելի ազատ, քանի որ նրա և մասնակիցների միջև առկա է երկարատև թերապևտիկ կոնտակտ, խմբավարն ավելի շատ ինֆորմացիա ունի մասնակիցների մասին, խմբում ավելի մեծ վստահություն կա, և դա հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ և արդյունավետ լուծում տալ կոնֆլիկտներին: Պարաթերապիան կարելի է օգտագործել ոչ միայն խմբային աշխատանքներում, այլ նաև ընտանեկան թերապիաների ժամանակ: Պարաթերապիան օգնում է հաղթահարել բազմաթիվ կարծրատիպեր, այդ թվում նաև տղամարդու և կնոջ դերերի մասին ավանդական պատկերացումները: Սրա շնորհիվ այցելուները կարող են գիտակցել, որ տղամարդը որոշակի իրավիճակներում կարող է լինել նուրբ, իսկ կինը՝ համառ և ագրեսիվ:

Պարաթերապիայի մեծ առավելություններից մեկն էլ այն է, որ պարային մեթոդները կարելի է կիրառել նաև այցելուների բարդ խմբերի հետ, որոնց հետ խոսքային մակարդակում հնարավոր չէ արդյունքի հասնել: Սրանք անձնային խանգարումներով, հոգեկան խնդիրներով, կախվածության ծանր դեպքերով, հոգեսոմատիկ բարդ խանգարումներով այցելուներն են: Այդպիսի այցելուներն ունեն առանձնահատկություններ. նրանք հոգետրավմատիկ ներգործության ենթարկվել են մինչև խոսքի զարգացումը: Այդ իսկ պատճառով հոգեթերապևտը նրանց հետ աշխատանքում չի կարող օգտագործել հոգեբանական աշխատանքի դասական ձևը, որտեղ այցելուն պետք է հիշի տրավմատիկ իրադրությունը. եթե փորձը չի խոսքայնացվել, այն նաև չի կարող նկարագրվել խոսքերով: Սակայն կարևոր է նաև իմանալ, որ բացի խոսքային հիշողությունից՝ գոյություն ունի նաև մարմնի հիշողությունը, և պարաթերապիան օգնում է այցելուին ևս մեկ անգամ, ավելի ապահով միջավայրում և խմբի աջակցությամբ վերապրել այդ փորձը, խոսքայնացնել և ձևափոխել այն:

Պարը բացահայտում և հնարավորություն է տալիս աճեցնել հոգեկան

ուժերը, դաստիարակում է ճաշակ և սեր գեղեցկության նկատմամբ [4]:

Պարի մեջ անգիտակցաբար արտահայտվում է մարդու անձը, և եթե ուշադիր լինենք, կարող ենք շատ բան իմանալ պարողի բնավորության, սովորությունների, վախերի, տարբեր մարդկանց ու իրենք իրենց հետ ունեցած հարաբերությունների առանձնահատկությունների, ֆանտազիաների, աշխարհի և իր նկատմամբ ունեցած վերաբերմունքի և շատ այլ բաների մասին:

Առանձնացնում են պարային տարբեր ժանրեր և ուղղություններ [3].

- բալետ՝ դասական, ռոմանտիկ, ժամանակակից,
- լատինաամերիկայն պարեր՝ պասադոբլ, սամբա, ռումբա, չա-չա-չա, ջայվ,
- հասթլ՝ հասթլ,
- ժամանակակից պարեր՝ քոնթեմփորարի, կոնտակտային իմպրովիզացիա, բուտո, ազատ պար, մոդեռն պար, ջազզ,
- փողոցային պար՝ հիփ-հոփ, հաուս, քրամփ, բրեյք դանս, լոքինգ, փոփինգ, դանսհոլլ, դաբստեփ:

Հայտնի պարողներից մեկն ասել է. «Եթե ես վատ եմ զգում ինձ, ես պարում եմ, լավ եմ զգում, կրկին պարում եմ»:

Պարը պատմություն է՝ պատմված մարմնի շարժումների միջոցով, և յուրաքանչյուրը դրան ավելացնում է իր սեփական հույզերը:

Հույզերը հոգեբանական վիճակներ են, որոնք դրսևորում են ապրումներ հաճելիի կամ տհաճի զգացողության, աշխարհի և մարդկանց նկատմամբ վերաբերմունքի ձևով: Հույզերի շարքին են հավասարեցվում նաև տրամադրությունը, զգացմունքները, կրքերը, սթրեսները:

Հույզերի գլխավոր գործառույթը մարդու համար այն է, որ հույզերի շնորհիվ մենք ավելի լավ ենք հասկանում իրար առանց խոսքի: Պարողի համար շատ կարևոր է սովորել հանդիսատեսին հայացքի միջոցով պարի իմաստը փոխանցել: Այստեղ կարևոր են ոչ միայն ճիշտ սովորած շարժումները, այլ նաև հույզերը, զգացմունքներն ու տրամադրությունը, այդ իսկ պատճառով հաճախ պրոֆեսիոնալ պարային ստուդիաներում պարի փորձերի ժամանակ խաղում են նաև հույզերը զարգացնող խաղեր, օրինակ՝ «5 տրամադրությունների պարը», որտեղ խաղացողներին առաջարկվում է երաժշտություն և տրվում հանձնարարություն՝ իմպրովիզացիա անել, որտեղ պարի բնույթը կհամապատասխանի այդ երաժշտության մեջ հնչող տրամադրությանը: Դրա հետ միասին անցկացվում է նաև «Ես և իմ հույզերը» վարժանքը, որն ուղղված է սեփական հույզերը ճանաչելուն և այլ մարդկանց հուզական ռեակցիաները հասկանալուն, ինչպես նաև սեփական հույզերն ադեկվատ արտահայտելու հմտությունների զարգացանը:

Պարն ունի դրական ազդեցություն, և հետազոտությունները ցույց են տվել, որ պարով զբաղվելու պարագայում արտադրվում է էնդորֆին՝ «երջանկության հորմոն»: Պարը համարվում է դեպրեսիայի և ստրեսի բուժման լավագույն տարբերակը [4]:

Պարային ոճի և անհատական առանձնահատկությունների միջև կապի մասին, ինչպես նաև շարժման ու «ես» կոնցեպցիայի բովանդակությունների կապի մասին խոսել է Ֆելդենկրայզը իր «Գիտակցում շարժման միջոցով» աշխատությունում:

Անհատական առանձնահատկություններ ասելով նկատի ունենք անձի համար այն բնութագրական գծերը, բնութագրիչները, որոնք հատուկ են միայն իրեն: Դրանց թվին են պատկանում բնավորությունը, խառնվածքը և ընդունակությունները:

Ֆելդենկրայզը նշում է. «Մենք բոլորս շարժվում, խոսում, զգում ու մտածում ենք տարբեր կերպ՝ յուրաքանչյուրս մեր կողմից տարիների ընթացքում կերտած «եսին» համապատասխան: Որպեսզի փոխենք գործունեության ձևը, պետք է փոխենք «ես» կոնցեպցիան, որը կրում ենք մեր ներսում»: Ֆելդենկրայզը առանձնացնում է «ես» կոնցեպցիայի 4 բաղադրիչ. շարժում, զգացողություն, զգացմունք, մտածողություն:

Նա նշում է, որ բոլոր տիպի շարժումներում այս 4 բաղադրիչներն առկա են, բայց տարբեր է նրանց հարաբերակցությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր հարաբերություններում: Որպեսզի ավելի պարզ լինի, բերենք հետևյալ օրինակը. «Զգալու համար՝ տեսնելու, լսելու կամ տակտիլ եղանակով զգալու համար, մարդը պետք է լինի հետաքրքրված, վախեցած կամ իրեն հետաքրքրող մի բան պետք է նկատի: Այսինքն՝ նա պետք է շարժվի, զգա ու մտածի»: Ըստ նրա՝ քանի որ գլխուղեղում իրար շատ մոտ են գտնվում մոտորիկայի համար պատասխանատու կենտրոնները ու մտածողության և զգացողության համար պատասխանատու կենտրոնները, աշխատելով շարժումների հետ, կարելի է հասնել մտածողության և զգացողության փոփոխությունների, ինչպես նաև անձի զարգացմանն ընդհանրապես: Հիմնվելով այս տեսակետի վրա՝ նա մշակել է մեթոդ, որի միջոցով աշխատում են շարժումների գիտակցման հետ [2]:

Ֆելդենկրայզը նշում է, որ մարդու գոյության պահպանման համար կարևոր է անընդհատ շարժման մեջ լինելը, և այն, թե ինչպես է մարդը շարժվում, ինչ դիրքում է պահում իր ուսերը, գլուխը, ձեռքերը և մարմնի մնացած մասերը, կարող են մարդու մասին շատ բան պատմել:

Ելնելով նշված փաստերից՝ կարող ենք ասել, որ յուրաքանչյուր անձի պարային ոճի ընտրությունը պայմանավորված է նրա անհատական առանձնահատկությունների ամբողջականությամբ, քանի որ, օրինակ,

դժվար է պատկերացնել բալետային պարերով զբաղվող խոլերիկ անձնավորության: Խառնվածքի տիպերի բնութագրիչներն ու պարային ոճում ենթադրվող ակտիվության մակարդակներն ուսումնասիրելով, կարելի է մոտավոր պատկերացում կազմել, թե խառնվածքի որ տիպին պատկանող անձը որ պարային ոճը կնախընտրի: Մեր հետազոտական աշխատանքում կանդրադառնանք հենց այս հարցին:

Տեսական գրականության վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ պարը, որպես արվեստի ճյուղ և որպես թերապևտիկ գործիք, մեծ ազդեցություն ունի մարդու հոգեկանի զարգացման վրա: Տարբեր տարիքային փուլերում տարբեր սեռի անձինք ընտրում են պարը՝ որպես սթրեսային իրադրությունից դուրս գալու, մկանային լարվածության թուլացման, ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպ վարելու նպատակով:

Գրականության ուսումնասիրության արդյուքում եկել ենք եզրակացության, որ պարը, իսկապես, դրական ազդեցություն է ունենում անձի հոգեկանի զարգացման վրա: Անձնային առանձնահատկություններն էլ իրենց հերթին կարող են ազդել պարային ոճի ընտրության հարցում: Ենթադրվում է, որ դասական, ազգային պարային ոճերին նախընտրություն տվող անձինք առավել հանդարտ կլինեն, հավասարակշռված, ոչ իմպուլսիվ, այսինքն՝ ըստ խառնվածքի տիպի ավելի շատ կլինեն ֆլեգմատիկներ և սանգվինիկներ: Ժամանակակից, հիփ-հոփ պարային ոճերին նախընտրություն տվողների մեջ հավանաբար մեծ տոկոս կկազմեն խոլերիկները:

Այս տվյալները ստուգելու նպատակով իրականացրել ենք հետազոտություն: Հետազոտության նպատակն էր բացահայտել՝ արդյոք անհատական առանձնահատկությունները ազդում են պարային ոճի ընտրության վրա:

Հետազոտության համար ընտրվել է թեստի մեթոդը:

Որպես մեթոդիկա ընտրել ենք Հ. Այզենկի «Անձնային հարցարան» մեթոդիկան [5]:

Իրականացնելով հետազոտություն Հ. Այզենկի «Անձնային հարցարան» մեթոդիկայով՝ ստացել ենք հետևյալ տվյալները.

- ազգային պարերով զբաղվող 18 հետազոտվողներից 10-ը, այսինքն՝ նրանց 56 %-ը սանգվինիկներ են, 5-ը, ասինքն՝ 28 %-ը, խոլերիկներ են, իսկ 3-ը, այսինքն՝ 16 %-ը, ֆլեգմատիկներ են:
- լատինաամերիկյան պարերով զբաղվող 7 հետազոտվողներից 6-ը, այսինքն՝ 86 %-ը, խոլերիկներ են, իսկ 1-ը, այսինքն՝ 14 %-ը՝ ֆլեգմատիկ:
- ժամանակակից պարերով զբաղվող 5 հետազոտվողներից 3-ը,

այսինքն՝ 60%-ը խոլերիկներ են, իսկ 2-ը, այսինքն՝ 40 %-ը՝ սանգվինիկներ:

▪ փողոցային պարերով զբաղվող 5 հետազոտվողներից 5-ը, այսինքն՝ 100 %-ը, խոլերիկներ են:

Տվյալներն ավելի տեսանելի են դառնում տրամագրում.



Տրամագիր. Փողոցային, ժամանակակից, լատինաամերիկյան, ազգային պարերով զբաղվող դեռահասների խառնվածքի տիպերը

Եթե տանք փողոցային, ժամանակակից, լատինաամերիկյան և ազգային պարերի բնութագրերը, ապա.

▪ փողոցային պարերը սկիզբ են առել ԱՄՆ-ում, Նյու Յորքի Բրոնքս թաղամասում, որը հայտնի է եղել հանցագործությունների մեծ թվով: Այս պարային ոճով հիմնականում զբաղվել են հանցագործ խմբավորումների անդամները: Նրանք ընտրել էին հենց փողոցային պարերը, քանի որ այն իր ոճով նման է կապուերային: Վերջինս իր մեջ ներառում է մարտարվեստից որոշ շարժումներ, ինչը հնարավորություն է տվել խմբավորումներին պաշտպանվել հարձակումներից: Այստեղ հարկ է նշել, որ այս պարային ոճը ընտրող անձինք հիմնականում պատկանում են խառնվածքի խոլերիկ կամ սանգվինիկ տիպին, քանի որ խառնվածքի

մյուս երկու տիպերի համար բնութագրական չէ ագրեսիվությունը, վարքի սպոնտանությունը,

▪ ժամանակակից պարերը հիմնականում իրենց մեջ ներառում են մի քանի պարային ժանրերից հատվածներ: Շարժումները, որոնք առանձնացված են տարբեր պարային ոճերից, կրում են ակտիվ, կտրուկ բնույթ, հիմնականում ներառում են հստակ, արագ շարժումներ, պարի ընթացքում անհրաժեշտ է ստեղծարար լինել, արագ կողմնորոշվել, իմպրովիզացիաներ անել, ինչը խառնվածքի տեսանկյունից բնութագրական է խոլերիկներին և սանգվինիկներին,

▪ լատինաամերիկյան պարերին բնորոշ առանձնահատկություններից են էներգետիկան, կրքոտ շարժումները և կոնքերի ճոճումը: Պարային այս ոճն ընտրողների խառնվածքը ավելի համապատասխան է խոլերիկներին:

Եթե անդրադառնանք խառնվածքի տիպերի բնութագրերին, ապա՝

▪ Սանգվինիկ. այս տիպին են պատկանում այն մարդիկ, ովքեր օժտված են բարձր ակտիվությամբ և ռեակտիվությամբ, ընդ որում այդ երկու հատկությունները համաչափ են: Սանգվինիկն աչքի է ընկնում վառ արտահայտված դիմախաղով և ակտիվ շարժումներով: Նա շատ եռանդուն է, աշխատասեր և ընդառաջ է գնում ցանկացած նոր գործի, չի կորցնում հավասարակշռությունը դժվար իրավիճակներում, կարողանում է զսպել հույզերը, շատ հեշտ է յուրացնում ամեն մի նորություն: Չի ընկնում այլոց կարծիքների ազդեցության տակ, միշտ գերադասում է ինքնուրույնություն ցուցաբերել: Սանգվինիկը շատ հեշտ է շփման մեջ մտնում անծանոթ մարդկանց հետ. սովորաբար այդպիսի մարդկանց վստահում են: Նրա վարքը բավականին ճկուն է, մտավոր կարողությունները բարձր են: Այդպիսի մարդիկ ավելի լավ են կատարում այն աշխատանքները, որոնք մեծ պատասխանատվություն են պահանջում: Սանգվինիկը կենսուրախ է, շփվող, արագ է հարմարվում նոր միջավայրին ու պահանջներին: Նրա մոտ արագ են առաջանում ուրախության, տխրության, կապվածության ու անբարյացակամության զգացումներ, սակայն դրանք մակերեսային են ու կարճատև: Սանգվինիկի տրամադրությունն արագ փոփոխվում է, սակայն, որպես կանոն, նրա մոտ գերակշռում է դրական տրամադրությունը: Որպես կանոն, սանգվինիկներն առանձնանում են իրենց վստահ և սահուն քայլվածքով:

▪ Խոլերիկ. չնայած որոշ հատկություններով նման է սանգվինիկին, սակայն ունի աչքի ընկնող տարբերություններ: Խոլերիկը ևս չափազանց ակտիվ է, սակայն դժվար է հսկում սեփական հույզերը: Բռնկուն է, անհամբեր, վարքի ճկունությունը թույլ է: Դրա հետ մեկտեղ համառ է և

միշտ ձգտում է հասնել նպատակին: Խոլերիկը հավասարակշռված չէ, նրա տրամադրությունը կարող է շատ արագ փոփոխվել: Նրան բնորոշ են նաև հաճախակի բարկությունն ու վիրավորանքը, որոնք տևական ու հաստատուն են լինում: Մարդկանց հետ շփման մեջ խոլերիկը կարող է ցուցաբերել գրգռվածություն, հուզական անզսպվածություն, որը հաճախ թույլ չի տալիս նրան օբյեկտիվորեն գնահատել մարդկանց գործողությունները:

▪ Ֆլեգմատիկ. արտաքնապես հանգիստ է և հավասարակշռված: Նրան դժվար է հավասարակշռությունից հանել, քանի որ բավականին զուսպ է: Խոսքը և քայլվածքը դանդաղ են: Դեմքի արտահայտությունները հարուտ չեն: Ֆլեգմատիկը շատ դժվար է անցնում նոր գործերի. նա սիրում է կայունություն ամեն ինչում: Նրա վարքը չի կարելի անվանել ճկուն: Արտակարգ իրադարձություններում դժվարությամբ է կայացնում ճիշտ որոշումներ: Ֆլեգմատիկը օժտված է մեծ համբերությամբ և աշխատունակությամբ: Ինքնահսկողության մակարդակը բարձր է: Նա շատ դժվար է հարաբերություններ հաստատում նոր մարդկանց հետ: Չի սիրում աղմուկ, դատարկաբանություն և մարդաշատ վայրեր: Եթե ֆլեգմատիկին ներքաշում են որևէ վիճաբանության մեջ, ապա նա ամեն ինչ անում է այդ ամենից խուսափելու համար: Չնայած իր վարքի կայունությանն ու աշխատասիրությունը՝ ֆլեգմատիկը հաճախ հետաձգում է առաջնային գործերը՝ առանց որևէ հիմնավոր պատճառի:

▪ Մելանխոլիկ. բնութագրվում է բարձր զգայունությամբ: Ցանկացած աննշան ճնշում կարող է վիրավորել նրա արժանապատվությունը: Մելանխոլիկներին բնորոշ է ցածր ձայնով խոսելը, նրանք չեն կարող լավ ղեկավար լինել, քանի որ չափազանց, նույնիսկ հիվանդագին զգայուն են: Մելանխոլիկը ակտիվ չէ, շուտ է հոգնում, մանավանդ միօրինակ աշխատանքից: Վստահ չէ սեփական ուժերին, դժվար է հաղթահարում անջրպետները, սովորաբար նա անինքնավստահ է, ամաչկոտ, անհամարձակ: Ընդհանրապես համարվում է թույլ տիպ: Շուտ է ենթարկվում խուճապի: Կյանքի բարենպաստ պայմաններում մելանխոլիկը բովանդակալից ու խորը մարդ է. կարող է լինել լավ աշխատող և կյանքի դժվարությունները հաջողությամբ հաղթահարել, իսկ անբարենպաստ պայմաններում կարող է վերափոխվել՝ դառնալով ինքնամփոփ, անհանգիստ և խոցելի, որ անհանգստանում է ու մտահոգվում աննշան ու չնչին երևույթներից:

Ըստ պարային ոճի նկարագրության և խառնվածքի տիպով պայմանավորված անձի նկարագրության՝ պարզ է դառնում, որ մեր նախնական ենթադրությունը ճիշտ էր. դասական, ազգային պարային ոճերին նախ-

ընտրություն տվող անձինք առավել հանդարտ են, հավասարակշռված, ոչ իմպուլսիվ, այսինքն՝ ըստ խառնվածքի տիպի ավելի շատ ֆլեգմատիկներ և սանգվինիկներ են: Ժամանակակից, հիփ-հոփ պարային ոճերին նախընտրություն տվողների մեջ մեծ տոկոս են կազմում խոլերիկները:

Կատարելով տեսական գրականության ուսումնասիրություն և համապատասխան հետազոտական աշխատանք՝ եկանք հետևյալ եզրահանգումների. պարը՝ որպես արվեստի ճյուղ, լայն տարածում ունի տարբեր տարիքային մարդկանց շրջանում: Պարը, որպես թերապևտիկ գործիք, ի հայտ է եկել 20-րդ դարում և կարող է կիրառվել տարբեր հոգեբանական խնդիրների լուծման նպատակով: Պարը բացահայտում և հնարավորություն է տալիս աճեցնել հոգեկան ուժերը, դաստիարակում է ճաշակ և սեր գեղեցկության նկատմամբ: Պարի մեջ անգիտակցաբար արտահայտվում է մարդու անձը, և եթե ուշադիր լինենք, կարող ենք շատ բան իմանալ պարողի բնավորության, սովորությունների, վախերի, տարբեր մարդկանց ու իրենք իրենց հետ ունեցած հարաբերությունների առանձնահատկությունների, ֆանտազիաների, աշխարհի և իր նկատմամբ ունեցած վերաբերմունքի և շատ այլ բաների մասին: Դասական, ազգային պարային ոճերին նախընտրություն տվող անձինք առավել հանդարտ են, հավասարակշռված, ոչ իմպուլսիվ, այսինքն՝ ըստ խառնվածքի տիպի՝ ավելի շատ ֆլեգմատիկներ և սանգվինիկներ են: Ժամանակակից, հիփ-հոփ պարային ոճերին նախընտրություն տվողների մեջ մեծ տոկոս են կազմում խոլերիկները:

Գրականություն

1. Козлов В. В., Гиршон А. Е., Веремеенко Н. И.. Интегративная танцевально-двигательная терапия. — 2, расширенное и дополненное. — Санкт-Петербург: Речь, 2006, - 286 с.
2. Рудестам К. Групповая психотерапия. – Санкт Петербург: Мастера психологии, 2000.
3. Жаки Г. Х. - «Анатомия Танца»
4. Энциклопедия Кольера Танец https://dic.academic.ru/dic.nsf/enc_colier/446
5. Чертанова Т. И. «Влияние танцев на эмоциональное состояние и физическое развитие человека» https://nsportal.ru/ap/library/drugoe/2018/08/30/vliyanie-tantsev-na-emotsionalnoe-sostoyanie-i-fizicheskoe-razvitie /
6. Личностный опросник Г. Айзенка (EPI) https://ru.wikipedia.org/wiki/

Связь танцевального стиля с индивидуальными особенностями

Костандян Ася
Факультет общественных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
к.п.н., М. Мазманян

Резюме

Ключевые слова: *танец, танцевальный стиль, индивидуальные особенности, танец как терапия, индивидуально-психологические особенности*

Танец раскрывает и дает возможность развивать умственные способности человека, воспитывает любовь и тягу к прекрасному. Личность человека неосознанно выражается в танце: характер, привычки, страхи, отношение к миру и самому себе и др. Те, кто предпочитает классический стиль, более спокойны, уравновешены, неимпульсивны, по своему темпераменту флегматичны и сангвиники. Те, кто предпочитает современные танцевальные стили в стиле хип-хоп,- в основном холерики.

The Invisible Link between Dance Style and Individual Characteristics

Kostandyan Asya
The Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: M.Mazmanyan
PhD in Psychology

Summary

Key Words: *dance art, dance style, individual characteristics, dance therapy, individual psychological traits*

Dance art reveals and provides an opportunity to strengthen mental capacities, seed taste and love towards the concept of beauty. An individual unconsciously displays one's own character, habits, fears, demonstrates attitude towards one's own self in particular and the world in general. Those who prefer the classical style are relatively calm, balanced, non-impulsive, and according to their temperament, they are phlegmatic and sanguine. Hip-hop and modern dancers are mainly choleric.

Հեքիաթաթերապիայի կիրառման արդյունավետությունը առաջին դասարանցու ուսումնական գործընթացում

Ղևոնդյան Մարիամ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և խորհրդատվություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ. Մ. Մազմանյան

Հանգուցային բառեր. *հեքիաթ, հեքիաթաթերապիա, թերապևտիկ հեքիաթ, ուսումնական աղապտացիա*

Յուրաքանչյուր մարդ ծնված օրվանից մինչև խոր ծերություն շրջապատված է հեքիաթներով ու միֆերով: Դեռևս հնագույն ժամանակներից հեքիաթների միջոցով են սերնդեսերունդ փոխանցվել մարդկության իմաստությունն ու գիտելիքները. չէ՞ որ այդպես ամեն ինչ ավելի հեշտ է ընկալվում ու հիշվում: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ հենց հոգեբանությունն է ուսումնասիրում հեքիաթի ազդեցությունը մարդու հոգեկանի վրա:

Հոդվածի նպատակն է՝ ուսումնասիրել հեքիաթաթերապիայի կիրառման արդյունավետությունը առաջին դասարանցու ուսումնական գործընթացի վրա:

Առանձնացնում են հեքիաթների բովանդակության բազմազան հոգեբանական մեկնաբանություններ, մասնավորապես այն դիրքորոշումները, որոնք ձևավորվել են գիտության մեջ միասեռ հեքիաթային մոտիվների առաջացման աղբյուրների հարցի վերաբերյալ:

Առաջին դիրքորոշումը, որը առաջ էր քաշել Մ. Մյուլերը, վերաբերում է առասպելների (հետևաբար նաև հեքիաթների)՝ որպես բնության այնպիսի երևույթների աղավաղված մեկնաբանությանը, ինչպիսիք են արեգակը ու նրա բազմազան մարմնավորումները, նաև լուսինը, արևածագը, բույսերի կյանքը, ամպրոպը [7, 32]: Երկրորդ դիրքորոշումը պատկանում է Լ. Լայսթներին, որը ցույց տվեց կապը հիմնական հեքիաթային և ազգագրական մոտիվների ու կրկնվող սիմվոլիկ երազների միջև [10, 318]: Երրորդ դիրքորոշումը, որն առաջ էր քաշել Ա.Բաստիանը, վերաբերում է հիմնական առասպելական մոտիվների՝ որպես մարդկության «տարրական գաղափարների» դիտարկմանը, որոնք չեն փոխանցվում

ուրիշին, այլ բնածին են յուրաքանչյուր անհատի համար և կարող են առաջանալ տարբեր վարիացիաներով ամենատարբեր երկրներում և տարբեր ժողովուրդների մոտ [8, 216]: Չորրորդ դիրքորոշումը՝ առավել մշակվածն ու ամենահեղինակավորը, արտահայտվում է վերլուծական հոգեբանության ներկայացուցիչների կողմից, որն իր սկիզբն է առնում Կ. Գ. Յունգի աշխատություններից: Յունգյան հոգեբանության մեջ հատուկ նշանակություն ունեն հեքիաթները: Հեքիաթը Յունգի հայեցակարգում հանդես է գալիս որպես նրա ընթերցողի հանդիպման միջոց իր հետ: Հեքիաթային սյուժեն դիտարկվում է որպես ընթերցողի ներաշխարհի արտացոլում, հեքիաթում նկարագրվում է անհատականացումը՝ որպես առանձնահատուկ ներքին ճանապարհորդության գործընթաց: Սկզբնական, ելակետային արխետիպիկ «ինքնության» որոնումը և բացահայտումը կազմում են հեքիաթի յունգյան ոճի բազմաթիվ ուսումնասիրությունների առանձնահատկությունը: Հուզական բաղադրիչի կարևորությունը հոգեբանական ուսումնասիրության ընթացքում ցուցադրում է տարբեր արքետիպերի միախառնման զուտ ռացիոնալ մոտեցման դեպքում և դրանց քաոսի վերածման անխուսափելիությունը: «Դա նման է նրան, թե ինչ է կատարվում միմյանց վրա տեղադրված լուսանկարների տպագրման դեպքում, որոնք արդեն հնարավոր չէ պատկերացնել առանձին: Հավանաբար նման մի բան կատարվում է նաև անգիտակցականում, ինչը պայմանավորված է նրա ժամանակից և տարածությունից հարաբերականորեն դուրս լինելու հանգամանքով» [6, 43]:

Հեքիաթաթերապիան՝ արտ-թերապիայի տեսակներից մեկն է, որը հիմնված է հեքիաթների տեքստերի կիրառության վրա և ենթադրում է հոգեբանական ներգործություն տարբեր տարիքի մարդկանց վրա հեքիաթների բարոյախոսության օգնությամբ [3, 10]:

Հեքիաթաթերապիան որպես երեխայի հուզական, բարոյական զարգացման եղանակ, մանկավարժական պրակտիկայում կիրառվում է բավականին երկար ժամանակ, համարվում է, որ հեքիաթաթերապիան առաջին անգամ որպես մեթոդ կիրառվել է հոգեվերլուծության դպրոցի շրջանակներում [5, 52]:

Հեքիաթաթերապիան մեթոդ է, որն օգտագործում է հեքիաթային ձևը անձի ինտեգրման, ստեղծագործական ընդունակությունների զարգացման, գիտակցության ընդլայնման, շրջապատող աշխարհի հետ փոխգործողությունների կատարելագործման համար [9, 19]:

Տ. Դ. Զինկևիչ-Եվստիգնեևայի սահմանումով՝ հեքիաթաթերապիան իմաստի որոնման, աշխարհի վերաբերյալ գիտելիքների և նրանում փոխհարաբերությունների համակարգի վերծանման գործընթաց է: Հեքիաթաթերապիան հեքիաթային իմաստների՝ դեպի իրականություն փոխանցման գործընթաց է, անձի ռեսուրսների, ներուժի ակտիվացման գործընթաց [4, 6]:

Թերապիայի այս տեսակը շատ կարևոր նշանակություն ունի երեխայի հետ աշխատելիս, քանի որ այն նպաստում է.

- երեխայի դաստիարակությանը, կրթությանը և զարգացմանը,
- երեխայի ինքնաճանաչմանը,
- շրջակա աշխարհի հետ երեխայի փոխըմբռնմանը,
- մտածողության, հիշողության, երևակայության զարգացմանը,
- երեխայի սոցիալ-հուզական վարքի շտկմանը [11]:

Առանձնացվել են հեքիաթների հիմնական գործառնական առանձնահատկությունները.

1. հեքիաթներն առաջացնում են ինտենսիվ հուզական արձագանք, ինչը ստեղծում է հատուկ հնարավորություններ կոմունիկացիայի ժամանակ,
2. հեքիաթներում օգտագործվում է կյանքի արժեքների, կարևոր իրադարձությունների և երևույթների, հերոսների ներաշխարհի վերաբերյալ մետաֆորը (փոխաբերությունը),
3. հեքիաթում պարունակվում է ինֆորմացիա աշխարհի կառուցվածքի վերաբերյալ, ինչ դժվարությունների են հանդիպում հերոսները և ինչպես կարելի է դրանք հաղթահարել, ինչպես կարելի է պայքարել չարի դեմ և կառուցել հարաբերությունները շրջապատողների հետ,
4. հեքիաթը զարգացնում է բարոյական դիմադրողականությունը, նպաստում է հասարակության բացասական ներգործություններին հակադրվելուն,
5. հեքիաթները նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, զարգացնում են երևակայությունը, կատարելագործում են ստեղծագործությունը [2, 3]:

Հեքիաթաթերապիան մշտապես եղել է կիրառության մեջ. իհարկե, այն ունեցել է այլ անվանում: Առանձնացվում է հեքիաթաթերապիայի զարգացման 4 փուլ: Հատկանշական է, որ այս փուլերից ոչ մեկը չի

ավարտվել՝ իր տեղը զիջելով նոր փուլին: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր փուլ իրենից ներկայացնում է որոշակի գործընթացի սկիզբ:

Առաջին փուլ – բանավոր ժողովրդական ստեղծագործություն: Այս փուլում կուտակվում է վստահություն աշխարհի և սեփական ուժերի նկատմամբ: Դրա սկիզբը կորած է դարերի խորքում, բայց բանավոր ստեղծագործելու գործընթացը շարունակվում է մինչ օրս: Այն իր մեջ ներառում է առակներ, հեքիաթներ, մետաֆորներ, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ՝ կրելով ժողովրդի դարավոր իմաստությունը:

Երկրորդ փուլ – հեքիաթների և առասպելների հավաքագրում և ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրությունները հոգեբանական ավելի խոր առումով կապված են այնպիսի անունների հետ, ինչպիսիք են Կ. Գ. Յունգը, Մ. Լ. ֆոն Ֆրանցը, Բ. Բեթթելհեյմը և ուրիշներ:

Երրորդ փուլ – հոգեթերապևտիկ փուլն է: Ժամանակակից պրակտիկ մոտեցումներն ընդունում են հեքիաթը որպես տեխնիկա, որպես անձի հոգեախտորոշման,հոգեշտկման և զարգացման միջոց: Երեխան փնտրում է իր տեղը կյանքում. «Ես այնպիսին եմ, ինչպիսին կամ: Ես անցնում եմ իմ կյանքի ուղով, որը ես եմ ընտրել ինձ համար: Ես պատասխանատվություն եմ կրում իմ գործողությունների և այն իրադարձությունների համար, որոնք կատարվում են ինձ հետ»:

Չորրորդ փուլ – ինտեգրատիվ փուլ: Այս փուլում երեխան պայքարում է չարի դեմ: Նա հայտնվում է հեքիաթի հերոսի դերում: Այս փուլը կապված է համալիր հեքիաթաթերապիայի ձևավորման, հեքիաթի նկատմամբ հոգևոր մատեցման, հքիաթաերապիայի՝ որպես բնական միջոցի ընկալման, ինչպես նաև որպես դաստիարակչական համակարգի ընկալման հետ [12]:

Տ. Դ. Զինկևիչ-Եվստիգնեևան առանձնացնում է հեքիաթների վեց տեսակ՝ գեղարվեստական, ժողովրդական, հեղինակային ժողովրդական, դիդակտիկ, հոգեշտկողական և հոգեթերապևտիկ [5, 7]:

Հեքիաթների միջոցով լուծվում են ադապտացիոն, դիդակտիկ, շտկողական և թերապևտիկ խնդիրներ, զարգացնում են երևակայությունը և մտածողությունը:

Հեքիաթաթերապիայի զարգացնող, շտկող և թերապևտիկ կառուցվածքի մեջ, ըստ հաջորդականության, ներառվում են հինգ բաժին.

1. հոգեախտորոշում,
2. հոգեբանամանկավարժական շտկում,

3. սոցիալ-հոգեբանական հարմարում,
4. ստեղծագործական ինքնարտահայտում,
5. աշխատանք սոցիալական միկրո և մակրո միջավայրի հետ:

Թերապևտիկ հեքիաթները սովորաբար ունենում են հստակ կառուցվածք՝ սկիզբ, որի ընթացքում որոշվում է հեքիաթի ընդհանուր բնույթը, գագաթնակետ, որի ընթացքում տեղի են ունենում հիմնական խնդիրների բախումները, և ավարտ, որը պարտադիր պետք է դրական ելք ունենա [13]:

Առաջարկվում է հեքիաթն օգտագործել խորհրդատվության տարբեր փուլերում. օրինակ, փոխհարաբերությունների հաստատման փուլում հոգեբանը կարող է ասել, որ ինքը հեքիաթներ է հորինում կամ շատ է սիրում հեքիաթն իր աշխատանքում: Եթե այցելուն հետաքրքրություն ցուցաբերի հեքիաթի հանդեպ, դա կարող է դառնալ հոգեբանական օգնության հիմնական, առաջնային ձևը:

Հեքիաթային բովանդակությունը օգնում է այցելուին փոխարկել իր դժգոհությունները, անհամաձայնությունները և ներքին հակասությունները, դառնալ ակտիվ մասնակից տարբեր փոխհարաբերություններում [1, 8]:

Ելնելով հետազոտության հիմնական նպատակից՝ հեքիաթաթերապիայի կիրառման ազդեցության բացահայտելու համար իրականացրել ենք հետազոտություն, որի ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Լ. Մ. Կովալյով, «Առաջին դասարան հաճախող երեխաների ադապտացիայի առանձնահատկությունների ուսումնասիրության» մեթոդիկա [14]:
2. Հեքիաթաթերապիայի իրականացման համար ընտրվել է «Անտառային դպրոց» հեքիաթը [15]:

Հետազոտությանը մասնակցել են 2 առաջին դասարանի 50 երեխաներ: Դասարանները պայմանականորեն անվանել ենք «դասարան 1» և «դասարան 2»: Ուսումնական տարվա սկզբում 2 դասարաններում կիրառվել է Լ. Մ. Կովալյովի մեթոդիկան, այնուհետև «դասարան 1-ում» կիրառվել է հեքիաթաթերապիայի մեթոդը:

Դինամիկայի մեջ դիտարկելով վերը նշված երկու դասարանների ադապտացիան՝ կարող ենք ասել, որ երկու դասարաններում էլ ադապտացիան գտնվում է նորմայի սահմաններում: Սակայն պետք է նշել, որ

այն դասարանում, որտեղ կիրառվել է հեքիաթաթերապիան՝ ադապտացիան բարձրացել է 17 %, իսկ մյուս դասարանում, որտեղ այն չի կիրառվել,ադապտացիան բարձրացել է 12 %: Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ հեքիաթաթերապիան բավականին արդյունավետ միջոց է երեխաների ադապտացիոն գործընթացի ճիշտ կազմակերպման համար (տե՛ս տրամագրում):



Տրամագիր. Արդյունքների համեմատական վերլուծություն

Այսպիսով կարող ենք ասել, որ հեքիաթաթերապիան նպաստում է առաջին դասարանցիների ադապտացիային: Թերապիայի այս տեսակը յուրահատուկ միջոց է այցելուի հետ աշխատանքի համար, որի շնորհիվ բացահայտվում են հոգեթերապևտիկ նշանակություն ունեցող տարրերը: Այս մեթոդը աշխարհի և նրանում եղած փոխհարաբերությունների համակարգի իմաստի փնտրման ու գիտելիքների բացահայտման գործընթաց է, որում կազմավորվում են հեքիաթի և իրական կյանքի իրադարձությունների միջև կապը. հեքիաթային իմաստները տեղափոխվում են իրականություն:

Գրականություն

1. Ղազարյան Գ. Հ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ., Հեքիաթաթերապիայի տեսություն և պրակտիկա (Ուսումնական ձեռնարկ) / Ղազարյան Գ. Հ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ. – Երևան, հեղ. հրատ., 2015, 84 էջ: https://www.researchgate.net/profile/Gayane-hazaryan/publication/324831415_Hekiatateraрia/links/5dc7f580a6fdcc5750395064/Hekiatateraрia.pdf
2. Белинская Е.В. Сказочные тренинги для дошкольников и младших школьников. Санкт-Петербург: Речь; Москва: Сфера, 2008.
3. Заширинская О. В. Сказкотерапия в работе психолога / О. В. Защиринская – «СПбГУ», 2016.
4. Зинкевич-Евстигнеева Т. Д. Практикум по сказкотерапии. – Санкт-Петербург: ООО «Речь», 2000, - 310 с.
5. Зинкевич-Евстигнеева Т. Д. Основы сказкотерапии. – Санкт-Петербург: Речь, 2006, - 176 с.
6. Михальченко, К. А. История развития и значение сказкотерапии как направления практической психологии Психологические науки: теория и практика Москва: Буки-Веди, 2012, 45 с.
7. Мюллер М. Введение в науку о религии. /Классики мирового религиоведения. Антология. – М., Канон+, 1996, - 32 с.
8. Фолиева Т.А., Шинкарь О.А. Элементарные идеи Адольфа Бастиана // Вестник ВолГУ, Серия 9. Вып. 6. 2007, 218 с.
9. Фон Франц М. Л. Психология сказки. СПб.: БСК, 1998, - 360 с.
10. Laistner M. L. W. Thought and Letters in Western Europe. London, 1957, p. 319
11. https://chalikyansusanna.home.blog/ 20.07.2022
12. https://present5.com/etapy-skazkoterapii-psixoterapii-skazkoterapiya-techenie-v/05.09.2022
13. http://parents.disabilityinfo.am/ 11.08.2022
14. https://www.child-psy.ru/tests/319.html0 04.08.2022
15. https://искусствожить.su/knigi/123-marina-panfilova-lesnaya-shkola.html 03.09.22

Эффективность применения сказкотерапии в учебной деятельности первоклассника

Гевондян Мариам
Факультет общественных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
к. п. н. М. Мазманян

Резюме

Ключевые слова: *сказка, сказкотерапия, терапевтическая сказка, учебная адаптация*

Сказка является не только хорошим лечебным, но и диагностическим, развивающим и воспитательным методом. Применение сказкотерапии не имеет возрастных ограничений, но этот метод терапии чаще применяется в работе с детьми, и его основные преимущества становятся явными именно с этой точки зрения: ребенок воспринимает сказочные события как реальность. Через сказки можно понять позицию ребенка по различным вопросам, познакомиться с его системой ценностей, страхами, побуждениями, тревогами и т. д.

The Effectiveness of Using Fairy Tale Therapy in the Educational Process of a First-Grader

Ghevondyan Mariam
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: M. Mazmanyan
Candidate of Psychological Sciences

Summary

Key words: *fairy tale, fairy tale therapy, therapeutic fairy tale, educational adaptation*

A fairy tale is not only a good therapeutic but also a diagnostic, developmental and educational method. The use of fairytale therapy has no age restrictions, but this method of therapy is more often used while working with children, and its main advantages are precisely seen from this perspective: the child perceives fairy-tale events as reality. Fairy tales serve as a basis for understanding the position of a child on various issues, getting acquainted with his/her system of values, fears, motives, anxieties, etc.

Մտավոր զարգացման հապաղում ունեցող երեխաների մայրերի քոփինգ ռազմավարությունները

Շահվերդյան Մարտուն
հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիման

Հանգուցային բառեր. *մտավոր զարգացման հապաղում, մայրեր, հաղթահարում, քոփինգ, խուսափում, փախուստ, առճակատում*

Վերջերս հոգեբանական ուսումնասիրություններում, որոնք նվիրված են կյանքի անբարենպաստ իրավիճակներում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությանը, նկարագրվել է հաղթահարման վարքագծի (կամ հոգեբանական հաղթահարման) ֆենոմենը: Վերջին տարիներին օտարերկրյա հոգեբանության մեջ զգալի թվով աշխատանքներ նվիրված են հոգեբանական հաղթահարման խնդրին՝ «հաղթահարման վարք»: Օտարերկրյա հոգեբանական գրականության մեջ բացասական իրավիճակներից տարբեր մեթոդներով դուրս գալու խնդիրը կապված է «հաղթահարում» տերմինի հետ:

Առաջին անգամ «հաղթահարում» տերմինը օգտագործեց Լ. Մերֆին 1962 թվականին՝ երեխաների կողմից զարգացման ճգնաժամի պահանջների հաղթահարման ուղիներն ուսումնասիրելիս: Հետագայում այս տերմինը հայտնվեց 1966 թվականին Ռ. Լազարուսի «Հոգեբանական սթրեսը և հաղթահարման գործընթացը» աշխատությունում, այնուհետև ընդունվեց բազմաթիվ հետազոտողների կողմից, ովքեր զբաղվում էին սթրեսային խնդիրներով, կյանքի դժվարին իրավիճակներով, կյանքի անբարենպաստ իրադարձություններով և դրանցից դուրս գալու ուղիներով [1]:

Ներկայումս ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության անցնելու պայմաններում շատ ավելի կարևոր են նման թեմաների ուսումնասիրությունները, քանզի եթե առաջ մտավոր զարգացման հապաղում ունեցող երեխաների կհանդիպեինք բացառապես հատուկ դպրոցներում, խնամքի կենտրոններում կամ այլ հատուկ կրթություն ապահովող ուսումնական հաստատություններում, հիմա նրանք ունեն հավասար հնարավորություններ հանրակրթական ուսումնական հաստատություն-

ներում բոլոր սաների հետ կրթություն ստանալու համար: Այս պարագայում նման երեխաների ծնողների վարքային առանձնահատկությունների հետազոտությունը և դրանցից բխող հաղթահարման ռազմավարությունները կօգնեն բազմամասնագիտական թիմերին:

Քոփինգ (անգլ. coping, coping strategy), այն ամենը, ինչ անում է մարդը, որպեսզի կարողանա հաղթահարել սթրեսը, լուծել անձնական և միջանձային խնդիրները: Հասկացությունը միավորում է սթրեսի կամ հոգեբանական բարդ իրավիճակների հաղթահարման կոգնիտիվ, հուզական և վարքային ռազմավարությունները:

Հոգեբանական քոփինգ մեխանիզմներն անվանում են նաև քոփինգ ռազմավարություններ կամ քոփինգ հմտություններ: Քոփինգ տերմինը հիմնականում վերաբերում է ադապտիվ (կառուցողական) քոփինգ ռազմավարություններին, որոնք նվազեցնում են սթրեսը, այսինքն՝ դրական և կառուցողական են: Սրան հակառակ, գոյություն ունի նաև մալադապտիվ (ոչ ադապտիվ) քոփինգը, որը նվազեցնելու փոխարեն մեծացնում է սթրեսը և հետևաբար չի համարվում քոփինգ:

Քոփինգ ռազմավարությունների արդյունավետությունը կախված է սթրեսի տեսակից, անձի առանձնահատկություններից և արտաքին պայմաններից: Քոփինգ պատասխանները մասամբ կառավարվում են անհատականության և սոցիալական միջավայրի կողմից. հատկապես սթրեսային միջավայրի բնույթը էական նշանակություն ունի այս հարցում [2]:

Հաղթահարման ռազմավարությունների անհրաժեշտությունը հայտնվում է ճգնաժամային իրավիճակներում և նախատեսված է նվազեցնելու հոգեբանական սթրեսը և անհանգստությունը, որի ինտենսիվությունը պայմանավորված է առնվազն երկու հանգամանքով՝ անձնական, սուբյեկտիվ գործոնը և իրական իրավիճակը: Սուբյեկտիվ գործոնը պետք է հասկանալ որպես անհատական հատկանիշներ, որը որոշում է հոգեբանական անհարմարության ինտենսիվությունը:

Հոգեբանական անհանգստության անհատական ռեակցիաները կարող են լինել անգիտակից, քանի որ դրանք հիմնված են խառնվածքի տարբերությունների վրա, և քանի որ նրանք ունեն փորձ, կրկնությունները դուրս են գալիս գիտակցված վերահսկողությունից:

Քոփինգ ռազմավարության արդյունավետության վրա ազդում են մի քանի պարամետրեր՝ անհատի համար սպառնալիքի աստիճանը, անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը և դրանց հաջողությունը: Գոյություն ունեն երեք խումբ քոփինգ ռազմավարություններ.



Գծապատկեր 1

Ֆունկցիոնալ հաղթահարման ոճը վերաբերում է խնդրին հաղթահարելու ուղղակի փորձերին՝ ուրիշների օգնությամբ կամ առանց դրա: Դիսֆունկցիոնալ կամ «խուսափող հաղթահարումը» ներկայացնում է ոչ արդյունավետ ռազմավարությունների օգտագործումը: Հաղթահարման ռազմավարության ոճի ընտրության վրա ազդում են իրավիճակի առանձնահատկությունները և դրա նկատմամբ ընկալվող վերահսկողությունը, ինչպես նաև անհատականության առանձնահատկությունները [3]: Այսպիսով, սթրեսը հաղթահարելու բազմաթիվ եղանակներ կան, սակայն հաղթահարման ակտիվ և ֆունկցիոնալ ռազմավարությունները նպաստում են խնդիրների լուծմանը և իրավիճակին հարմարվելուն:

Անձի անհատական բնութագրիչները կարող են կարևոր գործոն հանդիսանալ այն հարցում, թե ինչպիսի ռազմավարություն կընտրի անձը:

Այդ գործոններից հատկապես կարևոր են.

- ինքնագնահատականը, ինքնընդունումը,
- վերահսկման լոկուսն ու տագնապայնության մակարդակը,
- տարիքը, սեռն ու գենդերը,
- սոցիալական կոմպետենտությունը, մեծ կամ փոքր սոցիումին մարդու պատկանելիության զգացումը (էթնիկական խումբ կամ սոցիալական խավ),
- սոցիալական փորձ, որը ձեռք է բերվում ընտանիքում, դպրոցում և այլն:

Ա. Միրոբլոկի հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ խնդրի կամ հուզականության վրա հիմնված ռազմավարության ընտրությունը էական չէ, դրանք ծնողական անհանգստությունից բխող հաղթահարման ռազմավարություններ են [4]:

Այս ուսումնասիրության նպատակն էր ուսումնասիրել ծնողների հաղթահարման մեխանիզմների (առճակատման, հեռավորության, ինքնատիրապետման, սոցիալական աջակցության որոնման, պատասխանատվության ընդունման, փախուստ-խուսափման, խնդիրների պլանային լուծման և դրական վերագնահատման) փոխհարաբերությունները կամ նեղություն (դեպրեսիա, անհույսություն, անհանգստություն և զայրույթ) մտավոր խնդիրներով երեխա մեծացնելիս: Այս ուսումնասիրության միջոցով կարելի է հասկանալ հաղթահարման որոշակի մեխանիզմներ, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ հոգեկան առողջության վրա՝ դրանով իսկ օգնելով խորհրդատուներին խրախուսելու հաղթահարման դրական ռազմավարությունները՝ ծնողների հոգեբանական անհանգստությունը մեղմելու համար:

Այսպիսով, հոգեբանները էական նշանակություն կունենան հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների սթրեսի կառավարման գործում:

Հետազոտության արդյունքում, որը իրականացվել Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլկմանի կողմից ստեղծված «Հաղթահարման ուղիներ» հարցաշարի միջոցով, մասնակցել են 50 հետազոտվողներ:

Հետազոտության արդյունքները ամփոփելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ հետազոտվողների գերակշիռ մեծամասնությունը 28 հոգի՝ կամ հետազոտվողների 55%-ը, ընտրել են «Սոցիալական աջակցություն փնտրելու ռազմավարություն»:



Գծապատկեր 2. Հետազոտության արդյունքների տվյալներ

Եզրափակելով հարկ է նշել, որ տարատեսակ սթրեսային իրավիճակները, իրադարձության անորոշությունը անձի համար կարող են լինել իրավիճակի օբյեկտիվորեն տրված հանգամանքների կամ դրա սուբյեկտիվ մեկնաբանության հետևանք, որը կապված է մարդու անձնական բնութագրիչների, փորձի կամ լուծման հմտությունների բացակայության հետ:

Գրականություն

1. Бухановский А. О., Кутявин Ю. А., Литвак М. Е. Общая психопатология. Пособие для врачей. 2-е изд. — Ростов-на-Дону: Феникс, 1998.
2. Жариков Н. М., Тюльпин Ю. Г. Психиатрия. — Москва: Медицина, 2000. — ISBN 5-225-04189-2.
3. Stress, Appraisal, and Coping ---- Richard S. Lazarus, Susan Folkman.
4. Мирболок А. К понятию копинг-стратегии поведения, ЕГУ, Ереван, 2013, с. 70-77.

Копинг-стратегии матерей детей с умственной отсталостью

Шахвердян Мартун
Факультет общественных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
к.п.н., доцент А. Авагимян

Резюме

Ключевые слова: *умственная отсталость, матери, копинг, избегание, побег, противостояние*

Жизнь в семьях с детьми с особыми потребностями отличается от жизни других семей. Матери обычно несут большую нагрузку по уходу и чаще находятся в стрессовых ситуациях с ребенком все время.

В статье представлены копинг-стратегии матерей детей с задержкой психического развития, которые они выбирают при попадании в сложные стрессовые ситуации, при организации процесса ухода и воспитания ребенка с задержкой психического развития.

Coping Strategies of Mothers of Children with Mental Retardation

Shahverdian Martun
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Academic Supervisor: H. Avagimyan
Ph.D in Psychology, Associate Professor

Summary

Key words: *mental retardation, mothers, coping, coping, avoidance, escape, confrontation*

Life in families with special needs children is different from the situation of other families. Mothers usually bear the greater burden of care and are more likely to get into the stressful situations with the child all the time.

The article presents the coping strategies of mothers of children with mental retardation, which they choose when they find themselves in difficult, stressful situations, in organizing the process of caring and raising a child with mental retardation.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

PUBLIC MANAGEMENT

COVID-19-ի համավարակի տնտեսական ազդեցությունը Հայաստանում

Թումանյան Արևիկ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
Մագիստրոսական թեզի ղեկավար՝
տ. գ. թ Լ. Ավդալյան

Հանգուցային բառեր. *հակաճգնաժամային ծրագիր, ՀՆԱ, առևտրաշրջանառություն, գբոսաշրջություն*

Ներածություն

Համաշխարհային տնտեսության ձևավորման և զարգացման ողջ ընթացքում մարդկության առջև ծառացած են եղել մի շարք սպառնալիքներ, որոնց պատմականորեն տրվել են տարբեր բնութագրեր:

Այդ սպառնալիքները չեն դադարել գոյություն ունենալ նույնիսկ 21-րդ դարում, երբ համաշխարհային տնտեսակարգում տեղի են ունեցել բազմաթիվ՝ թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական փոփոխություններ: Ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները կայուն տնտեսական աճի և բնակչության բարեկեցությունն ապահովող միջոցառումների իրականացման ընթացքում մշտապես բախվել և բախվում են տնտեսական, բնապահպանական, աշխարհաքաղաքական, սոցիալական, տեխնոլոգիական, համաճարակային, պատերազմական և այլ տիպի ռիսկերի:

Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային տնտեսությունը առերեսվել է այնպիսի մասշտաբային սպառնալիքների հետ, ինչպիսիք են 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի «ալիքները» պարբերաբար տարածվում և ճգնաժամին հաղորդում են պերմանենտ բնույթ, ինչպես նաև COVID-19-ով պայմանավորված ճգնաժամը, որը Երկիր մոլորակը ենթարկեց նոր ցնցումների՝ ուղեկցվելով հսկայական մարդկային կորուստներով, տնտեսությունների համատարած անգործությամբ, ձեռնարկությունների հարկադրված պարապուրդով, տնտեսական անկմամբ և համավարակի հաղթահարման ժամկետների անորոշությամբ:

2019թ.-ի դեկտեմբերի վերջին Չինաստանի Ուհան քաղաքում առա-

ջին անգամ հայտնաբերվեց հետագայում «COVID-19» անվանումը ստացած վիրուսը, որը արագորեն տարածվեց ոչ միայն Չինաստանում, այլև ամբողջ աշխարհում՝ լուրջ վնաս հասցնելով համաշխարհային տնտեսությանը: Մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, հայտարարվեց արտակարգ դրություն, և տնտեսական գործունեության մի շարք տեսակներ արգելվեցին:

2020 թվականի մարտի 16-ին ՀՀ կառավարությունը, ելնելով COVID-19 համավարակի տարածման մտահոգիչ տեմպերից, երկրում հայտարարեց արտակարգ դրություն: Ներդրվեցին այնպիսի խիստ սահմանափակումներ, ինչպիսիք են տուրիստական հոսքերի արգելափակումը, դպրոցները և բարձրագույն ուսումնական հաստատությունները փակելու որոշումը և ուսումնական գործընթացի տեղափոխումը առցանց հարթակներ, անձանց տեղաշարժի սահմանափակումները և այլն: Բացի այդ, սահմանվեցին խիստ տուգանքներ այն անձանց համար, ովքեր արտակարգ դրության ժամանակ կխախտեին մեկուսացման կանոնները: Համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների հաղթահարման նպատակով ՀՀ կառավարությունը հանդես եկավ հակաճգնաժամային ծրագրով:

Տնտեսագիտության մեջ «ճգնաժամը» մեկ կամ մի քանի տնտեսություններում տնտեսական գործունեության կայուն, երկարատև անկումն է: Դա ավելի կտրուկ տնտեսական անկում է, քան պարզապես անկումը, ինչը դանդաղեցնում է ոչ միայն տնտեսական գործունեությունը, այլ նաև բնականոն աշխատանքը: Ճգնաժամը ուղեկցվում է անկայունությամբ, սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարելիության անկմամբ, քաղաքական հաստատությունների անկայունությամբ, քաղաքական տարաձայնությունների ու հասարակության ներսում հակասությունների սրմամբ և մի շարք այլ բացասական գործընթացներով: Նմանատիպ երևույթներն էլ հիմք են հանդիսացել հակաճգնաժամային կառվարման առանձնացմանը՝ որպես առանձին ոլորտի: Հակաճգնաժամային եզրն օգտագործվում է՝ բնորոշելու համար կառավարչական գործունեությունը, որն ուղղված է համակարգի կայունության ապահովմանը ճգնաժամային իրավիճակներում կամ բնականոն գործունեության վերականգնմանը և հետևանքներրի վերացմանը:

Միջազգային կառույցները համաշխարհային տնտեսության աճի դանդաղում կանխատեսում էին ավելի վաղ, քան կորոնավիրուսային համաճարակի բռնկումը: Արժույթի միջազգային հիմնադրամը դեռ հունվա-

ին համաշխարհային տնտեսության համար որպես հիմնական ռիսկ առանձնացնում էր աշխարհաքաղաքական լարվածությունը, մասնավորապես՝ Իրանի և Միացյալ Նահանգների, ԱՄՆ-ի և առևտրային գործընկերների վատթարացող հարաբերությունները և տնտեսական այլ վեճերի խորացումը: Տնտեսական վիճակն ուվատատեսական կանխատեսումները սրվեցին: Աշխարհի երկրների տնտեսությունների վրա կորոնավիրուսի ազդեցության ալիքները բնութագրվում են յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններով: Հայաստանի համար դա առավել բնութագրվում է երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքով՝ համախառն ներքին արդյունքի մեջ ոլորտների տեսակարար կշիռներով, արտաքին աշխարհից կախվածությամբ:

Հայաստանի տնտեսության վրա տնտեսական գործունեության սահմանափակումներն ունեցան բացասական ազդեցություն: Միայն ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը կրճատվեց ավելի քան 17 տոկոսով, իսկ 4 ամսվա կտրվածքով՝ 1.7 տոկոսով:

Առաջին եռամսյակում Հայաստանի տնտեսական աճը նախնական տվյալներով կազմեց 3.8 տոկոս, ինչին նպաստեց հիմնականում առևտրի և ծառայությունների ոլորտը, իսկ մեծ աճ գրանցվեց ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 21.2 տոկոս և հանքարդյունաբերությունը՝ մոտ 21 տոկոս: Թեև երկու ոլորտներն աճ են գրանցել, բայց դրանց բաժինը ՀՆԱ կառուցվածքում մեծ չէ: Համեմատելով 2019 և 2020 թթ.-ի առաջին եռամսյակների ՀՆԱ-ի տեսակարար կշիռները՝ պետք է նշել, որ հիմնական ճյուղերից կրճատվեց գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, մանրածախ և մեծածախ առևտրի մասնաբաժինը [5]:

▪ Կարևոր ցուցանիշ են համարվում **հավաքագրված հարկային եկամուտները**. առաջին եռամսյակում պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներն աճել են մոտ 17 տոկոսով, սակայն մաքսատուրքերի գծով անկում է գրանցվել. հարկային եկամուտները կրճատվել են 10 տոկոսով, ընդ որում ԵԱՏՄ (Եվրասիական Տնտեսական Միություն) բյուջեից հաշվեգրված եկամուտների անկումը կազմել է մոտ 2 տոկոս: Կրճատվել է արդյունաբերական արտադրանքի աճի տեմպը, արտաքին և փոխադարձ առևտրի ծավալների կրճատումը նկատելի է նաև հունվար-փետրվար ամիսներին [6]:

▪ Արտաքին աշխարհից Հայաստանի կախվածության ազդակներից մեկը **դրամական փոխանցումներն** են: Ընթացիկ տարվա մարտին ֆիզի-

կական անձանց դրամական փոխանցումները տարեկան կտրվածքով նվազել են շուրջ 11 տոկոսով, իսկ եռամսյակային կտրվածքով՝մոտ 10 տոկոսով: Միայն Ռուսաստանից առաջին եռամսյակում փոխանցումները կրճատվել են 16 տոկոսով: Փոխանցումների տատանումների պատճառ են ինչպես փոխարժեքի տատանումները, այնպես էլ ՌԴ-ում գնողունակ պահանջարկի անկումը [5]:

▪ COVID 19-ի Ազդեցության հաջորդ ուղղություններից է **զբոսաշրջության** ոլորտը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ առաջին եռամսյակում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը կրճատվել է մոտ 15 տոկոսով կամ Հայաստան են այցելել մոտ 53 հազարով ավելի քիչ զբոսաշրջիկ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկ զբոսաշրջիկի միջին ծախսը 770 ԱՄՆ դոլար է, ստացվում է, որ մոտ հաշվարկներով միայն առաջին եռամսյակում կորուստը կկազմի 40 մլն 810 հազար ԱՄՆ դոլար [6]:

▪ COVID 19-ի ազդեցությունը նկատելի է նաև **առևտրաշրջանառության** գծով.միայն մարտին Հայաստանի արտաքին և փոխադարձ առևտրաշրջանառությունը կրճատվել է 16 տոկոսով, իսկ առաջին եռամսյակի կտրվածքով՝ 4 տոկոսով: Դեպի ԵԱՏՄ, ԵՄ երկրներ արտահանումը կրճատվել է, իսկ դեպի ԱՊՀ և այլ երկրներ արտահանումն ավելացել՝ ի հաշիվ Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ճապոնիայի, Կորեայի, ԱՄԷ (Արաբական Միացյալ Էմիրություններ)-ի, Իրանի: Դեպի Իտալիա արտահանումն ավելացել է ավելի քան 4.7 անգամ, Իսպանիա՝ 5.8, իսկ մնացած ԵՄ երկրների իմասով հիմնականում կրճատվել է: Դեպի ՀՀ ներմուծման կտրուկ աճ է գրանցվել Իտալիայից, Սլովակիայից, Ուզբեկստանից և Ղրղզստանից: Չինաստանից ներմուծումը կրճատվել է 5.8 տոկոսով, իսկ արտահանումն ավելացել 14 տոկոսով: ՀՀ-ից ավելացել է սարքերի և ապարատների, հանքահումքային արտադրանքի, արվեստի ստեղծագործությունների արտահանումը: Ավելացել են պատրաստի սննդի արտադրանքի, սարքերի և ապարատների և այլ ապրանքների ներմուծման ծավալները:

▪ **Ներդրումների** եռամսյակային կտրվածքով ևս անկում է գրանցվել:

Պաշտոնական տվյալներով՝ ընթացիկ տարվա մարտի վերջին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ առևտրային բանկերը տրամադրել են 20 տոկոսով ավելի վարկեր, ընդ որում՝ ռեզիդենտներին ՀՀ դրամով տրամադրված վարկերն ավելացել են շուրջ 27.5 տոկոսով, իսկ արտարժույթով վարկերի ծավալն ավելացել է 16 տոկոսով:

Վարկերի կառուցվածքում մարտի դրությամբ մեծ տեսակարար կշիռ շարունակում են ունենալ սպառողական վարկերը՝ 28 տոկոս, ապա արդյունաբերության և առևտրի ոլորտները, իսկ ամենամեծ աճն է գրանցվել հիփոթեքային, սպառողական, շինարարության վարկերի գծով:

Գյուղոլորտում մարտի վերջին և առաջին երեք ամիսներին նկատվում է ակտիվություն.վարկերի աճը կազմել է 15-16 տոկոս, մինչդեռ վերջին 2-3 տարիներին զգալի աճ չէր գրանցվել, ավելին՝ 2016-2018 թթ. տրամադրված գյուղոլորտի վարկերի ծավալն ունեցել է նվազման միտում [5]:

Համավարակային պայմաններից ելնելով՝ կառավարությունը հանդես եկավ սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումներով, որոնցով նախատեսվում էին ֆինանսական ներարկումներ՝ ՀՆԱ-ի 2.29 տոկոսի կամ շուրջ 150 մլրդ դրամի չափով, որի կեսից ավելին արդեն տրամադրվել է 48 հազար 400 իրավաբանական և շուրջ 1.1 միլիոն ֆիզիկական անձանց [7]:

Այսպիսով՝ ճգնաժամերի հետևանքով տնտեսությունում որպես կանոն գոյանում է իրացվելիության դեֆիցիտ, որը կարող է վտանգել տնտեսավարող սուբյեկտների վճարունակությունը և հանգեցնել գործազրկության մակարդակի աճին: Հետևաբար՝ կառավարության առաջին քայլերը պետք է միտված լինեն տնտեսավարողների, հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների իրացվելիության պահանջարկի բավարարմանը: Այս մոտեցումը ճշմարիտ է նաև COVID-19 ճգնաժամի պարագայում, որը նախորդ ճգնաժամերից տարբերվում է իր աննախադեպ արագությամբ: Այսպես, եթե 2009 թ. ճգնաժամի դեպքում միջազգային ֆոնդային ինդեքսների անկումը տևել է 17 ամիս, ապա COVID-19-ի պարագայում անկման նույն խորությունը արձանագրվել է 2 ամսվա ընթացքում [8]: Սա նշանակում է, որ այս դեպքում կառավարության արձագանքը ևս պետք է լինի չափազանց արագ և թիրախավորված:

Գրականություն

1. Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ (ՀՀԳԱԱՄ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, խմբ. Կ. Սարգսյան, Երևան, 2016):
2. Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի. Տիգրանյան, Հ. Հովհաննիսյան, Երևան, Տնտեսագետ, 2011):
3. Asian Development Bank “Measuring the Contribution of Informal Sector to Total Economy in Armenia”. Unpublished manuscript, 2010.
4. Schneider, F., Kepler J. “Shadow Economies and Corruption All Over the World: New Estimates for 145 Countries. The Open Access, Open Assessment E-Journal, No 2007-9, July 24, 2007.
5. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AM
6. https://www.worldbank.org/en/country/armenia/overview
7. https://www.armstat.am/am/?nid=82&id=2271
8. https://www.armstat.am/file/article/poverty_2011a_2.pdf

Экономические влияние пандемии COVID-19 в Армении

Туманян Аревик
Факультет общественных наук,
«Общественное управление»,
руководитель магистерской диссертации:
к. э. н. Л. Авдалян

Резюме

Ключевые слова: *антикризисная программа, ВВП, товарооборот, туризм*

В конце декабря 2019 года в китайском городе Ухань был впервые обнаружен вирус, позже названный COVID-19, который быстро распространился не только по Китаю, но и по всему миру, нанеся серьезный ущерб мировой экономике.

Воздействия коронавируса на экономику стран мира характеризуются особенностями каждой страны. Для Армении она в большей степени характеризуется отраслевой структурой экономики страны, удельным весом отраслей в валовом внутреннем продукте и зависимостью от внешнего мира.

В данной статье рассматривается влияние пандемии на различные отрасли экономики Республики Армения, например, влияние на сельское хозяйство, туризм, торговый оборот и т.д.

The Economic Impact of the COVID-19 Pandemic in Armenia

Tumanyan Arevik
Faculty of Social Sciences,
"Public Management",
Academic Supervisor: L. Avdalyan
PhD in Economics

Summary

Key words: *anti-crisis program, GDP, trade circulation, tourism*

At the end of December 2019, the virus later named COVID-19 was first detected in the Chinese city of Wuhan, which quickly spread not only in China, but also throughout the world, causing serious damage to the global economy.

The impact of the coronavirus on the economies of different countries of the world is characterized by the specific features of each country. For Armenia, it is mostly characterized by the branch structure of the country's economy, by the specific weights of the sectors in the gross domestic product, and by the dependence on the outside world.

This article examines the impact of the pandemic on various branches of the economy of the Republic of Armenia, for example how it affects agriculture, tourism, trade circulation, etc.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ

EDUCATION MANAGEMENT

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում որակի ապահովման համակարգի ներդրման դժվարությունները

Ոսկանյան Թամարա

Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ. ասիստենտ Ն. Ներկարարյան

Հանգուցային բառեր. *ինստիտուցիոնալ հավատարմագրում, մասնագիտական կրթություն և ուսուցում, որակի ապահովում, կրթության որակ*

Նախաբան

Սույն հոդվածում փորձ է արված վերհանելու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի ներդրման դժվարությունների և այդ դժվարությունների հաղթահարման հնարավոր ճանապարհների ընտրությունը կրթության որակի ապահովման համատեքստում:

Հետևյալ սկզբունքներով առաջնորդվելն է տանում ճանապարհ՝ դեպի որակ.

- վստահություն,
- նորարարություն,
- հավասարություն,
- հաշվետվողականություն,
- փոխգործակցություն:

Կրթությունը, կապված լինելով անձի զարգացման և հետևաբար ինքնահիրացման պահանջմունքների հետ, որպես սոցիալական ինստիտուտ, միտված է բավարարելու անձի կրթական պահանջմունքները, որոնք սերտորեն կապված են ինչպես անձի բազային, այնպես էլ այլ սոցիալական պահանջմունքների հետ: Կրթական պահանջմունքի բավարարումը շահառուների շրջանում ձևավորում է ակնկալիքների համակարգ ՄԿՈՒ-ի գործունեության վերջնարդյունքի և գործընթացի նկատմամբ: Մյուս կողմից, ինչպես ցանկացած ինստիտուտի, այնպես էլ կրթական ինստիտուտի գործունեության վերաբերյալ շահառուներն ունեն որոշակի պատկերացումներ: Հենց այս պատկերացումների և ակնկալիքների հիման վրա էլ ձևավորում են շահառուների (այդ թվում՝ ուսանողների) գնահատականները և գոհունակությունը: Այսօր կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակն է:

Ուսումնական հաստատության մակարդակով կրթության որակի խնդրի լուծման հիմքը, որպես բազմաչափ, բարդ սոցիալական և մանկավարժական խնդիր, կրթական գործընթացի որակի համակարգի նախագծումն ու ներդրումն է և այդ ճանապարհին առաջացած դժվարությունների հաղթահարումը: Նման համակարգի նպատակն է միավորել և ինտեգրել կազմակերպչական, մեթոդական, գիտական, մարդկային և կառավարչական և այլ ջանքերն ու ռեսուրսները, ուսումնական հաստատության բոլոր կառույցների ընդգրկումը որակի մշակույթի ներդրման և կառավարման մեջ՝ հիմնված գիտական սկզբունքների և օրինաչափությունների վրա:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության որակի համակարգը մշակված կարգավորող և մեթոդական փաստաթղթերի մի շարք է, որը որոշում է բոլոր պաշտոնյաների, ուսուցիչների և ուսանողների աշխատանքի բովանդակությունը, տեխնոլոգիաները, մեթոդները և միջոցները կրթական գործընթացի որակի հետագա բարելավման համար [1, 142-148]:

Ուսումնական գործընթացի որակը մեծապես պայմանավորված է կրթության բովանդակությամբ, որը կապված է իրականացվող կրթական ծրագրերի որակի հետ: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ նույնիսկ նոր սերնդի չափանիշները բավականին պահպանողական են և հիմնված են ուսումնական ծրագրերի որակի և բովանդակության նվազագույն պահանջների վրա:

Քննարկվող խնդրի համատեքստում որակի ապահովումը որոշակի պայմանների ստեղծումն է և անհրաժեշտ ռեսուրսների հատկացումը որակի նպատակներին հասնելու համար: Դրանք հիմնականում ներառում են կրթական և մեթոդական, ֆինանսական աջակցություն, նյութական բազա, անձնակազմի կարողություններ, ուսանողների պատրաստակամություն, տեղեկատվական ծառայություններ և շատ ավելին:

Մեկ այլ շատ կարևոր խնդիր է քոլեջում որակի մշակույթ ապահովելը: Սա կարող է լինել մի իրավիճակ, երբ մասնագիտական քոլեջի բոլոր աշխատակիցները ունեն ընդհանուր տեսակետ կրթության որակի խնդրի վերաբերյալ և հավատարիմ են մնում այս հասկացության մեկ սահմանմանը. երբ բոլորը հասկանում են, թե ինչ է ուղղակիորեն իր համար նշանակում կրթության որակ և ինչպես հասնել բարձր որակի, երբ հայտնի է, թե ինչ ճանապարհներով է նրա միավորը գնում դեպի որակ, երբ հստակ պատկերացում կա, որ որակը կարելի է կառավարել, և դրա մեխանիզմները հայտնի են:

Կրթության որակի համակարգի բարելավման հիմնական ուղղու-

թյունները որոշելիս կարևոր է ելնել կրթության որակի օբյեկտների կրթական գործընթացի բոլոր կազմակերպիչների և մասնակիցների ընդհանուր ըմբռնումից: Հենց նրանց պայմանի մակարդակից է կախված քոլեջում կրթության որակը, և նրանք են նաև ուսումնական հաստատության կրթական գործունեության որակի երաշխավորը:

Միջին մասնագիտական քոլեջում կրթության որակի մասին կարելի է դատել նաև նրանով, թե ինչ պատասխաններ կարելի է ստանալ հետևյալ հարցերին. ո՞ւմ ենք դասավանդում, ի՞նչ ենք մենք սովորեցնում, ո՞վ է դասավանդում, ինչպե՞ս ենք մենք սովորեցնում, որո՞նք են ռեսուրսները, ո՞վ և ինչպես է ղեկավարում քոլեջը: Միևնույն ժամանակ, կրթության բարձր որակի շատ կարևոր բաղադրիչը հոգեբանական խնդիրն է. ո՞րն է ուսումնական գործընթացի մասնակիցների մոտիվացիան. ուսուցիչները ցանկանու՞մ են դասավանդել նոր ձևով, և արդյոք ուսանողները ցանկանում են սովորել նոր պայմաններում: Այս հարցին պետք է լինի միայն մեկ պատասխան՝ կրթության բարձր որակ ապահովելու համար կրթական գործընթացի հիմնական մասնակիցների՝ ուսուցիչների և ուսանողների մոտիվացիան պետք է լինի դրական և սոցիալապես նշանակալի [2, 145-148]:

Որակի ապահովման ճանապարհին առաջացող մարտահրավերների հաղթահարման եղանակներից մեկը հաստատությունների հավատարմագրումն է և որակի ապահովման համակարգերի ստեղծումն ու զարգացումը, քանի որ դրանք օգնում են համակարգային խնդիրները վերհանել և լուծել: Խնդիրների հաղթահարման համար առկա են բոլոր նախադրյալները՝ համապատասխան օրենսդրական կարգավորումների տեսքով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը թույլ է տալիս գնահատել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև տեսնել, թե արդյոք հաստատությունն իրականացնում է իր առաքելությունը, հետապնդում է շարունակական բարելավման քաղաքականություն և նպաստում է իրականացվող կրթական ծրագրերի զարգացմանը:

Ուսումնական հաստատության մակարդակով կրթության որակի խնդրի լուծման հիմքը, որպես բազմաչափ, բարդ սոցիալական և մանկավարժական խնդիր, կրթական գործընթացի որակի համակարգի նախագծումն ու ներդրումն է: Նման համակարգի նպատակն է միավորել և ինտեգրել կազմակերպչական, մեթոդական, գիտական, մարդկային և կառավարչական և այլ ջանքերն ու ռեսուրսները, ուսումնական հաստատության բոլոր կառույցների ընդգրկումը որակի կառավարման մեջ [4]:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում

որակի ապահովման համակարգի ներդրման դժվարությունների և այդ դժվարությունների հաղթահարման հնարավոր ճանապարհների բացահայտման նպատակով մեր կողմից իրականացվել են որակական և քանակական հետազոտություններ Լոռու մարզում գործող պետական քոլեջների աշխատակիցների, ուսանողների և գործատուների շրջանում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «կրթության որակ» հասկացության և որակի ապահովման համակարգի ներդրման շուրջ շահառուների շրջանում կա թյուրըմբռնում. կրթության քաղաքականություն մշակողները տալիս են կրթության որակի այլ սահմանում, ուսանողները՝ այլ, գործատուները՝ այլ: Ուսանողների կողմից կրթության որակի գնահատումը այլընտրանքային և նորարարական մեթոդ է ինչպես միջին մասնագիտական կրթության համակարգում կրթության որակի չափման, այնպես էլ կրթական բարեփոխումների իրականացման արդյունավետության գնահատման գործում: Քոլեջի դիտանկյունից այն կարող է ծառայել ինչպես կրթական վերջնարդյունքների իրականացումը չափելու գործիք, այնպես էլ սահմանված վերջնարդյունքներին հասնելու գործում առկա խնդիրների և դրանց կարգավորման հնարավոր եղանակների բացահայտման մեթոդ (հավելված 1): Միջին մասնագիտական կրթության համակարգում կրթության որակին առնչվող հիմնախնդիրների բացահայտման նպատակով մեր կողմից իրականցվել է որակական սոցիոլոգիական հետազոտություն Լոռու մարզում գործող պետական քոլեջներում սովորող ուսանողների շրջանում: Հետազոտության նպատակն է եղել՝ բացահայտել ուսանողների կրթական պահանջմունքների բավարարումը կրթության որակի ներդրման և ապահովման տեսանկյունից: Հետազոտությունը իրականացվել է ֆոկուս խմբային քննարկման և հարցազրույցի մեթոդների կիրառմամբ: Տեղեկատվության ամբողջականության ապահովման նպատակով հարցազրույցներ են իրականացվել նաև գործատուների և դասախոսների հետ: Մեր կողմից ուսանողների շրջանում իրականացված որակական հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները դժվարանում են սահմանել կրթության որակի ապահովման հիմնական բաղադրիչները և միջին մասնագիտական կրթության որակը անմիջականորեն կապում են «կրտսեր մասնագետ» հասկացության հետ՝ նշելով, որ որակյալ կարող է համարվել այն կրթությունը, որի արդյունքում քոլեջն ավարտում են՝ դառնալով որակյալ մասնագետներ:



Գծապատկեր 1.

Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն առավել հակված են բարձր գնահատել կրթության որակը, քան ցածր առաջադիմություն ունեցողները: Մեր կարծիքով՝ կրթության որակի գնահատման վրա մեծապես ազդում են ուսանողների արժեհամակարգը, փորձը և հասարակության շրջանում տարածված դիրքորոշումները կրթության գործընթացի, ստացված գիտելիքների կիրառելիության և աշխատաշուկայի վերաբերյալ: Կրթության որակի ներդրումը և գնահատման չափանիշները, որոնք ներկայացվում են ուսանողների կողմից, առավել ընդհարական բնույթ են կրում և հիմնականում ուսումնառության բուն գործընթացին անմիջականորեն չեն վերաբերում: Ուսանողների և գործատուների կարծիքով՝ քոլեջներում դասավանդվող գիտելիքներն ունեն տեսական բնույթ, բավարար չեն գործնական դասընթացները, որոնք կնպաստեն գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Գործատուները նշում են, որ առավել շատ շահագրգռված կլինեն համագործակցել քոլեջների հետ պրակտիկաների անցկացման հարցում, այն պարագայում, եթե վստահ լինեն, որ ուսանողները, մուտք գործելով կազմակերպություն, կնպաստեն և իրենց ստացած գիտելիքներն ինչ-որ չափով կներդնեն կազմակերպության գործունեության մեջ: Սակայն գործատուների գնահատմամբ ուսանողները խուսափում են հանձնարարված առաջադրանքը կատարելուց՝ այն հաճախ որակելով որպես «շահագործում»: Գործատուները որպես կրթության որակի չափանիշ են նշում աշ-

խատանքային պարտականությունների արդյունավետ իրականացման հմտությունների և գիտելիքների առկայությունը շրջանավարտների մոտ: Մասնավորապես նշում են, որ կրթության որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուսանողների մոտ ձևավորել պատրաստի ալգորիթմ չունեցող բարդ գործողություններ կատարելու ունակություն:

Իրականացրել ենք հարցում պայմանական հավատարմագրում ստացած քլեջում, որն առաջին անգամ էր անցել ինստիտուցիոնալ հավատարմագրման ճանապարհը, և հարցումների արդյունքում ստացանք հետևյալ պատկերը:

Հարցվող երկարամյա աշխատակիցների 30 %-ը կարևորում են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, սակայն որակի մշակույթի ներդրման համար բավարար փորձ ու գիտելիքներ են անհրաժեշտ, որը կարելի է լրացնել համապատասխան վերապատրաստումների միջոցով: Հարցվող երիտասարդ աշխատակիցների մոտ 25 %-ը գտնում էր, որ ՄԿՈՒ-ի անձնակազմը գաղափարապես պատրաստ չէր հավատարմագրման գործընթացին, քանի որ տրված ժամանակը բավարար չէր գործընթացին առավելապես պատրաստվելու համար, քոլեջների վարչական աշխատակիցների մոտ 45 %-ը գտնում էր, որ չկա պետության կողմից բավարար աջակցություն, քանի որ խնդիր կա նյութատեխնիկական բազայի համալրման, շենքային պայմանների բարելավման, աշխատավարձերի ցածր լինելու և այլ գործոնների, որոնք զգալիորեն նվազեցնում են գործընթացի առաջընթացի մոտիվացիան:



Գծապատկեր 2.

Քանի որ Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) իրականացնող հաստատությունների հիմնական առաքելությունն է բավարարել տեղական աշխատաշուկայի պահաջները՝ նպաստելով ՀՀ մարզերի հավասարաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա ՄԿՈՒ հաստա-

տությունների կողմից՝ մարզի/տարածաշրջանի համար անհրաժեշտ կարողություններով մարդկային ներուժի ձևավորմանն օժանդակելու համար խրախուսելի է ՄԿՈՒ-ների վերլուծությունների իրականացումը հետևյալ ուղղություններով.

- ՄԿՈՒ հաստատությանների շրջանավարտների զբաղվածության ապահովման կապակցությամբ մրցակից հաստատությունների հետ համեմատական վերլուծությունը,
- իրականացվող կրթական ծրագրերի զգալի մասի համապատասխանությունն ուսումնական հաստատության ոլորտային ուղղվածությանը,
- ՄԿՈՒ հաստատությունների կողմից ռազմավարական կառավարման իրականացումը՝ տարածաշրջանի գործատուների ներգրավմամբ,
- հաստատությունների ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը աշխատաշուկայի արդի պահանջներին,
- ՄԿՈՒ հաստատությունների դինամիկ զարգացման համար անհրաժեշտ ինքնավարության կիրառումը,
- ՄԿՈՒ հաստատությունների ընկալումը շահակիցների շրջանում [3]:

ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ շեշտադրումները հիմնականում ուղղված են հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների և մարզի/տարածաշրջանի տնտեսական հնարավորությունների և կարիքների փոխկապակցվածությունը խթանող մեխանիզմների ձևավորմանը՝ ներդնելով ոլորտային գործատուների հետ համատեղ ռազմավարական կառավարման հիմքեր, որոնց իրականացման արդյունավետությունը կվերլուծվի հաստատություններում գործող որակի ներքին ապահովման համակարգերի միջոցով.

- ՄԿՈՒ հաստատություններին ուղղորդել դեպի տեղական աշխատաշուկայի կարիքների բավարարումը՝ նպաստելով գործատուների հետ համատեղ ռազմավարական կառավարման իրականացմանը,
- հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների կրթական ծրագրերը համահնչեցնել մարզի/տարածաշրջանի կարիքներին և տնտեսական հնարավորություններին, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար խրախուսել ՄԿՈՒ հաստատությունների կողմից ոլորտային գործատուների

ռեսուրսային բազաների համագործակցային օգտագործումը՝ նպաստելով հաստատություններում ռեսուրսային ապահովվածության խնդրի լուծմանը և ուսանողների շրջանում գործնական հմտությունների ձևավորմանը,

- ուղղորդել ՄԿՈՒ հաստատություններին՝ շահադրդել գործատուներին՝ իրենց հետ համատեղ իրականացնելու սեփական կադրերի պլանավորում և պատրաստում՝ նպաստելով գործող ձեռնարկությունների կարճաժամկետ պահանջարկի, ինչպես նաև ապագա մարտահրավերների դիմակայմանը,
- նպաստել գործատու դասախոսների ներգրավվածության մեծացմանը,
- խթանել հաստատություններում վերլուծական տվյալների կուտակմանը և դրանց հիման վրա որոշումների կայացմանը:

Եզրակացություն

Ամփոփելով վերը նշվածը՝ մասնագիտական քոլեջների գործունեության ալգորիթմը կրթության որակի համակարգի բարելավման համար կարող է լինել հետևյալը. հիմնական գաղափարի հիմնավորումը բարձր արդյունավետ օգտակար աշխատանքի համար մոտիվացիայի պայմանների ստեղծումն է, անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, մասնագետների պրակտիկայի վրա հիմնված, սոցիալապես հարմարեցված ժամանակակից արդյունաբերական կյանքին վերապատրաստումը: Կրթության բովանդակության թարմացում և ուսանողների վերապատրաստման որակի մոնիտորինգի մեխանիզմների մշակում: Մարդկային ռեսուրսների հզորացում, քոլեջի նյութատեխնիկական բազայի զարգացում, սոցիալական գործընկերության համակարգի զարգացում:

Ուսումնական հաստատություններում կրթության որակի գնահատումը պետք է նպաստի կրթական գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը որպես ամբողջություն՝ աշխատաշուկայում յուրաքանչյուր բնագավառում բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետ պատրաստելու համար:

Շրջանավարտը պետք է ունենա մասնագիտական իրավասություն (տեսական գիտելիքների և գործնական գիտելիքների համադրություն, շրջանավարտի՝ պետական կրթական չափորոշիչներով սահմանված բոլոր տեսակի մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողություն) հաղորդակցման պատրաստակամություն, ներառյալ՝

ա) ռուսերեն գրական և գործնական գրավոր և բանավոր խոսքի իմացություն,
բ) համակարգչային սարքավորումներից, հեռահաղորդակցության ցանցերից օգտվելու կարողություն,
գ) հաղորդակցման էթիկայի և հոգեբանության իմացություն,
դ) ստեղծագործական թիմը ղեկավարելու հմտությունների տիրապետում, կատարվող աշխատանքի համար նախաձեռնություն և պատասխանատվություն վերցնելու կարողություն,
ե) մասնագիտական խնդիրները լուծելու ստեղծագործական մոտեցումների զարգացած կարողություն, ոչ ստանդարտ իրավիճակներում նավարկելու, խնդիրները, իրավիճակները, առաջադրանքները վերլուծելու և գործողությունների պլան մշակելու ունակություն,
զ) կայուն, գիտակից, դրական վերաբերմունք իրենց մասնագիտության նկատմամբ, շարունակական անձնական և մասնագիտական կատարելագործման ցանկություն:

Գրականություն

1. Курлаев Ю.А. Мониторинг как средство организационного обеспечения эффективности деятельности колледжа // Среднее профессиональное образование. 2010. № 3, с. 142-148.
2. Черецкая Н.В. Подходы к разработке критериев оценки деятельности колледжа // Среднее профессиональное образование. 2010. № 2, с. 145-148.
3. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ, ք. Երևան, 2018, /ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ռաակ մոտեցումները և ակնկալվող արդյունքները, 2018:
4. https://www.anqa.am

Հավելված 1

Հարցաթերթ

Հարգելի հարցվող

Նախապես շնորհակալ ենք հարցմանը մասնակցելու համար:

1. ՄԿՈՒ որակի ապահովման համակարգի ներդրումը կարևորո՞ւմ եք / - այո, - ոչ/
2. Հավատարմագրումը բարձրացնո՞ւմ է հաստատության մրցակցությունը / - այո, - ոչ/
3. Ձեզ տրամադրվե՞լ է հստակ տեղեկատվություն ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրման գործընթացի էության մասին / - այո, - ոչ /
4. Հավատարմագրման չափանիշների լրացման ժամանակ առաջացած խոչընդոտներին աջակցություն տրամադրվո՞ւմ էր ՈԱԱԿ-ի աշխատակիցների կողմից / - այո, - ոչ/
5. Քոլեջի աշխատակիցները գաղափարապես պատրա՞ստ էին հավատարմագրման գործընթացին /- այո, -ոչ, -մասամբ/
6. Հավատարմագրման գործընթացը ընկալե՞լի էր ուսանողության կողմից / - այո, -ոչ, -մասամբ/
7. Ներկայումս կարիք ունե՞ք հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ վերապատրաստման / - այո, -ոչ, -ցանկալի է/
8. Հավատարմագրման գործընթացը շարունակակա՞ն բնույթ է կրում, թե՞ մեկանգամյա գործընթաց է / - այո, -ոչ, -չգիտեմ/

Трудности внедрения системы обеспечения качества в среднем профессиональном образовательном учреждении

Восканян Тамара
Факультет общественных наук,
«Управление образованием»,
руководитель магистерской диссертации:
к.п.н., ассистент Н. Неркарарян

Резюме

Ключевые слова: *институциональная аккредитация, профессиональное образование и обучение, обеспечение качества, качество образования*

В работе представлен один из важнейших вопросов: трудности внедрения системы обеспечения качества в среднем профессиональном образовательном учреждении. Мы постарались выделить основные препятствия, с которыми сталкиваются средние профессиональные образовательные учреждения при внедрении системы обеспечения качества. Знакомясь с работой, станет понятно, каким может быть алгоритм деятельности профессиональных колледжей в части повышения системы качества образования.

Для эффективной реализации этого процесса первостепенное значение имеет создание мотивационных условий труда. Оценка качества образования в образовательных организациях должна способствовать развитию и совершенствованию образовательного процесса в целом с целью подготовки высококвалифицированного и конкурентоспособного специалиста в каждой сфере на рынке труда.

Difficulties in Implementing a Quality Assurance System in a Secondary Vocational Educational Institution

Voskanyan Tamara
Faculty of Social Sciences,
"Education Management",
Academic Supervisor: N. Nerkararyan
PhD in Pedagogy

Summary

Key words: *institutional accreditation, vocational education and training, quality assurance, quality of education*

The paper presents one of the most important issues: the difficulties of implementing a quality assurance system in a secondary vocational educational institution. We have tried to identify the main obstacles that secondary vocational educational institutions face when implementing a quality assurance system. Getting acquainted with the work, it will become clear that the algorithm of the activity of professional colleges can be in terms of improving the education quality system.

For the effective implementation of this process, the creation of motivation conditions for work is a priority. The assessment of the quality of education in educational institutions should contribute to the development and improvement of the educational process as a whole in order to train a highly qualified and competitive specialist in every field in the labor market.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Ասլանյան Նարինե
Բեսսելի հավասարումը և նրան բերվող հավասարումներ:
Բեսսելյան ֆունկցիաներ և նրանց կիրառությունները.....8

Խուդավերդյան Սեդա
Խառն արտադրյալի մի կիրառություն.....19

Ղազարյան Անահիտ
Պարամետրական հավասարումների լուծման մեթոդները
դպրոցական դասընթացում.....25

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Լիլիթ
Խաղերի և երգերի՝ որպես հետաքրքրությունը խթանող
գործիքների դերը օտար լեզվի դասավանդման ընթացքում.....35

Հակոբյան Մարիամ
Հեջավորումը որպես քաղաքավարությունը կարգավորող գործիք
հյուրանոցային և հյուրընկալության ծառայություններում 44

Մանուկյան Սյուզաննա
Անգլերենում և գերմաներենում խորհրդի և
թույլտվության իմաստ արտահայտող դեոնթիկ եղանակավորության
որոշ լեզվական առանձնահատկությունները 54

Նավոյան Կատրին
Հաճոյախոսական վարքագիծը մշակույթում.....65

Շահնազարյան Քրիստինե
Գեյմիֆիկացիայի կարևորությունը օտար լեզվի
դասավանդման գործընթացում 75

Շահվերդյան Մարիամ
Հաղորդակցական լեզվի ուսուցումը որպես այլընտրանքային ձև՝
բավարարելու 21-րդ դարին հարիր կրթության պահանջները 83

Սաքանյան Լուսինե
Հապավումների օգտագործումը ոչ պաշտոնական
օնլայն նամակագրություններում 92

Սոսյան Հասմիկ
Պրոզոդիկ ռիթմի տարատեսակները անգլերենում.....101

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարոյան Էլիզա
Ի. Ա. Բունինի ստեղծագործություններում
աստղանունների կիրառությունը 110

Բեգլարյան Էլլա
Ոչ վերբալ հաղորդակցումը դասավանդողի գործունեության մեջ.....119

Եղիկյան Գոհար
Գենդերային կարծրատիպերը ռուսական դարձվածաբանության մեջ...130

Թումազյան Գայանե
«Ձմեռ» խոսույթի լեզվական աշխարհապատկերումը ռուսերենում
լեզվամշակութաբանական տեսանկյունից.....139

Կոստանդյան Արմինե
Լեռնային հանքանյութերի և հանքավայրերի տիրակալների
կերպարները ռուս բանահյուսության մեջ 150

Սարգսյան Սեդա
Պորցելյացիան որպես արտահայտիչ շարահյուսության միջոց
Բլոկի ստեղծագործություններում.....159

Սարուխանյան Մարիամ
Ռուսական առածների կառուցվածքային և
իմաստային առանձնահատկությունները 168

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ջիլավյան Գայանե
Ամերիկյան պետության «հիմնադիր-հայր» Ջոն Ադամս 180

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Արմինե
Ամուսնական կոնֆլիկտների առաջացման
հոգեբանական գործոնների ուսումնասիրություն.....191

Ասլիկյան Անահիտ
Նպատակադրման հիմնախնդիրը պատանիների մոտ
հետպատերազմյան շրջանում 197

Արամյան Ջուլիա
Ուսանողների ինքնիրացման հոգեբանական
առանձնահատկությունները 206

Կոստանդյան Ասյա
Պարային ոճի և անհատական առանձնահատկությունների կապը 214

Ղևոնդյան Մարիամ
Հեքիաթաթերապիայի կիրառման արդյունավետությունը
առաջին դասարանցու ուսումնական գործընթացում 225

Շահվերդյան Մարտուն
Մտավոր զարգացման հապաղում ունեցող
երեխաների մայրերի քոփինգ ռազմավարությունները.....233

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թումանյան Արևիկ
COVID-19-ի համավարակի տնտեսական
ազդեցությունը Հայաստանում.....240

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ոսկանյան Թամարա
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում
որակի ապահովման համակարգի ներդրման դժվարությունները 248

СОДЕРЖАНИЕ

МАТЕМАТИКА

Асланян Нарине
Уравнение Бесселя и связанные с ним уравнения.
Функции Бесселя и их приложения 8

Худавердян Седа
Одно приложение смешанного произведения.....19

Казарян Анаит
Методы решения параметрических уравнений в школьном курсе.....25

АНГЛИЙСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

Абовян Лилит
Роль интересообразующих игр и песен
в процессе обучения иностранного языка 35

Акопян Мариам
Хеджирование как средство регулирования вежливости
в гостиничных услугах 44

Манукян Сюзанна
Некоторые языковые особенности деонтической модальности,
выражающих предложение и разрешение
в английском и немецком языках 54

Навоян Катрин
Комплиментарное поведение в разных культурах 65

Шахназарян Кристине
Важность геймификации в преподавании иностранного языка.....75

Шахвердян Мариам
Коммуникативное изучение языка как альтернативный способ
соответствия требованиям образования 21 века.....83

Саканян Лусине
Использование сокращений в неофициальных онлайн-переписках.....92

Сосян Асмик
Просодический ритм в региональных разновидностях
английского языка.....101

РУССКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

Бароян Элиза
Применение космонимов в произведениях И. Бунина.....110

Бегларян Элла
Невербальная коммуникация в деятельности преподавателя 119

Егикян Гоар
Гендерные стереотипы в русской фразеологии 130

Тумазян Гаяне
Лингвокультурологический аспект концепта «зима»
в русской языковой картине мира.....139

Костандян Армине
Образы хозяев горных пород и рудников в русском фольклоре 150

Саргсян Седа
Парцелляция как средство экспрессивного синтаксиса
в творчестве Блока.....159

Саруханян Мариам
Структурно-семантические особенности русских пословиц.....168

ИСТОРИЯ

Джилавян Гаяне
«Отец-основатель» американского государства Джон Адамс 180

ПСИХОЛОГИЯ ЛИЧНОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ

Абовян Армине
Изучение психологических факторов супружеских конфликтов.....191

Асликян Анаит
Объективная проблема молодежи в послевоенный период 197

Арамян Джулия
Психологические особенности самореализации студентов.....206

Костандян Ася
Связь танцевального стиля с индивидуальными особенностями 214

Гевондян Мариам
Эффективность применения сказкотерапии
в учебной деятельности первоклассника.....225

Мартун Шахвердян
Копинг-стратегии матерей детей с умственной отсталостью.....233

ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

Туманян Аревик
Экономические влияние пандемии COVID-19 в Армении.....240

УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ

Тамара Восканян
Трудности внедрения системы обеспечения качества
в среднем профессиональном образовательном учреждении.....248

CONTENTS

MATHEMATICS

Aslanyan Narine
Bessel Equation and Related Equations.
Bessel Functions and Their Applications 8

Khudaverdyan Seda
An Application of the Mixed Product.....19

Ghazaryan Anahit
Methods of Solving Parametric Equations in the School Course.....25

ENGLISH LANGUAGE AND LITERATURE

Abovyan Lilit
Games and Songs as Motivating Tools while Teaching
a Foreign Language 35

Hakobyan Mariam
Hedges as Politeness-Regulating Devices in Hotel&Hospitality Services 44

Manukyan Syuzanna
On Some Linguistic Characteristics of Deontic Modality with Meanings of
Advisability and Permission in English and German 54

Navoyan Katrin
Complimenting Behavior across Cultures.....65

Shahnazaryan Christine
The Importance of Gamification in Teaching a Foreign Language 75

Shahverdyan Mariam
Communicative Language Teaching as an Alternative Way
to Meet the Demands of the 21st Century 83

Sakanyan Lusine
The Use of Abbreviations in Informal Online Conversations 92

Sosyan Hasmik
Prosodic Rhythm in Regional Varieties of the English Language 101

Baroyan Eliza
Application of Cosmonyms in the Works of I. Bunin 110

Beglaryan Ella
The Non-Verbal Communication in Teacher's Activity 119

Gohar Yeghikyan
Gender Stereotypes in Russian Phraseology 130

Tumazyan Gayane
Linguoculturological Aspect of the Concept of "Winter"
in the Russian Language Picture of the World 139

Kostandyan Armine
Characters of Mountain Mineral and Rock Lords in Russian Folklore 150

Sargsyan Seda
Parcellation as a means of expressive syntax in the work of Blok 159

Sarukhanyan Mariam
The Structural and Semantic Features of the Russian Proverbs 168

HISTORY

Jilavyan Gayane
The "Founding Father" of the American State John Adams 180

PERSONALITY PSYCHOLOGY AND COUNSELING PSYCHOLOGY

Abovyan Armine
The Study of Psychological Factors of Marital Conflicts 191

Aslikyan Anahit
The Objective Problem of Young People in the Post-War Period 197

Aramyan Julia
Psychological Features of Students' Self-Realization 206

Kostandyan Asya
The Invisible Link between Dance Style and Individual Characteristics.....214

Ghevondyan Mariam
The Effectiveness of Using Fairy Tale Therapy
in the Educational Process of a First-Grader 225

Martun Shahverdian
Coping Strategies of Mothers of Children with Mental Retardation 233

PUBLIC MANAGEMENT

Tumanyan Arevik
The Economic Impact of the COVID-19 Pandemic in Armenia.....240

EDUCATION MANAGEMENT

Tamara Voskanyan
Difficulties in Implementing a Quality Assurance System
in a Secondary Vocational Educational Institution.....248

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

1

ՎԱՆԱՁՈՐ
2023

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

МАГИСТР

1

ВАНАДЗОР
2023

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TUMANYAN

MASTER STUDENT

1

VANADZOR
2023

Լեզվական խմբագիրներ՝ *Վալերի Փիլոյան, Զարա Ալեքյան*
Համակարգչային ձևավորումը՝ *Աշխեն Գալստյանի*

Языковые редакторы: *Валерий Пилоян, Зара Алекян*
Компьютерное оформление: *Ашхен Галстян*

Linguistic Editors: *Valeri Piloyan, Zara Alekyan*
Computer Design: *by Ashkhen Galstyan*